

Օսկելյան

ՏԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԵՐԵՎԱՆ
2009

Գիտական խմբագիր՝ իրավագիտության
թեկնածու, դոցենտ՝ Գառնիկ ՍՈՒՔԻԱՅԱՆ
Խմբագիր՝ Ռադեմիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Օսիկյան Արթուր

Հարկային իրավունք: Ուսումնական ձեռնարկ.-Եր.:
Իրավունք, 2008.-156 էջ:

Ուսումնական այս ձեռնարկն առաջին փորձու է, որտեղ հարկային և բյուջետային օրենսդրության առանձնահատկությունների հիման վրա հստակեցված է հարկաբյուջետային քաղաքականության էությունը, շուկայական հարաբերություններին անցման շրջանում և ընդգծված է պետական վարչարարության անհրաժեշտությունը, որն էապես նպաստում է «ստվերի», օրինախախտումների և հովանավորչության վերացմանը:

Հարկային օրենսդրությամբ սահմանված, պատժի և այլ ներգործության միջոցները կիրառելիս, վերջիններիս արդյունավետության բարձրացման նպատակով առանձնացված են հարկային գործունեության ոլորտում պատասխանատվության այնպիսի ծերի կիրառումը, ինչպիսիք են հարկային, վարչական, քրեական և անուղղակի պատասխանատվության ձևերը, որոնք նորույթ են իրավունքի տեսության մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ	4
-----------------	---

ԳԼՈՒԽ 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՐՁԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ, ԴՐԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	
§ 1. ՀՀ տնտեսական քաղաքականության հարկաբյուջետային առանձնահատկությունները.....	8
§ 2. Հարկը որպես պետության հիմնական հատկանիշ.....	35

ԳԼՈՒԽ 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ	
---	--

§ 1. Հարկային քաղաքականությունը և օրենսդրության ձևավորման տնտեսական հիմքերը	42
§ 2. ՀՀ հարկային քաղաքականության ձևավորման իրավական հիմքերը.....	48
§ 3. Հարկային համակարգի և օրենսդրության իրավական առանձնահատկությունները ՀՀ-ում.....	59

ԳԼՈՒԽ 3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏՈՒՈՒ ՀԱՄԱՐ	
---	--

§ 1. Հարկային իրավախախտման հասկացությունը և առանձնահատկությունները.....	72
§ 2. Հարկային պատասխանատվության հասկացությունը, առանձնահատկությունները և համակարգը.....	94
§ 3. Վարչական պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտումների համար.....	125
§ 4. Հարկային օրենսդրության խախտումների քրեաիրավական պատասխանատվությունը.....	135
§ 5. Հարկային իրավախախտումների համար անուղղակի պատասխանատվությունը.....	143

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ	152
---	-----

ՅԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Յարկային իրավունքը ֆինանսական իրավունքի ենթաճյուղ է, որը դասավանդվում է ինչպես իրավաբանական, այնպես էլ տնտեսագիտական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Յարկային իրավունքի՝ որպես ենթաճյուղի հասկացության, նրա կարգավորման առարկայի և այդ ճյուղի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների էության, բովանդակության, իրավական առանձնահատկությունների, ինչպես նաև իրավունքի համակարգում միջնուղային բնույթի համալիր իրավական հարաբերությունների էությունը անսխալ արժեքավորելու համար ուսանողներին կարող է օգնել «Յարկային իրավունք» առարկայի մայրենի լեզվով շարադրված սույն ուսումնական ծերնարկը:

Մյուս կողմից՝ հարկային իրավունքի դասընթացը սերտորեն առնչվում է տնտեսագիտության ճյուղերի հետ, ինչպիսիք են, օրինակ, «Ֆինանսները», «Մաքսային գործը», «Պետական բյուջեն» և այլն:

Չեռնարկում հնարավորության սահմաններում արտացոլվել են նաև արդի տնտեսագիտության այդ ճյուղերի նվաճումները, ինչը ուսանողներին հնարավորություն կընձեռի հարկային իրավական նոնկրետ ինստիտուտների գործնական հետազոտության հիման վրա կողմնորոշվելու քննարկվող երևույթների տնտեսական բովանդակության առանցքային հարցերում և ըմբռնելու տնտեսական հարաբերությունների վերնաշենքային իրավական հարաբերությունների գործընթացը:

ՀՀ կառավարության հարկային քաղաքականությունը նպատակամղված է իրավական գիտությունների ենթաճյուղերի դիմանիկ առաջադիմության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, առավել հեռանկարային ուղղություններում կադրերի, նյութական ու ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացմանը, որոնք կոչված են արագացնելու տնտեսական ու սոցիալական նախատեսված նպատակների իրականացումը, հասարակու-

թյան հոգեսոր զարգացումը, ապահովելու երկրի հուսալի պաշտպանությունը:

Այսօր, երբ համրապետության սոցիալ-տնտեսական կյանքում արմատավորվում են շուկայական հարաբերությունները, երբ դրվում է գիտության անմիջական արտադրողական ուժի վերածվելու խնդիրը, հարկային հարաբերությունների ուսումնասիրության և հասարակության կարիքների համար դրանց օգտագործելու գործում բարձրանում է «հարկային իրավունքի», որպես ենթաճյուղի դեռը, որի ուսումնասիրության առարկան հասարակության կարգավորման կարևոր ոլորտներից է՝ պետական բյուջեի եկամտային մասի համալրումը, երկորի տնտեսական ինքնիշխանության և ազգային անվտանգության ապահովումը:

«Յարկային իրավունք» առարկայի ներկա ուսումնական ծերնարկում արտացոլված սկզբունքների, խնդիրների ու նպատակների ուսումնասիրությունը, կարծում ենք, ուսանողներին կզինի անհրաժեշտ գիտելիքներով՝ ըմբռնել անկախ զարգացման ուղի բռնած ինքնիշխան ՀՀ հարկային քաղաքականության էությունը հարկային համակարգի և հարկային օրենսդրության ձևավորման բնագավառում, կնպաստի ուսանողների կողմից ՀՀ հարկային համակարգի և օրենսդրության առանձնահատկությունների ճիշտ ընկալմանը, ինչը կօգնի նրանց իրենց գործնական աշխատանքում հարկային օրենսդրության դրույթները անշեղ իրականացնելու համար:

Յարկային իրավունքի ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքների ընթացքում ծեռք բերած գիտելիքները կնպաստեն ուսանողներին արագ կողմնորոշվելու հարկային օրենսդրության աղբյուրների բարդ համակարգում և ճիշտ կիրառելու այդ ակտերի պահանջները տնտեսական կյանքի այս կամ այն ոլորտում հարկային իրավունքների և պարտավորությունների կատարումը կամ դրանց հետ կապվող հարկային վեճերը քննարկելիս:

«Յարկային իրավունք» առարկայի ուսումնական ծերնարկում հիշատակվող հարկային իրավական ինստիտուտները վերլուծե-

լիս անհրաժեշտություն կառաջանա նաև ծանոթանալու հարկային և ֆինանսական բնույթի որոշ փաստաթղթերի ձևերի հետ, որոնք հիմնականում վերաբերում են պետական բյուջե մուտքագրվող առանձին հարկատեսակներին, դրանց գանձման կարգին, դրույքներին, հաշվետվությունների ներկայացմանը, ինչպես նաև գանձման հայտարարագրմանը, հարաբերություններում առաջացած բողոքների քննարկման կարգին:

Այդպիսի փաստաթղթերի հետ գործնական ծանոթությունը կարող է նպաստել հետագայում հարկային, ինչպես նաև դատաքննչական մարմիններում աշխատանքի անցած ուսանողներին արագ և ճիշտ կողմորոշվելու հարկային, տնտեսական, ֆինանսական բնույթի հարաբերությունները սահմանազատելիս, ինչպես նաև այդ բնույթի իրավախախտումների նկատմամբ պատասխանատվություն կիրառելիս:

Ուսումնական ձեռնարկի շարադրման հիմքում դրված են արտասահմանյան երկրներում դասավանդվող հարկային իրավունքի գործող պետական ծրագրերը, հարկային իրավունքի վերաբերյալ օրենսդրական ակտերի ժողովածուները, ինչպես նաև արտերկրներում հրատարակված հարկային իրավունքի դասագրքը:

«Հարկային իրավունք» առարկայի ուսումնական ձեռնարկը նպատակ է հետապնդում ուսանողներին կողմնորոշելու հարկային իրավունքի՝ որպես հանրային իրավունքի ենթաճյուղի ուսումնասիրության առարկայի առանձնահատկությունների հարցում: Դասընթացի հիմնական խնդիրներից է՝ օգնել ուսանողներին, որպեսզի ճիշտ ընկալվեն և լուսաբանվեն տնտեսական, հարկային և մաքսային օրենքների ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական ակտերի առանձնահատկությունները, իրավական ակտեր, որոնցով պայմանավորված են հանրապետության հարկաբյուջետային գործունեությունը, ապրանքադրամական հարաբերությունների էռելյունը, պետական բյուջեն, որոնց արտահայտման ձևերն են փողը, ֆինանսները և վարկը:

Ուսումնական ձեռնարկը կօգնի ուսանողներին վերլուծել ՀՀ և

նրա հարկային մարմինների ինչպես ներտնտեսական, այնպես էլ արտաքին տնտեսական գործընթացում տնտեսական իշխանության կազմակերպման ձևերը և մեթոդները, մաքսային մարմինների արտաքին առևտրային գործընթացում ծավալվող հարկային հարաբերությունների առանձնահատկությունները, լուսաբանել այդ հարաբերությունները կարգավորող հարկային իրավական նորմերի բովանդակությունը, ուսումնասիրել հարկային գործունեությանը բնորոշ հսկողության և վերահսկողության գործառույթները, որոնք իրենց դրսնորումն են ստանում հարկային իրավական ցանկացած հնստիտուտի նորմերի կիրառման ընթացքում:

Ելնելով հարկային իրավունքի՝ որպես ենթաճյուղի կարգավորման առարկայի առանձնահատկություններից՝ քննարկման են ներկայացվում միայն էական նշանակություն ունեցող իրավական ինստիտուտները: Իհարկե, բոլոր դեպքերում նման ընտրության և ընդհանրացումների հիմքում ընկած է իրավական կարգավորման առարկայի ընդհանրությունը, որը դուրս է տնտեսագիտական վերլուծություններից:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՐՁԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՌ, ԴՐԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐՎԱԿԱՆ ԿՎՐԳՎՈՐՈՒՄԸ

§1. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԿՂԱՔՎԿԱՆՈՒԹՅՎԱՆ ՀՎՐԿՎԲՅՈՒՁԵՏՎՅԻՆ ԿՈՎՆԱՆՎՀՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսության շուկայական հարաբերությունների օրինաչափություններով զարգանալու առավելությունները աշխարհի երկրների գերակշիռ մասում գործնականում ապացուցված է:

Շուկայական տնտեսաձևին անցումը միշտ էլ ուղեկցվում է բացասական այնպիսի հետևանքներով, ինչպիսիք են տնտեսության աճի կրծատումը, գների աճը, փողի արժեգրկումը, գործազրկության ավելացումը, հարստության բներացումը, բնակչության աղքատացումը և այլն: Թվարկված երևույթները այսօր առկա են նաև ՀՀ-ում, ինչի հիմնական պատճառը այն սխալներն են, որոնք թույլ են տրվել թերևս տնտեսական վերափոխումների ընթացքում:

Դրանցից առաջինը պետության տնտեսական դերի և դրա միջոցով պետության տնտեսական հսկողության բացակայությունն է արտադրության ապապետականացման և ապապետականացումից հետո իրականացվող տնտեսական գործունեության նկատմամբ: Շուկայական տնտեսաձևի գոյության ելակետային պայմանը ապապետականացման միջոցով սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված տնտեսության ստեղծումն է, որի նպատակն է ձևավորել և ընդլայնել պետական եկամուտները, ապահովել բնակչության բարեկեցության բարձրացում: Յայաստանի համար պետական եկամուտների ձևավորումը պետք է համարել օրինաչափ երևույթ: Եթե այս տրամաբանությամբ ենք քննարկում ՀՀ-ում իրականացված ապապետականացումը, ապապետականացված կազմակերպությունների գործունեությունը, ապա կարող ենք ասել, որ դրանք շատ դեպքերում

իրենց բուն նպատակին չեն ծառայում: Դա այն պատճառով, որ ապապետականացված կազմակերպությունների գերակշիռ մասը չի գործում, նրանցում եղած մեքենասարքավորումների հիմնական մասը վաճառված է, արտադրական շենքերը մատնված են դատարկության, վերածված են պահեստային տարածությունների և այլն: Նման իրավիճակը օրենսդրական կարգավորում չունի այն պատճառաբնությամբ, որ դրանք մասնավոր սեփականություն են, միջամտությունը կդիտվի նաև սեփականության իրավունքի ու ազատության սահմանափակում: Պետք է նկատել, որ այս բացը վերացնելու նպատակով հիմնականում 2001թ.-ից սկսած ապապետականացման պայմանագրի մեջ նշվում են նաև ներդրումների, գործունեության պրոֆիլի պահպանության, աշխատատեղերի ավելացման պարտադիր պայմաններ, որոնց խախտումը կարող է հանգեցնել պայմանագրի լուծման:

Յայտնի է, որ բացարձակ իրավունք և բացարձակ ազատություն լինել չի կարող, երկուսի բացարձակ տիրապետության պայմաններում էլ կտիրի քառ: Այդ իմաստով, ապապետականացված կազմակերպությունները հետագայում չգործելու դեպքում, պետությունը կարող է կիրառել լծակներ, որոնց օգնությամբ կսահմանափակի մեքենասարքավորումների վաճառքը, առժամանակ կկանխի դրանց վերամասնագիտացումը և կշահագրգուի ապապետականացումից հետո դրանց տնտեսական գործունեության շարունակումը: Յակառակ պարագայում կշարունակվի անգործությունը, և ապապետականացման նպատակը՝ տնտեսական աճն ու բնակչության բարեկեցության բարձրացումը, կմնա անկատար, որը իրավունքի ավելի մեծ խախտում է, քան պետության գործադրած տնտեսական սանկցիան: Դա կարելի էր իրականացնել ապապետականացման մասին ընդունված օրենքով, սահմանելով, որ եթե ապապետականացումից հետո կազմակերպությունը չի գործում, ապա սեփականատերերը պարտավոր են վճարել բարձրացված դրույքաչափերով հարկեր:

Խնդիրը կարող էր լուծվել, եթե ՀՀ-ում ընդունված լիներ օրենք ազգայնացման մասին: Խոսքը համատարած ազգայնացման մասին չէ, այլ այն ազգայնացման, որը գոյություն ունի բաղաքակիրք երկրներում, և որը տնտեսական միջոցառում է՝ ուղղված պետական եկամուտների կայունության ապահովմանը, ինչը, իր հերթին, կնպաստեր մասնավոր արտադրությունը ավելի լարված ու գործունեության արդյունավետ վիճակում պահելու համար: Բացի այդ, ազգայնաց-

ման մասին օրենքի ընդունումը յուրաքանչյուր երկրի, այդ թվում նաև Հայաստանի համար անհրաժեշտ է ռազմավարական և պաշտպանական նկատառումներով:

Դիշյալ տնտեսական միջոցառումները կապահովեն պետության տնտեսական հսկողության գործառույթը տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ՝ առանց ներտնտեսական գործերին միջամտելու, ինչը մի տնտեսաձևից մյուսին անցնելու ընթացքում խիստ անհրաժեշտ է: Բացարձակ առումով ազատ շուկայական հարաբերություններ չկան և չեն կարող լինել ոչ մի երկրում. ամենուր պետությունը այս կամ այն չափով վերահսկում, կարգավորում է այդ հարաբերությունները, առավել ևս՝ անցնան շրջանում:

ՀՅ պետական եկամուտների ստեղծման և ընդլայնման երկրորդ կարևոր խնդիրը ներդրումային քաղաքականության մշակումն է՝ իր հնարավոր աղբյուրներով՝ որպես ինքնուրույն ծրագիր:

Ներդրումային ծրագիրը, բոլոր ծրագրերից առաջ, պետք է ունենա իիմնավորում, կոնկրետ ֆինանսավորման աղբյուր և իրականացվի պետական խիստ վերահսկողության ներքո: Ներդրումային ծրագրի մեջ, որպես առաջնային, պետք է առանձնացվեն տնտեսության այն բնագավառները, որոնց զարգացման համար կան ռեսուրսային բավարար պայմաններ: Հայաստանի համար դա կարող է լինել տեքստիլ և կոշիկի արտադրությունը, կենցաղային իրերի և նյութերի թողարկումը, ռադիոէլեկտրոնիկան, սարքաշինությունը, շինանյութերի և շինասարքերի, հանքային ջրերի արտադրությունը, բոլոր տեսակի մրգերի և դրանց բազայի վրա լավագույն մրգահյութերի թողարկումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արտադրանքի և ծառանյութերի ներդրումը, գինու և կոնյակի, բենտոնիտների, գումավոր մետաղների արտադրությունը, մտավոր ներուժի պատրաստումը, զբոսաշրջության զարգացումը և այլն: Դրանք տնտեսության այն ճյուղերն են, որոնց բավարար զարգացման դեպքում ազատ կարող ենք նույն գործել միջազգային շուկա և ունենալ որոշակի տեղ:

Ներդրումային ծրագրի ֆինանսավորման համար որպես իիմնական աղբյուր պետք է դիտել երկրի ներքին ռեսուրսները և դրանց հավաքագրումը՝ մասնավոր կապիտալը, վարկային միջոցները, տարբեր արժեթղթերի վաճառքից ծեավորվող, ինչպես նաև պետական բյուջեի միջոցները: Իհարկե, իիմնական շեշտը պետք է դնել մասնավոր կապիտալի, վարկային և արժեթղթերի վաճառքից ծեավորվող

միջոցների վրա: Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՅ-ում վարկային միջոցները բավականին թանկ են և ծեռներեցության գարգացմանը չնպաստող, խնդիր, որի կարգավորման գործում չափազանց մեծ է Կենտրոնական բանկի և նրա վարած դրամավարկային քաղաքականության դերը: Կարծում ենք՝ 20% և ավելի տարեկան տոկոսադրույթով տրամադրով վարկը դժվար թե երկարատև ներդրումային կապիտալի ծեավորման աղբյուր դառնա, և, ի շահ Հայաստանի պետական եկամուտների զարգացման, այդ տոկոսադրույթը կարգավորման անհրաժեշտություն ունի:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի կայացել նաև արժեթղթերի շուկան՝ որպես ներդրումային կապիտալի ծեավորման կարևոր աղբյուր: Խոսքը հատկապես վերաբերում է արժեթղթերի երկրորդային շուկային, որը դեռևս իեռու է բավարար լինելուց:

Պետական եկամուտների ընդլայնման աղբյուր պետք է համարել արտասահմանյան կապիտալը, որը իրացվում է ինչպես մասնավոր ներդրումների, այնպես էլ վարկերի ծեով: Պաշտոնական տվյալներով Հայաստանի արտաքին պարտքը 2007թ. 1,448.9 մլրդ ԱՄՆ դոլարի էր իր համար:՝¹ Պարտքով վերցրած միջոցները առաջին հերթին պետք է դառնան ներդրումային կապիտալ, որին ՀՅ-ում մինչև այսօր լուրջ ուշադրություն չի դարձվել: Մի կողմից՝ ծգություն ենք պետական եկամուտները ընդլայնել, մյուս կողմից՝ պարտքով վերցրած միջոցները այդ նպատակով չափազանց քիչ ենք օգտագործում:

Անցումային տնտեսության համար միջազգային վարկերն առաջին հերթին անհրաժեշտ են կառուցվածքային բարեփոխումների, բյուջեի պակասուրդը ծածկելու և այլ նպատակներով: Անցումային տնտեսության համար առավել կարևոր է ներդրումային քաղաքականությունը, որը լուծում է այնպիսի էական խնդիրներ, ինչպիսիք են անցումային տնտեսության կայունացումը, բնակչության պահանջմունքների բավարարումը, աշխատատեղերի, արտաքին պարտքի սպասարկման համար վերաբերական բազայի ստեղծումը, արտագաղթի զայումը և այլն: Կարծում ենք՝ միջազգային վարկերի առաջարկ ստացված գումարի գումե կեսը պետք է ներդրվեր նյութական արտադրության ոլորտում: Եթե այդ գումարից մեկական միլիոն դոլար տրամադրվեր պետական կազմակերպություններին, ապա այ-

¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության պետական պարտքը (տարեկան հաշվետվություն-2007), Ե., 2008, էջ 2:

սոր Հայստանի Հանրապետությունը կունենար ժամանակակից տեխնիկայով ու տեխնոլոգիայով վերազինված շուրջ 500 առևտրային կազմակերպություններ: Այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը, միջին հաշվով, կունենար 400 աշխատատեղ:

ՀՀ-ում շուկայական տնտեսության ծեսավորումը և պետական եկամուտների ծավալը կապված են հարկային քաղաքականության հետ: Այսօր Հայստանում մեծ բանավեճի առարկա է դարձել այն հարցը, թե ինչպիսին պետք է լինի հարկային քաղաքականությունը՝ ֆիսկալ, թե՝ խրախուսող, կամ՝ հարկային համակարգն ունի՞ խրախուսման գործառույթ, թե՝ ոչ: Ֆիսկալ հարկային քաղաքականությունը իրավիճակից բխող երևույթ է, թույլ տնտեսության և աղքատ բյուջեի հետևանք: Այդպիսի տնտեսություններում պետությունը կարող է վարել հարկային ֆիսկալ քաղաքականություն: Փորձենք այդ քաղաքականությունը դիտարկել դեռևս չծեսավորված տնտեսության, չգործող արտադրության և սոցիալական ծանր պայմաններում գտնվող բնակչության՝ հարկատուների տեսանկյունից:

Այսօր կիրառվող հարկային ֆիսկալ քաղաքականությամբ մենք թույլ չենք տալիս որպեսզի ծեռներեցությունը զարգանա Հայստանի Հանրապետությունում: Թվարկենք միայն հարկատեսակներն իրենց դրույքաչափերով, և ամեն ինչ պարզ կդառնա. ԱԱՀ՝ 20% (լրիվ շրջանառության մեջ՝ 16,67%), ակցիզային հարկ՝ 20-200%, մաքսավճար՝ 0.12-10%, շահութահարկ՝ 15-25%, գույքահարկ, եթե ծեռներեցը գնում է որևէ բան առանց փաստաթղթերի, գանձվում է 15% եկամտահարկ, հատկացում կատարվում կենսաթոշակային հիմնադրամին և այլն: Կարծում ենք՝ նման հարկային ֆիսկալ բեռի ծանրության տակ ծեռներեցությունը ակտիվ զարգանալ չի կարող: Այդ պատճառով հարկային քաղաքականությունը, հատկապես անցումային շրջան ապրող տնտեսության մեջ, պետք է լինի ծեռներեցությունը խրախուսող և խթանող, իհարկե, չկորցնելով տնտեսական նույն սուբյեկտների համար «ծանրության» հավասարությունը: Այդպիսի հարկային քաղաքականությունը ներքին մրցակցություն է առաջացնում նաև տնտեսության մեջ և ինչ-որ չափով օգնում է ռեսուրսների հավասարաչափ տեղաբաշխմանը:

Որպեսզի հանգվենք վերը ասվածում, դիտարկենք Հայստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային մասը 2008թ. յոթ ամիսների կտրվածքով: Եկամուտների գերակշռող մասը ծեսավորվում է անուղղակի հարկերից. ԱԱՀ՝ 60.925,3 մլրդ և ակցիզային

հարկ՝ 7,349.2 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ շահութահարկի տեսակարար կշիռը բյուջեի եկամուտների մեջ համեմատաբար նվազ է, ինչը նույնական վկայում է ֆիսկալ հարկային քաղաքականության՝ գործարությանը չխթանելու մասին:

Գործարարության զարգացմանն արգելակում է նաև այն, որ ԱԱՀ-ը գործարարներից գանձվում է ապրանքները հանրապետություն մուտք գործելու պահին, այսինքն՝ արտադրանքը դեռևս չըողարկված կամ չիրացված պահանջվում է վճարել հարկը: Կարծում ենք, որ դա գործարարությանը ուղղակի խանգարող երևույթ է, և ժամանակն է այդ հարկը գանձել քաղաքակիոթ երկրների օրինակով: Բնավ չի կարելի հերքել, որ դա եղել է ժամանակի օբյեկտիվ թելադրանք:

Հիմնականում հարկային ծանր բեռի հետևանք է նաև ՀՀ-ում գոյություն ունեցող ստվերային տնտեսությունը, որը ոչ պաշտոնական հաշվարկներով կազմում է 30%: Կարծում ենք՝ չպետք է փորձառու մասնագետ լինել՝ հասկանալու համար, որ Հայստանի Հանրապետությունը արտաքին աշխարհի հետ ունի կապի երեք հիմնական ճանապարհ, որոնցով կատարվում է ապրանքների ելքն ու մուտքը, և դրանցից յուրաքանչյուրի վրա անհրաժեշտ հսկողություն սահմանելով կարելի է ստվերային տնտեսությունը կրծատել 70-80%-ով: Հետևապես՝ խնդիրը միայն ցանկության և ոչ թե գիտելիքների ու կարողությունների մեջ է: Այսօր Հայստանի Հանրապետության տնտեսության մեջ առաջացել են մոնոպոլ տիրապետության ոլորտներ՝ ծխախոտի, ցորենի, ոգելից խմիչքների, օծանելիքի, բենզինի, թռչնի մսի, շաքարավագի և այլնի ներկրման ու վաճառքի բնագավառներում, որտեղ այլ կապիտալ դժվար թե կարողանա թափանցել:

Ցանկացած տնտեսության ծեսավորման և զարգացման անհրաժեշտ պայման են եկամուտների ծեսավորումը և դրանց աղբյուրները: Կախված պետության վարած տնտեսական քաղաքականությունից՝ ֆինանսական միջոցների ծեսավորման աղբյուրները կարող են լինել տարբեր կամ կարող են զուգակցվել: Սովորաբար միջոցները լինուն են ներքին և արտաքին, սակայն, որպես կանոն, գերակշռող միշտ ներքին աղբյուրներն են: Ներքին աղբյուրները պետության սեփական եկամուտներն են, որոնք ունեն հարկային և ոչ հարկային բնույթ: Արտաքին միջոցները սովորաբար փոխառնված են կամ կարող են լինել դրամաշնորհների ծեսով:

ՀՀ պետական եկամուտների իրավական ինստիտուտի ծեսավորման վրա էական նշանակություն ունի պետության կողմից վարվող

հարկաբյուջետային քաղաքականությունը, որը գործնական տնտեսավարման ֆինանսական ապահովման գլխավոր աղբյուրն է:

Հարկային համակարգն այն հիմնարար տնտեսական մեխանիզմն է, որն ուղղակիորեն ազդում է ինչպես տնտեսության զարգացման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի վրա: Սովորական դիտարկումով թվում է, թե այդ խնդրում առանձնապես քարդություններ չկան՝ պետությունը օրենսդրորեն սահմանում է հարկատեսակներ, հարկային դրույքաչափեր, որոնց շրջանակներում ապահովվում են պետական բյուջեի հարկային մուտքերը: Մակայն գործնականում դա այն բարդ ու զգայուն համակարգն է, որտեղ կատարված չիմնավորված փոփոխություններն ազդեցություն են թողնում տնտեսության, բյուջեի եկամուտների և բնակչության կենսամակարդակի վրա: Հարկային քաղաքականությունը անմիջականորեն շոշափում է տնտեսավարող սուբյեկտների, պետական բյուջեի և բնակչության շահերը: Հարկերը գանձվում են տնտեսավարող սուբյեկտներից (ֆիզիկական և իրավաբանական անձինք), բնակչության եկամուտներից, որպեսզի պետությունը փոխհատուցի երկրի պաշտպանության, պետական պարատի պահպանության ծախսերը, լուծի բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրը, ֆինանսավորի կոթական, առողջապահեական ծրագրերը և կատարի այլ ծախսեր:

Այդ իմաստով հասարակության գուտ եկամտի բաշխումը հարկային համակարգի միջոցով ինքնին հակասություն է պարունակում, որովհետև հարկային դրույքաչափերի բարձրացումը կամ ցածրացումը նշանակում է մի սուբյեկտի եկամտի պելացում կամ պակսեցում մեկ այլ սուբյեկտի հաշվին կամ օգտին: Դա է պատճառը, որ հարկային քաղաքականության մշակումն ու կիրառումը պետք է հիմնված լինեն որոշակի սկզբունքների վրա, որպեսզի բոլոր սուբյեկտների համար ապահովի արդյունավետ գործունեության հնարավորություն և շահագրգռվածություն:

Հարկաբյուջետային քաղաքականությունը մշակելիս պետությունը պետք է որոշի, թե ինչպիսի հարկերով և տոկոսադրույքներով համարի պետական բյուջեն, որպեսզի կենտրոնացված եկամուտների միջոցով ֆինանսավորի իր կողմից կատարվող ծախսերը և ապահովի տնտեսավարող սուբյեկտների շահագրգռվածությունը հասարակական արտադրության զարգացման ու ընդլայնման գործում: Նման խնդրի առաջ կանգնած է Հայաստանի Հանրապետությունը: Տնտեսության մեջ ներդրումների, բնակչության սոցիալական պաշտպան-

վածության, կենսամակարդակի, զբաղվածության, արտագաղթի և այլ հարցերն այնքան են ծանրացել, որ ստանդարտ եղանակներով հնարավոր չեն դրանք հաղթահարել: Ավելին, հանրապետության կենտրոնացված պետական /բյուջետային/ եկամուտների դեֆիցիտը և այլ գործուներ աստիճանաբար խորացնում են տնտեսության ճգնաժամային վիճակը և քարդացնում առկա տնտեսական խնդիրների լուծման հնարավորությունները:

Հարց է առաջանում՝ նշված խնդիրները լուծելու համար ինչպիսի՝ հարկային քաղաքականություն պետք է իրականացնի մեր երկիրը: Որևէ այլ երկրի պատրաստի հարկային քաղաքականության մեխանիզմը հնարավոր չեն կիրառել ՀՀ տնտեսությունում և դրական արդյունքների ապահովել, քանի որ այդ դեպքում հաշվի չեն առնվի մեր տնտեսության առանձնահատկությունները:

Երկրի տնտեսության կարգավորման կարևոր համակարգերից մեկը հարկաբյուջետային քաղաքականությունն է: Դա՝ այն պատճառով, որ հարկաբյուջետային քաղաքականությունը մակրոտնեսական քաղաքականության գլխավոր բաղադրիչն է, և դրա արդյունքներն անմիջաբար ընկալվում են բնակչության կողմից:

ՀՀ սեփական եկամուտների գոյացման քաղաքականության սկիզբը կարելի է համարել 1992-93թ., երբ օրենսդրական կարգավորում ստացան հիմնական հարկատեսակները՝ ավելացված արժեքի հարկը, շահութահարկը և ակցիզային հարկը:

Հետագայում օրենսդրական կարգավորում ստացան ֆիզիկական անձանց եկամուտների հարկման և գույքահարկերի գանձման հարաբերությունները, ինչպես նաև հարկային եկամուտների վարչարարություն իրականացնող մարմինների իրավունքներն ու պարտականությունները:

Նշված ժամանակաշրջանին բնորոշ էր այն, որ տարբեր հարկատեսակների մասին օրենքները հիմնականում կրկնում էին ՌԴ օրենքները, և վարվող հարկային քաղաքականությունը հաշվի չեր առնում մեր հանրապետության առանձնահատկությունները: Տարբեր երկրներում շուկայական հարաբերությունների զարգացումը տարբեր դրսնորումներ է ստանում, և հարկային հարաբերությունների կարգավորումը պետք է համապատասխանի տնտեսական բարեփոխումների ընթացքին:

ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված են հետևյալ հարկերի տեսակները.

- ավելացված արժեքի հարկ,
- ակցիզային հարկ,
- շահութահարկ,
- եկամտահարկ,
- հողի հարկ,
- գույքահարկ,
- պարզեցված հարկ:

Բացի այդ, սահմանված են նաև այլ պարտադիր վճարներ՝ տուրքեր ու հաստատագրված վճարներ:

Հայտնի է, որ բաշխման հարաբերությունների կարգավորմանը պետության մասնակցությունը /կոմկրետ դեպքում՝ ՀՆԱ-ի բաշխումը պետական բյուջեի միջոցով/ պայմանավորված է մի շարք հասարակական պահանջմունքներ բավարարելու անհրաժեշտությամբ: Երեքի պաշտպանությունը, օրինականության ապահովումը, գործազրկության ու անաշխատունակության նպաստների վճարումը, միջնակարգ կրթությունը, բժշկական սպասարկումը /նաևամբ/, բյուջեի պակասուրդի փոխհատուցումը և այլ պահանջմունքներ շուկայական համակարգի միջոցով հնարավոր չեն բավարարել և իրականացվում է կենտրոնացված բյուջեի եկամուտների հաշվին:

Պետությունն այդ խնդիրները հիմնականում լուծում է հարկային համակարգի միջոցով՝ ելնելով երեք տարբեր սուբյեկտների՝ պետության, գործարար աշխարհի և անհատների շահերի գուգակցումից: Գործնականում վերը նշված սուբյեկտների միջև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով (ԶՕ-137, 24.06.97) սահմանված կարգով տեղի է ունենում եկամուտների բաշխում ու վերաբաշխում, որը օբյեկտիվորեն առաջացնում է հակասություն: Մի կողմից՝ հասարակական պահանջմունքների բավարարումը պարտադիր է, իսկ մյուս կողմից՝ եկամուտը հարկային համակարգի օգնությամբ մի սուբյեկտից անցնում է մյուսին:

Գործնականում չլուծված մի շարք խնդիրներ են առաջանում: Այսպես, ծագում է խնդիր՝ ինչպիսի՝ հարկային քաղաքականություն մշակել ու իրականացնել, որ բավարարվեն հանրային պահանջմունքները, ապահովվեն գործարար աշխարհի ակտիվությունն ու առանձին սուբյեկտների շահագրգուվածությունը տնտեսական առաջնորդացի մեջ:

Այդ ամենը իր լուծումը պետք է ստանա գործող հարկային քաղաքականության սկզբունքներում, որոնք իրենց ամրապնդումը և

դրսերումը պետք է ստանա «Հարկերի մասին» ՀՀ օրենքում: Այդ սկզբունքները պետք է արտահայտեն հարկային քաղաքականության ծկունությունը, արդարությունը, վճարունակությունն ու արդյունավետությունը:

Հարկային քաղաքականության թվարկված սկզբունքները կապահանգանության մասնակցությունը /կոմկրետ դեպքում՝ ՀՆԱ-ի բաշխումը պետական բյուջեի միջոցով/ պայմանավորված է մի շարք հասարակական պահանջմունքներ բավարարելու անհրաժեշտությամբ: Երեքի պաշտպանությունը, օրինականության ապահովումը, գործազրկության ու անաշխատունակության նպաստների վճարումը, միջնակարգ կրթությունը, բժշկական սպասարկումը /նաևամբ/, բյուջեի պակասուրդի փոխհատուցումը և այլ պահանջմունքներ շուկայական համակարգի միջոցով հնարավոր չեն բավարարել և իրականացվում է կենտրոնացված բյուջեի եկամուտների հաշվին:

Եկունության սկզբունքի ազդեցությունը բաշխման հարաբերությունների ու գործարար ակտիվության վրա պետք է դիտարկել կատեգորիկ և բովանդակային առումներով:

Կատեգորիկ առումով ծկունության ազդեցությունը բնորոշվում է նրանով, որ սահմանված հարկային դրույքաչափը մշտական լինել չի կարող, կախված պետք է լինի տնտեսական իրավիճակներից և պետության առջև դրված խնդիրների լուծումից:

Բովանդակային առումով հարկային քաղաքականության ծկունության խնդիրն է, հաշվի առնելով տնտեսական իրավիճակը, փոփոխության ենթարկել հարկային դրույքաչափերը /բարձրացում, փեցում կամ հարկման արտոնյալ դրույքաչափեր/: Դա հատկապես կարևոր է անցումային տնտեսությունների համար:

Հարկման ծկունությունը կարծ ժամանակաշրջանի քաղաքականություն է և կարող է ապահովել մի շարք դրական արդյունքներ: Այսպես, նոր տնտեսական համակարգին անցման շրջանում ՀՀ տնտեսությունը հայտնվեց առանձնահատուկ պայմաններում՝ տնտեսական շրջափակում, աղետի հետևանքները վերացնելու անհրաժեշտություն, հանքահումքային ռեսուրսների պակաս և այլն: Տեղական հումքի բազայի վրա գործող արտադրությունների նկատմամբ պետք է կիրառվեր ծկուն հարկային քաղաքականություն՝ տնտեսության զարգացումը խթանելու նպատակով: Ծկուն հարկային քաղաքականությունը կիրախուսեր նաև մասնավոր խոշոր ներդրումները, որոնք ՀՀ տնտեսության համար խիստ անհրաժեշտ են: Բնական է, որ այդ քաղաքականությունը պետք է ընդգրկի նմանատիպ բոլոր տնտեսակարող սուբյեկտներին, որպեսզի չխախտվի հարկային քաղաքականության սկզբունքը: Ծկուն հարկային քաղաքականությունը արտադրության մեջ նորագույն տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման մեջ խթան է, որի արդյունքը ժամանակի ընթացքում բազմապատիկ կփոխհատուցի բյուջեի այն կորուստները, որոնք առաջանում են

ճկուն հարկային քաղաքականության կիրառման սկզբնական շրջանում: ճկուն հարկային քաղաքականությունը տևական լինել չի կարող, այն անցումային կամ ճգնաժամ ապրող տնտեսությունը վերականգնելու նպատակով ժամանակավոր օգտագործվող սկզբունք է: ճկուն հարկային քաղաքականություն հատկապես կարելի է կիրառել արտադրության այն բնագավառների նկատմամբ, որոնց համար կան հանքահումքային ռեսուրսների լավագույն հնարավորություններ:

Հայաստանի Հանրապետությունում հումքային ռեսուրսներ կան շինարարական քարերի, շինանյութի, գունավոր մետաղների, գրաֆիտի, աղի, հանքային ջրերի, պտղի, գինու, կոնյակի, տարրեր տեսակի հյութերի արտադրության համար։ Նման արտադրությունների նկատմամբ ճկուն հարկային քաղաքականության կիրառումը հնարավորություն կտա դրանք վերակառուցել առաջատար տեխնոլոգիաների բազայի վրա և մուտք գործել միջազգային շուկա։ Դա կնպաստի նաև օտարերկրյա կապիտալի ներգրավմանը նշված բնագավառներ և բաց տնտեսության ձևավորմանը։

Երկրի հարկային քաղաքականության համար չափազանց կարևոր է հարկային համակարգում ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռները կամ հարկերի կառուցվածքները, ինչպես նաև առկա կառուցվածքի պատճառները ճիշտ համադրելը: Հարկային համակարգի կառուցվածքը կարևոր է նրանով, որ ուղղակի և անուղղակի հարկերի ծանրությունը բաժին է ընկնում հասարակության տարբեր սուբյեկտների: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում 2007թ. շահութահարկի և եկամտահարկի բաժինը համամասնորեն կազմում է 75,503,6 և 46,828,4 մլրդ դրամ, իսկ անուղղակի հարկերը /ԱԱՀ, ակցիզային հարկ, մաքսատուրք/ գերազանցում են ուղղակի հարկերին: Այն, որ շահութահարկի և եկամտահարկի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր եկամուտներում դեռևս ցածր է, վկայում է ՀՀ տնտեսության զարգացման ցածր մակարդակի մասին: Այդ երկու հարկատեսակները պայմանավորված են իրավաբանական և ֆիզիկական անձանց աշխատանքային գործունեությամբ, ինչպես նաև իրական տնտեսական դաշտի խիստ փոքր լինելու հանգամանքով:

Դա նշանակում է, որ տնտեսության թույլ զարգացածության պատճառով պետական եկամուտների հիմնական ծանրությունը տեղափոխվել է անուղղակի հարկերի վրա:

Արտասահմանյան մի շարք պետությունների հարկային քաղաքա-

շատ համարելու հնարավորություններին անցման ներկա փուլում հա-
շուկայական հարաբերություններին անցման ներկա փուլում հա-
վասարապես չի հարկվում նաև բնակչության ունեցվածքը: Բնակչու-
թյան շրջանում տեղի է ունեցել հարստության խիստ բներացում, որը
գերազանցապես դոլարացված է և չի ներդրվում արտադրության մեջ
կամ հոսում է արտասահման: Այն պայմաններում, եթե ՀՀ-ում անհ-
կամ հոսում է արտասահման: Այն պայմաններում, եթե ՀՀ-ում անհ-
կամ հոսում է լուծել բնակչության 60%-ի նվազագույն կենսաապահով-
րաժեշտ է լուծել բնակչության 10-15%-ը ապրում է շքեղության
վածության խնդիրը, բնակչության 10-15%-ը ապրում է շքեղության
մեջ: Հարց է առաջանում՝ բնակչության այդ մասի եկամուտները ժա-
մանակին գրանցվե՞լ են և հարկվե՞լ են, թե՞ ոչ: Կարծում ենք, որ
դրանց գերակշիռ մասը հարկային դաշտից դուրս է: Պետությունը եր-
բեք չպետք է մոռանա իր տնտեսական դերը և այս դեպքում էլ հար-
կային լծակների օգնությամբ պետք է կարողանա այդ միջոցները
հարկել և ուղղել դեպի արտադրություն: Հատկապես անցումային շր-
ջանի տնտեսությունը և մասնավորապես այնպիսի տնտեսությունը,
որպիսին Հայաստանին է, չպետք է ընդունի սոցիալական այդ մեծ
ճեղքվածքը: Մեծ տեղ տալով տնտեսական գործունեության ազա-
տությանը, Հայաստանի Հանրապետությունում այսօր այն բացար-
ձականացվել է, մոռացվել է, որ տնտեսական ազատությունը թու-
լատրելի է օրենսդրության շրջանակներում և ոչ թե օրենքները շր-
ջանցելով: Տնտեսական ազատությունը նույնպես կարգավորվում է

որոշակի օրենքներով և սահմանափակումներով: Սահմանափակումները տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը համազգային և համապետական խնդիրների լուծմանը ուղղելու նպատակ են հետապնդում: Այն դեպքում, եթե տնտեսավարող սուբյեկտները օրենքների շրջանցման ճանապարհով գործունեություն են ծավալում, խուսափում են համազգային խնդիրների լուծումից, հասարակության մեջ տարածում է ստանում անարդարությունը, խորանում են հարստության բևեռացումը և սոցիալական շերտավորումը, մի բան, որը այսօր ցայտուն արտահայտված է Հայաստանի Հանրապետությունում:

Ելմելով տնտեսության զարգացման ազատ շուկայական հարաբերությունների գաղափարից՝ ՀՀ-ում իրականացվեցին տնտեսական վերափոխումներ՝ ապապետականացում, բազմասեփականության ձևավորում, ազատ տնտեսական գործունեություն, ֆինանսական շուկայի ստեղծում և այլն: Սակայն այդ բոլոր վերափոխումներին համաքայլ չափորոշիչ դրանց գործողության ամբողջական օրենսդրական դաշտը, որի պատճառով հակասություն ստեղծվեց տնտեսական գործունեության և օրենսդրական կարգավորման միջև: Արդյունքում՝ այն, ինչ սպասվում էր տնտեսական վերափոխումների հետևանքով, շոշափելի չդարձավ և շոշափելի չդարձավ հատկապես բազմասեփականության և ազատ տնտեսական գործունեության հիմքի վրա արտադրության վերելքը: Ավելին, ապապետականացված կազմակերպությունների մեջ մասը չի գործում, եթե կան աշխատող արտադրություններ, ապա՝ ոչ լոիկ հզորությամբ, հանրապետութունում եղած կապիտալի զգալի մասը հոսեց արտասահման, մնացած մասը գերազանցապես ներդրվեց շրջանառության ոլորտում, կազմակերպությունների առարկայացված կապիտալ միջոցները սկսեցին վաճառվել արտասահմանյան երկրներին որպես թափոն, եղան այլ բացասական հետևանքներ: Բոլոր ժամանակներում տնտեսական վերափոխումների գերազույն նպատակը արտադրության տեխնոլոգիական վերակառուցումն ու զարգացումն է՝ բնակչության կենսամակարդակը բարձրացնելու համար: Կարծում ենք՝ Հայաստանը դրա համար միշտ ունեցել է բավարար մտավոր ներուժ: Հետևապես, տնտեսական վերափոխումների բացասական հետևանքների հիմնական պատճառը հենց այդ վերափոխումների ընթացքում թույլ տրված սխալներն են:

Տնտեսության զարգացման կարևոր խթաններից մեկը հարկային

երի ծանրությունն է, ինչը պայմանավորված է նրանով, թե ինչպիսին տվյալ տնտեսության պետական քաղաքականության կողմնորոշածությունը: Արտասահմանյան մի շարք պետությունների հարկա-ին քաղաքականության ուսումնասիրությունների հիման վրա կարե-ի է կանխատեսումների միջոցով հասնել ներ հանրապետության արկային քաղաքականության պետական ծիշտ կողմնորոշվածուարկային հետևյալ կողմնորոշվածությունները.

1. ճապոնական կողմնորոշվածությունն ուղղված է խրախուսելու մասնավոր արտադրությունում գիտատեխնիկական առաջընթացը, սկսելով ներդրումների միջոցով բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը և իջեցնելու արտադրանքի ինքնարժեքը՝ մի-թագագային շուկայում ավելի մեծ տեղ ունենալու նպատակով: ճապո-ջագային շուկայում ավելի մեծ տեղ ունենալու նպատակով: ճապո-ջագային գույքային անհավասարությանը ուշադրություն չի դարձ-վում, այսինքն՝ տնտեսական քաղաքականության մեջ հիմնականը համարվում է համազգային շահը՝ գիտատեխնիկական նորամուծությունների հիման վրա միջազգային շուկայում ամրապնդվելը: ՀՆԱ-ի արդյունքի միայն 30%-ը պետության միջոցով վերաբաշխելը մեծ հարավորություններ է ստեղծում մասնավոր ներդրումների ծավալի և դաշտի ընդլայնման համար:

2. ԱՄՆ-ի տնտեսության մեջ պետական քաղաքականությունը ուղղված է ծեռնարկատիրական գործունեության համընդհանուր խրախուսմանը և բնակչության առավել ակտիվ մասի հարստացման խթանմանը, որը դիտվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման համընդհանուր պայման: ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականության մեջ սոցիալական հավասարության խնդիրը չի դրվում, և հարկերի միջոցով պետությունը վերաբաշխում է ՀՆԱ-ի 30-32%-ը:

3. Գերմանիայի տնտեսական քաղաքականության ուղղվածության մեջ գերակայում է բոլոր տեսակի ծեռնարկությունների կայուն զարգացման հնարավորությունը, պետությունը ակտիվորեն ազդում է գների, հարկերի և տուրքերի վրա: Հարկերի միջոցով վերաբաշխում է Գերմանիայի ՀՆԱ-ի մոտ 40%-ը:²

Ուսումնասիրությունները վկայում են, որ հարկերի միջոցով ՀՆԱ-ի վերաբաշխմանը, կախված համապետական նպատակային խնդիրների լուծումից, ցուցաբերվում են տարրեր մոտեցումներ, որոնք և

²Տես *Тют юрюков Н. Н.*, Налоговые системы зарубежных стран: Европа и США, М., 2002, с. 35-48.

հանդիսանում են պետական քաղաքականության կողմնորոշվածությունները:

Հայաստանի Հանրապետությունը թվարկված կողմնորոշվածություններից պետք է մշակի հարկերի միջոցով ՀՆԱ-ի կենտրոնացված վերաբաշխման իր ուղղվածությունը, որը կմպաստի հետևյալ խնդիրների լուծմանը.

1. ներդրումների /ներքին և արտասահմանյամ/ խրախուսում՝ ներդրումների դաշտի ձևավորում,

2. ներդրումների ռիսկի թուլացում,

3. տնտեսության մեջ առաջնայնությունների խրախուսում /այն արտադրությունները, որոնց գարզացման համար կան լավագույն պայմանները և դրանց արդյունքով կարող ենք դուրս գալ միջազգային շուկա/:

4. հարկային քաղաքականության արդարության և հավասարության սկզբունքների պահպանում:

Թվարկված բարեփոխություններով կարելի է ձևավորել ՀՀ հարկային քաղաքականության գլխավոր ուղղվածությունը՝ շուկայական հարաբերությունների վրա հիմնված և այդ ուղիով գարզացող տնտեսության աստիճանաբար արմատավորումը:

ՀՀ-ում գործող հարկային համակարգը չի նպաստում վերը նշված խնդիրների լուծմանը: Ծանր հարկային բեռով պետությունը ծգտում է փոքրացնել բյուջեի պակասուրով և իր ֆինանսական ծախսերը փակել բարձր հարկադրույքներ սահմանելու ճանապարհով, որը նվազեցնում է արտադրության մեջ ներդրումներ կատարելու և արտադրությունը ընդլայնելու շահագրգուվածությունը: Այդ խնդրի ավելի հաջող լուծում է ցածր հարկադրույքների սահմանումը, դրանով ներդրումների խրախուսումը և հարկային դաշտի ընդլայնումը: Ավելին, այնպիսի մի երկրի համար, ինչպիսին ՀՀ-ն է, որի նախկին տնտեսական կապերը խզվել են, պետք է ձևավորվի նոր կառուցվածք: Մասնավոր տնտեսությունների մեծ մասը դեռևս շուկայական հարաբերությունների պայմաններում աշխատելու բավարար փորձ չունեն, կա հումքի և էներգետիկ ռեսուրսների խիստ պակաս և այլն, որի պատճառով բարձր հարկային բեռը չի խրախուսի մասնավոր տնտեսական գործունեությանն ու ձեռներեցությանը:

Հարկային բեռը Հայաստանի Հանրապետությունում առաջացրել է մեկ այլ բացասական հետևանք՝ հարկերից խուսափում և հսկայական ստվերային տնտեսության գոյացում: Դեռևս պահպանվում է

հանրապետություն ներմուծվող արտասահմանյան ապրանքների մի մասի մաքսային և հարկային գրանցում չստանալու արատավոր պրակտիկան, նույնը վերաբերում է արտահանվող ապրանքներին, սեփականաշնորհման հետևանքով հսկայական քանակությամբ արտադրության միջոցներ՝ շենքեր, կառույցներ, մեքենասարքավորումներ, տաղավարներ, դարձել են մեռյալ կապիտալ և դրանց համար հարկեր չեն վճարվում, կան բազմաթիվ գործող, բայց հարկային մարմիններում չհաշվառված սուբյեկտներ և այլն: Այդ ամենի պատճառներից մեկը բերևս հարկային բեռն է և անկատար հարկային օրենսդրությունը:

Հանրապետության հարկային գործունեության բարելավման միջոցների շարքում անհրաժեշտ է առանձնացնել հարկային իրավախիսումների ժամանակին բացահայտումը և իրավական արդարացի պատասխանատվության կիրառումը: Նշենք, որ միայն 2008թ. առաջին 10 ամիսներին ՀՊԾ հետաքրննության բաժնի կողմից հարուցվել է 151 քրեական գործ հարկային հանցագործությունների հատկանիշներով:

Հարկային համակարգի արոյունավետության պակասը պայմանավորված է այն կորուստներով /բարձր հարկադրույքների պատճառով արտադրության կրծատում, հարկերից խուսափում և այլն/, որոնք առաջանում են համակարգի գործնական կիրառման հետևանքով:

Պետական եկամուտների մի մասը դրսենորվում է ֆինանսական ռեսուրսների միջոցով, որոնց հավաքումը ու ըստ նպատակների բաշխումը տեղի են ունենում կոնկրետ տնտեսական և քաղաքական պայմաններին համապատասխան մշակված և ընդունված ֆինանսական քաղաքականության միջոցով: Ֆինանսական քաղաքականությունը տեսականորեն ֆինանսական համակարգի կառավարման օրենքներով սահմանված պետական գործունեություն է, տնտեսական ու սոցիալական զարգացման պետական կոնկրետ ծրագրերի իրականացումը համապատասխան ֆինանսական ռեսուրսներով ապահովող ինքնուրույն բնագավառ:

Ֆինանսական քաղաքականությունը կարևորագույն միջոց է պետական քաղաքականությունը հասարակական գործունեության ցանկացած բնագավառում իրականացնելու համար /տնտեսություն, սոցիալական ոլորտ, ռազմական ոլորտ, միջազգային հարաբերություններ և այլն/:

Ֆինանսական քաղաքականությունը խնդիրների ու նպատակների առաջադրումն է, որոնց լուծմանն ուղղվում է պետական եկամուտների ծևավորման, բաշխման ու Վերաբաշխման ամբողջ գործընթացը: Ֆինանսական քաղաքականությունը ինքնին չի կարող լինել լավ կամ վատ: Այն գնահատվում է՝ ելնելով նրանից, թե որքանով է համապատասխանում հասարակության շահերին և ինչ չափով է նպաստում առաջադրված խնդիրների լուծմանը: Կոնկրետ պետության ֆինանսական քաղաքականությունը գնահատելու և ճշգրտելու համար, առաջին հերթին, պետք է ունենալ հասարակության զարգացման հստակ ծրագիր, որն ընդգծի բնակչության առանձին խմբերի շահերը, մոտակա և հեռանկարային խնդիրները, դրանց կատարման ժամկետներն ու մեթոդները: Այն պետք է ուղղված լինի ֆինանսական ռեսուրսների հնարավոր առավելագույն ծավալները որոշելում, քանի որ նյութական հիմք է ծառայում ցանկացած վերակառուցման համար:

Բնականաբար, յուրաքանչյուր երկրում, պետության դերով ու գործառույթներով պայմանավորված, կիրառվում է որոշակի ուղղվածություն ունեցող ֆինանսական քաղաքականություն, որի ամենակարևոր բաղադրամասը բյուջետային քաղաքականությունն է: Միաժամանակ, բյուջետային քաղաքականությունը, որպես տնտեսական քաղաքականության իրականացման գործընթացի դրսերման ֆինանսական ծև, կառուցվում է մակրոտնտեսական հավասարակշռվածության, ազատ մրցակցության և այլ տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան: Բյուջետային քաղաքականությունն ընդհանուր տնտեսական քաղաքականության հետ ունենալով սերտ փոխկապվածություն՝ միաժամանակ դրանից առանձնանում է: Ըստ էռեթյան, բյուջետային արդյունավետ քաղաքականության իրականացման հիմքը տնտեսականն է, նրա համար հարկային բարենպաստ դաշտի առկայությունը, հարկման օբյեկտների ու սուբյեկտների հստակ սահմանումը, հարկերի դրույքաչափերի, դրանց կարգավորման, հարկային կարգապահության, պատասխանատվության և վերահսկողության հետ կապված խնդիրների լուծումը:

Տնտեսության ազատական հարաբերությունների պայմաններում պետության դերի ու խնդիրների նկատմամբ վերաբերմունքը կոնկրետ ժամանակներում տարբեր է եղել: Նման հարաբերությունների ծևավորման փուլում գերակայող տնտեսական դոկտրինան եղել է մերկանտիլիզմը, որը խիստ կարևորում է երկրում արդյունաբերու-

թյան ու առևտրի զարգացման խնդրում պետության միջամտության անհրաժեշտությունը:

Ծուկայական տնտեսության զարգացածության ձեռք բերված նակարդակը XX դարի կեսերին փոխեց տնտեսության զարգացման պետության ունեցած դերի մասին պատկերացումները։ Տեգործում պետության ունեցած դերի մասին պատկերացումները։ Տեսականորեն պետության դերի գիտակցման փուլը կապված է Զ. Քեյն-սի գաղափարախոսության հետ։ Քեյնսի գաղափարներից բխող տնտեսական քաղաքականությունը կառուցվում էր տնտեսական անկման ինքնակասեցման անհնարինության մասին դատողությունների վրա, ինչը անհրաժեշտություն է դարձնում ընդհանուր պահանջարկը և առաջարկը հավասարակշռելու, տնտեսությունը ճգնաժամային վիճակից հանելու և կայունացնելու պետական քաղաքականությունը։

Ծուկայական հարաբերությունների պայմաններում պետական եկամուտների հաշվին լուծման ենթակա խնդիրները պայմանավորում են պետության գործառույթները, կանխորոշում վերջինիս իրավասության տակ հավաքագրվող միջոցների ծավալը, կազմը և կառուցվածքը: Այդ գործում բացառիկ դեր է հատկացվում ֆինանսական քաղաքականությանը և դրա իրականացումը ապահովող հարկան

կարյութետային քաղաքականությանը, ինչը ներկայացնում է բյուջե-տային միջոցների ծևավորման և օգտագործման բնագավառում պետության նպատակառուղղված գործունեությունը։ Վերջին հաշվով դա կարենոր գործիք է տնտեսության մակրոտնտեսական հավասարակշռության հասնելու համար, մանավանդ որ հարկերի, պետական այլ եկամուտների և ծախսերի միջոցով պետությունը կարողանում է խթանել ձեռնարկատիրության զարգացումը, գործարար ակտիվությունը, ազդել զբաղվածության, արժեգրկման և մակրոտնտեսական մյուս ցուցանիշների վրա։ Գործնականում հասարակության զարգացման բոլոր փուլերում տնտեսական քաղաքականության ոլորտներն ու գործիքները սերտորեն փոխկապակցվում են, այդ քաղաքականության և ոչ մի գործիք մյուսներից առանձին չի կարող գործել։

Պետական Եկամուտների և ծախսերի մեջ կատարվող փոփոխությունը համապատասխան փոփոխություն է առաջացնում դրամական զանգվածի, ներդրումների, գբաղվածության, հասարակական խմբերի Եկամուտների, արտադրության ու համախառն ներքին արդյունքի ծավալների և բազմաթիվ այլ ցուցանիշների մեջ:

Միանաշանակ է, որ ընդհանուր տնտեսական զարգացման գործում չափազանց մեծ դեր ունի հարկարյութետային այնպիսի քաղաքականության որդեգրումը, որը նպաստավոր պայմաններ կստեղծի երկրի տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը առավել չափով ընդլայնելու, ներդրումները խթանելու և ակտիվացնելու, մրցակցային հավասար դաշտ ստեղծելու ճանապարհով վերարտադրության ընդլայնված ծավալներ ապահովելու և պետական եկամուտների ծավալները մեծացնելու համար:

Հարկային քաղաքականությունը, ըստ էռթյան, բյուջետային քաղաքականության բաղկացուցիչ մասն է և գործնականում իրենից ներկայացնում է տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում հարկատեսակների, հարկ վճարողների, հարկվող շրջանառության կամ եկամուտների դրույթաչափեր սահմանելու, գանձման ու վճարումների կանոնակարգման, օրենսդրական ապահովածության և այլ կապերի ամբողջական համակարգ։ Այդ խնդիրները, երկրի տնտեսական բազայից, սոցիալ-տնտեսական իրավիճակից և այլ հանգամանքներից կախված, կարող են ստանալ տարբեր լուծումներ։ Ուստի, տնտեսության շարունակական զարգացման պայմաններում հասարակության տնտեսական, քաղաքական և սոցիալական հարաբերությունները անընդհատ փոխվում են, որի պատճառով

«Հայոց» տնտեսական կատեգորիան հնարավոր չէ հստակ որպես:
յնում է ընդունել, որ հարկերը, օրենսդրությամբ սահմանված կար-
գով, պետական և համայնքային բյուջեներ պարտադիր, անհատույց,
կոնկրետ ժամանակում և որույքաչափերով գանձվող վճարներ են:³
Յարկերին վերագրվում են բազմաթիվ գործառույթներ, որոնցից
առավել ընդգծված են երեքը՝ ֆիսկալ, խթանիչ և սոցիալական:

Տնտեսագիտության նենության դասագիրքը և դրանք էին համարում միայն ֆիսկալ գործիք լինելը, մարքսիստները դրանք ընդունում էին որպես լրացուցիչ շահագործման միջոցներ: Քեյնսյան դպրունում էին որպես լրացուցիչ շահագործման միջոցներ: Արտահայտում էին հակառակ կարծիքը:

Ամեն մի պետություն իր հիմնական գործառությամբ լրացնելու մասնական համար պետք է տնօրինի և տիրապետի որոշակի ֆինանսական միջոցների: Դրանք հավաքագրվում են պետական բյուջե, որանցով իսկ վերջինս ունենում է որոշակի ժամանակահատվածի համար եկամուտների և ծախսերի ամբողջականություն: Այս սահմանված եկամուտների և ծախսերի ամբողջականությունը բխում է պետության տեղից ել՝ բյուջետային քաղաքականությունը բխում է պետության գործառությներից, տնտեսական զարգացման գերակայությունից, սոցիալ-տնտեսական իրավիճակից, տնտեսական անվտանգության պահանջներից և պետությանը վերապահվող այլ խնդիրներից:

Բյուջետային քաղաքականության իրականացման համար առ բյուջետային քաղաքականության իրականացման համար առ բյուջետ ֆինանսական ռեսուրսները ուղղակի կախվածություն ունեն տնտեսության զարգացածության աստիճանից, մյուս կողմից՝ բյուջետնեսության զարգացածության աստիճանից, մյուս կողմից՝ բյուջեն և բյուջետային քաղաքականությունը իրենց ներգործությունն ունեն տնտեսության զարգացման վրա: Գործնականում բյուջեն պես տնտեսության զարգացման վրա:

³ Տես «Հարկերի մասին» ՀՀ օրենքը հոդ 3, ընդունված Աժ կողմոց 1997թ. ապրիլի 14-ին (Հարկային օրենսդրություն, Ե., 1998):

տության ծեռքին հզոր գործիք է հասարակական-տնտեսական հարաբերությունների կարգավորման համար, այն նպատակային տնտեսական քաղաքականության իրականացման միջոց է: Որպես այդպիսին՝ բյուջեն իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով պետք է իրականացնի տնտեսության հարկաբյուջենային կարգավորում, որն իրենից ներկայացնում է պետության կողմից ծեռնարկվող միջոցառումների ամբողջություն՝ ուղղված պետական եկամուտների ու ծախսերի կառավարմանը, երկրում գրաղվածության ապահովմանը, ազգային եկամտի, ՀՆԱ-ի և տնտեսական աճի խթանմանը: Բյուջենային քաղաքականության ցանկացած ռազմավարություն ընդունելիս հատուկ ուշադրության է արժանի բյուջեի ծախսային մասի ծավալը, դրա կառուցվածքի նպատակահարմար ուղղվածությունը: Դրանով է պայմանավորված կոնկրետ ժամանակաշրջանի համար պետության ստանձնած գործառույթների ու պարտականությունների կատարման հնարավորությունը: Բնականաբար, հարկային քաղաքականության բնագավառում իրականացվող ցանկացած վերակառուցում պետք է գնահատվի բյուջենային քաղաքականության տեսանկյունից: Միայն սպասվող եկամտային մուտքերի և պետության գործառույթների լիովին կատարման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների համարում հիման վրա է հնարավոր գնահատել բյուջենային քաղաքականության արդյունավետությունը, կանխատել տնտեսական գործընթացների ուղղությունները և համապատասխան փոփոխություններ, ծշգրտումներ կատարելու քայլեր ծեռնարկել: Վերջիններս, իրենց հերթին, պետք է միտված լինեն տնտեսության աշխուժացմանը, հարկման օբյեկտների ու դրույքաչափերի փոփոխապես բխող բյուջենային հավասարակշռված այնպիսի քաղաքականության իրականացմանը, որի հետևանքով առանձին, առավել կարևոր հարկատեսակների դրույքաչափերի բարձրացումը չի հանգեցնի արտադրության ծավալների կրճատման և, դրանով իսկ, բյուջեի եկամուտների պակասեցման:

Ցանկացած երկրում իրականացվող բյուջենային քաղաքականությունը ուղղակի և անուղղակի ծևով անդրադառնում է ոչ միայն պետության, այլև բոլոր քաղաքացիների, բնակչության խմբերի ու շերտերի, տնտեսավարող սուբյեկտների շահերի և տնտեսական իրավիճակի վրա:

Բնականաբար շուկայական հարաբերություններին անցումը առաջացնում է բազմաթիվ բարդ ու բազմաբնույթ խնդիրներ, որոնք

լուծելու դեպքում է միայն հնարավոր դառնում շուկայական տնտեսության ծևավորումն ու գարգացումը:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այդպիսի նախադրյալ կարող է ծառայել երկրի նոր պահանջներին համապատասխան ֆինանսական, դրամավարկային, բանկային, հարկաբյուջենային, սոցիալական ու կառուցվածքային այլ համակարգերի ծևավորումը, ինցիալական գործընթաց է և չի կարող տեղի ունենալ հեղափոխական ըլլայլների միջոցով: Այդ իսկ պատճառով նմանատիպ վերակառուցումները պետք է ընթանան համապատասխան նախադրյալների ստեղծման, պետական միջամտության շրջանակների աստիճանական ներկայացման, շուկայական հարաբերությունների ընդլայնման համար բաղադրման, գործունակ ենթակառուցվածքների դենպաստ դաշտի առաջացման, գործունակ կիրավորման ճանապարհով: Ընդհանրապես շուկայական հարաբերություններին անցման շրջանում բացառիկ դեր ունի պետության կողմից կիրավոր հարկաբյուջենային քաղաքականությունը, որը բարենպաստ լինելու, շուկայական հարաբերությունների կարգավորման վրա արդյունավետ ազդեցություն ունենալու դեպքում կնապաստի ծեռնարկատիրական ակտիվության բարձրացմանը, ներդրումային գործընթացների աշխուժացմանը, ազատ մրցակցության հաստատմանը և, վերջին հաշվով, տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը:

Անցումային ժամանակաշրջանում ծագող հիմնախնդիրների լուծման գործում, անշուշտ, առաջնային դերը պատկանում է պետությանը, որի ակտիվ միջամտությունը երկրի տնտեսական վերափոխումներին և գործունեության արդյունավետության բարձրացմանը բոլոր ժամանակներում համարվել է չափազանց կարևոր: Այս առումով բացառություն չի կարող լինել նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ պետությանը վերապահվող խնդիրները ըստ ամենայնի չեղածին, հատկապես՝ անկախության առաջին տարիներին:

Ամեն դեպքում, տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը անվիճելի է, առավել ևս՝ անցումային տնտեսության պայմաններում: Սուտեցումները տարբեր կարող են լինել միայն ոլորտների ընդգրկման, տնտեսության կարգավորման գործում պետության մասնակցության սահմանների և ձևերի որոշման առումներով: Գործնականում, ինչպես ցույց է տվել անցումային փուլ ապրանքարկների կիրածը, շուկայական հարաբերությունների պայմաններում պետությանը վերապահվում է ոչ այնքան արտադրության անմիջա-

կան կազմակերպչի, որքան տնտեսական գործընթացների ուղղորդումը և կարգավորումը իրականացնողի ու մակրոտնտեսական քաղաքականության առաջնայնությունները որոշողի դեր: Պետություն-իրեն հատուկ լծակների միջոցով անհրաժեշտ փոփոխություններ կարող է կատարել տնտեսական համամասնությունների ձևավորման, կառուցվածքային տեղաշարժերի իրականացման, արտադրության առաջնային ճյուղերի զարգացման և հասարակական կյանքի այլ ոլորտներում: Շատ կարևոր է նաև կառավարության կողմից մակրոտնտեսական ընդհանուր ռազմավարության մշակումը՝ կոնկրետ ձևավորված տնտեսական համակարգին համահունչ, որը կսահմանի առաջադրված նպատակներին հասնելու համար հարկաբյուջետային բարեփոխումների իրականացման ուղիներն ու խնդիրները:

Հատկապես անցումային ժամանակաշրջանում են բարդանուժ տնտեսության վերակառուցման խնդիրները, եական է դաշնում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը պետական եկամուտների ձևավորման, տնտեսական իրավիճակի վրա: Որպես երկրի ֆինանսական անվտանգության բաղադրիչ, բյուջետային քաղաքականությունը պետք է նպաստի տնտեսության զարգացման ցանկալի տեմպերի ձևավորմանը, որի պայմաններում անհրաժեշտ նախադրյալներ կստեղծվեն սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական համակարգի կայունության ամրապնդման համար: Բյուջետային քաղաքականության կարևորությունը ընդգծվում հատկապես այն պատճառով, որ պետության համար նախնառաջառայում է որպես եկամուտների տիրապետման ու տնօրինման գործոն, երկրորդ, հանդես է գալիս որպես տնտեսական ու սոցիալակագործընթացների վրա ներգործության, պետության և հարկատուների միջև հակառակ կապի գործոն:

Ընդհանրապես ֆինանսական քաղաքականության իրականացման վերաբերյալ գոյություն ունեն որոշակի պահանջներ և սկզբունքներ, որոնց վրա կառուցվում է կոնկրետ երկրի հարկաբյուջետային համակարգը: Մասնավորապես որպես այդպիսին ընդունված է բավարարության սկզբունքը, ըստ որի տնտեսության հարկումը ուղղված պետական եկամուտների ձևավորմանը, պետք է բխի պետական ծախսերի իրականացման պահանջներից, բավարարի և բացասաբար չանդրադարձ արտադրության ծավալների վրա: Որոշակի ֆունկցիոնալ կախվածության պայմաններում այս սկզբունքը բնութագրում է հարկերի և բյուջեի, հարկերի և արտադրության ծա-

վալների փոխկապվածությունը, արտադրության նկատմամբ հարկային մեխանիզմի ունեցած ակտիվ դերը: Սակայն գործնականում այս սկզբունքի կիրառումը ոչ միշտ է հնարավոր: Մասնավորապես, Հայաստանում և անցումային փուլում գտնվող բազմաթիվ երկրներում դա գոեթե անլուծելի խնդիր է, քանի որ անհնար է գտնել այն սահմանը, որը կարելի լինի ընդունել որպես բավարարության օպտիմալ չափ: Դա կապված է բազմաթիվ պայմանների հետ, այդ թվում՝ հարկերի սահմանային դրույքաչափերի, հարկնան օբյեկտի ու բազայի, ինչպես նաև հարկման օպտիմալ մակարդակի ճիշտ ընտրության հետ: Այդ խնդրի լուծման համար շատ կարևոր է պետության պահանջմունքների չափի, բնակչության ու տնտեսավարող սուբյեկտների հարկերը վճարելու հնարավորության ճիշտ հաշվարկը, ինչը, իր հերթին, պայմանավորված է բազմաթիվ այլ գործուններով, որոնցից կարևորներն են երկրի տնտեսական զարգացածության մակարդակը, արտադրության ու տնտեսության ճյուղերի առանձնահատկությունները, բնակչության կենսամակարդակի ընդունված արժեքային չափը, շուկայական ենթակառուցվածքների ձևավորվածության աստիճանը և այլն:

Հայաստանը առանձնանում է տնտեսությունում առկա հիմնախնդիրների բազմազանությամբ, ինչը, ըստ Էության, անհնարին է դարձնում նշված հաշվարկների կատարումը և տվյալ սկզբունքի կիրառումը: Այլ երկրներում նույնպես նշված բոլոր չափանիշները բավարարող հարկաբյուջետային համակարգի ստեղծումը շատ բարդ է և գործնականում կիրառվում է դիմամիկ բյուջետային քաղաքականություն՝ սկզբունքների ընտրություն կատարելով կոնկրետ տնտեսական պայմաններից ելնելով:

Պլանային-կարգավորվող տնտեսությունից շուկայական հարաբերություններին անցման գործընթացի գլխավոր պահանջը գործունեության ազատականացումն է, որը անվերապահորեն ենթադրում է հարկաբյուջետային կարգավորման ձևերի փոփոխություն: Վերջինս միանգամից վերակառուցել հնարավոր չէ, իսկ առկա հրատապ հիմնախնդիրները լուծելու համար պետությունը ստիպված է նախապատվությունը տալ պետական եկամուտների հավաքագրման կարգավորման ֆիսկալ լծակներին, ինչպես դա տեղի է ունենում ՀՀ-ում: Հայաստանի տնտեսությունը կենտրոնացված համակարգի պայմաններում հանդիսանում էր միութենական համալիրի բաղկացուցիչ մաս, որտեղ ձևավորված ներքին արտադրատնտեսական կապերը

իրենց յուրահատկություններով չեն կարող համապատասխանել ընդհանուր համակարգի առանձնացած և տնտեսական նոր ձևավորվող հարաբերություններին: Պահանջվում էին նոր մոտեցում ներ, ինքնուրույն տնտեսական, ֆինանսական ու բյուջետային քաղաքականության իրականացում, ինչը սկսվեց 1992թ.՝ հարկաբյուջետային քաղաքականության կազմակերպման օրենսդրական հիմքերի ձևավորումով: ՀՀ-ում իրականացվող բյուջետային քաղաքականությունը որակական նոր հիմքերի վրա դրվեց 1997թ., երբ ընդունվեց «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը: Դրանով ինարավոր դարձավ ինչպես պետական այնպես էլ համայնքների բյուջեները կազմելու, հաստատելու, կատարելու, հաշվետվությունների և դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործընթացների կանոնակարգումը: Տվյալ օրենքով սահմանվեցին բյուջետային գործընթացին մասնակցող բոլոր օդակների մասին հիմնական հասկացությունները՝ բյուջետային հիմնարկ, բյուջետային վարկ, փոխատվություն, դրության և այլն հստակեցվեցին բյուջետային դասակարգման կազմը, բյուջետային օդակների կառուցվածքին առաջադրվող պահանջները: Օրենքը առաջին անգամ կանոնակարգեց բյուջետային համակարգի միասնությունն ապահովող սկզբունքները, որոնցում հստակ տեղ է տրվում միասնական տնտեսական ու քաղաքական հիմքին, ինչն արտահայտվում է գլխավորապես նյութական արտադրությունից, ձեռնարկատիրական այլ գործունեությունից, միասնական հարկային օրենսդրության շնորհիվ, բոլոր մակարդակների բյուջեների ֆինանսական ռեսուրսների ձևավորման մեջ: Գոյություն ունեցող միասնական իրավական հիմքը, բյուջետային դասակարգումը, հաշվառման հաշվետվությունների և բյուջեների կատարման միասնական մեթոդաբանությունն ու դրամական համակարգը ավելի են ամրապնդությունը բյուջետային քաղաքականության միասնականությունը:

Բյուջետային համակարգի միասնակությունը ուղեկցվում է համապատասխան բյուջեների ինքնուրույնությամբ. պետական ու տեղական ինքնակառավարման յուրաքանչյուր մարմին ունի եկամուտների սեփական աղբյուրները և դրանց օգտագործման ուղղությունների որոշման իրավունք: Գործնականում դա դրսերվում է նրանում, որ իշխանության յուրաքանչյուր մարմին ունի իր սեփական բյուջեն, որի կազմումը, հաստատումը և կատարումը ապահովում է ինքը, միաժամանակ ներառելով երկրի համախմբված բյուջեի մեջ՝ ինարավորությունը յուրահատկություններով համապատասխանացնելու համար:

Թյուն է ընձեռում որոշելու պետության կողմից կենտրոնացվող ֆինանսական ռեսուրսների ընդհանուր ծավալը, դրանց կենտրոնացման աստիճանը, վերլուծելու և պարզաբանելու զարգացման համաշափությունները և միտումները:

Հանրապետության տնտեսական վիճակը և վերջին տարիներին ձևավորված սոցիալ-տնտեսական իրադրությունը օբյեկտիվ ազդեցություն են ունեցել կիրառվող բյուջետային քաղաքականության վրա:

Առաջնակի պետք է նշել, որ հատկապես անցումային ժամանակշրջանում պետության կարևորագույն գործառույթներից մեկը արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացությունն է, ինչը մեր հանրապետությունում դեռևս ամբողջությամբ չի հաջողաբար կազմակերպված չէ: Ավելին, մինչև այժմ հստակ որոշված չեն այն սկզբունքնշակած չեն: Ավելին, մինչև այժմ հստակ որոշված չեն այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք պետք է դրված լինեն սոցիալական քաղաքականության հիմքում: Սոցիալական ոլորտի համար նախաքաղաքականության առաջին այդ էլ ոչ բավարար միջոցների հատկացումները պետք է խիստ մտահոգեն ոչ միայն գործադիր, այլ նաև օրենսդիր իշխանություններին: Նրանք պետք է հստակ գիտակցեն, որ անցումային տնտեսությամբ երկրներին բնորոշ է սոցիալական բազմաթիվ խնդիրների առկայությունը, որոնք հիմնականում դրսերվում են կենսամակարդակի կտրուկ անկման, գործազրկության, բնակչության եկամուտների նվազման, աղքատության աճի, բներացման ու մի շարք այլ ցուցանիշների միջոցով: Սոցիալական քաղաքականության խնդիրն է օրենսդրական հիմքերով երաշխավորել առողջապահության, կրթության ու մշակութային համակարգերի նորմալ գործունեությունը: Կարեւոր և իրատապ խնդիր է սոցիալական քաղաքականության հիմքում ընկած սկզբունքների և մոտեցումների հստակեցումն ու վերահստավորումը, որով նախադրյալներ կստեղծվեն այդ քաղաքականության արդյունավետության բարձրացման համար:

Ինչ վերաբերում է պաշտպանության նպատակներով բյուջետային հատկացումներին, ապա պետք է նկատել, որ օրենքի պաշտպանված հոդվածի պահանջների թերակատարումը ոչ միայն անթույլատրելի է, այլև բյուջետային օրենսդրության կոպիտ խախտում:

Վերլուծության արդյունքներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ բյուջեի գրեթե բոլոր ծախսային հոդվածների և որոշ ոչ առաջնային ծախսերի գերակատարման պայմաններում անհմատ է այս կամ

այն ծախսատեսակի կարևորումը: Միանշանակ է, որ ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը կարիք ունի լուր վերագնահատման ու վերահմատավորման՝ առանձնապես ծախսային հողվածների կառուցվածքային բարելավման և բյուջետային կարգապահության բարձրացման առումով: Դատուկ խնդիր է պետական բյուջեի դեֆիցիտի և դրա ծածկման աղբյուրների վերլուծությունն ու գնահատումը՝ կապված ոչ միայն պետական պարտք սպասարկման ծախսերի առաջիկայում սպասվող վարկերին գերազանցելու, արտաքին վարկերի գծով ցածր ֆինանսավորման, այլև արտաքին ֆինանսավորման աղբյուրներից պակասուրդի ծածկման համար միջոցների չստացման պայմաններում այլընտրանքային եկամուտներ ունենալու հետ:

Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման գործում բյուջետային քաղաքականության դերը գնահատելիս, վերը շարադրվածից ելնելով, կարելի է միանշանակ պնդել, որ հիմնական խնդիրը զարգացման համալիր ծրագրի բացակայությունն է, և ժամանակն է, որ հանրապետությունն ունենա օրենսդրորեն հաստատված սոցիալ-տնտեսական ծրագիր՝ կարճատև և երկարաժամկետ, կտրվածքով: Նման ծրագրի մշակումը անհրաժեշտ պայման է երկրի հետագա դինամիկ զարգացումն ապահովելու, սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղությունները որոշելու, ծրագրային բյուջետավորում իրականացնելու համար:

Սոցիալ-տնտեսական զարգացման օրենսդրութեն հաստատված ծրագիր ունենալուն զուգընթաց, անհրաժեշտություն կառաջանա իրականացնել հարկաբյուջետային բարեփոխումներ՝ ուղղված այնպիսի միջավայրի ձևավորմանը, որը անհրաժեշտ նախադրյալներ և ֆինանսական հիմքեր կստեղծի տնտեսական աճի բարձր ու կայուն տեմպերի, ներդրումների իրականացման, տնտեսության արտահանող ճյուղերի զարգացման համար:

Գործնականում հարկաբյուջետային քաղաքականության ծրագիրը պետք է ընդգրկի իշխանության մարմինների փոխհամաձայնեցված գործողությունների այն ամբողջությունը, որն ուղղվելու է բյուջետային եկամուտների ընդհանուր կառուցվածքի մշակման, հարկային կարգավորման, ֆինանսական ռեսուրսների ծախսման ուղղությունների և գերակայությունների սահմանման, դրանց հիմնավորվածության գնահատման նպատակներին: Նման ծրագրի մշակումը պետք է հիմնված լինի մասնագիտական կանխատեսումների,

հարկագանձման գործընթացի վերաբերյալ հաշվետու և օպերատիկ տվյալների վերլուծության, պետական ծախսերի արդյունավետության գնահատման վրա: Հանրապետությունում առկա հիմնախնդիրներից շատերը հնարավոր կլինի լուծել ծրագրային քաղաքականության իրականացման պայմաններում, երբ բյուջետային հարաբերությունները արմատական վերակառուցման կենթարկվեն նախնառաջ արտադրության ոլորտում, և բյուջետային ֆինանսավորութական արտադրության ոլորտում, և բյուջետային ֆինանսավորումը կփոխարինվի սուբսիդավորման համակարգով:

§2. ՀԱՐԿԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՎԿԱՆ ՀԱՏԿԱՆԻԾ

Պետության ծագման գործընթացի ուսումնասիրությունը ունի ոչ միայն ճանաչողական, այլև քաղաքական-գործնական նշանակություն: Այն հնարավորություն է ստեղծում խորապես հասկանալ պետության սոցիալական բնույթը, նրա առանձնահատկությունները և հիմնական գծերը, ուսումնասիրել և վերլուծել պետության ծագման պատճառները և պայմանները, ճշգրտել նրան ներհատուկ գործառնությունները, որոշել վերջիններիս տեղը, դերը և նշանակությունը հասարակական կյանքում:

ՊԵՏՈՒԹՅԱՆ և իրավունքի հիմնահարցերով գբաղվող իրավաբանական մուտքագրության մասին օրենքը պահանջում է այսօր, պետության հասկացության, նրա հատկանիշների և ամենօրյա գործունեության ձևերի հարցում միասնական կարծիք գոյություն չունի:

Մարդկային հասարակության պատմության բոլոր ժամանակներում տարբեր երկրների քաղաքական կյանքում տեսության և պրակտիկայի առանցքը եղել և այսօր էլ մնում է պետությունը որպես ինստիտուտ, որը ծագման պահից էապես տարբերվել է ինչպես իրենից առաջ գոյություն ունեցած պատմական կազմավորումներից, այնպես էլ ոչ պետական ինստիտուտներից և կազմակերպություններից:

Ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում առօրյա խնդիրների օբյեկտիվ գոյությունը հրամայաբար պահանջ է առաջադրում խորը, բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա վեր հանել պետությունը քնութագրող այն առանձնահատկությունները, խնդիր-

ները և գործառնությունները, որոնք ոչ միայն լուս կսփռեն նրա անցյալի ստվերոտ կողմերը լուսաբանելու, այլև հասարակությա իրավաբարձրական կյանքում վերջինիս զբաղեցրած տեղի և դեռ անհրաժեշտությունը պարզելու հարցում:

Անցյալ և ներկա ժամանակների գիտական միտքը առաջ է քաշե պետության ծագման մի քանի տեսություններ: Դրանցից հիմնական ներն են՝ բնական-իրավական, օրգանական, հոգեբանական, բռնության և տնտեսական տեսությունները, որոնք, ինչպես ժամանակից այնպես էլ այսօր, գտնվում են իրավաբան-գիտնականների ուշաղ րության կենտրոնում, և այդ բոլորը միասին նպաստում են պետության ծագման պատճառների և նրան ներհատուկ հատկանիշներ լուսաբանմանը:

Իրավագետների շրջանում պետության, նրա հիմնական հատկանիշների և պետական իշխանության դրսերման հիմնախնդիրներ հարցում անառարկելիորեն ընդունվում են պետության այնպիս հատկանիշներ, ինչպիսիք են՝

ա) քաղաքական իշխանության միասնական տարածքային կազմակերպումը,

բ) հասարակության կառավարման հատուկ ապարատի առկայությունը բնականոն կենսագործունեություն ապահովելու համար,

գ) իշխանության ինքնիշխան կազմակերպումը (սուվերենությունը),

դ) հասարակական կյանքի իրավական կազմակերպումը:

Ժամանակից իրավագետների մի մասը պետության վերը իիշատակված հիմնական հատկանիշների շարքում, իհմք ընդունելու արենելը և անտիկ աշխարհի պետությունների ծագման և գոյատևման հարուստ փորձը, որպես հիմնական հատկանիշ առանձնացնում է հարկերի առկայությունը, առանց որի պետության գոյությունը հատկապես այսօր կարող է կասկածի տակ առնվել:

Պետության ծագման և զարգացման պատմությունը վկայում է, որ ծննդյան առաջին օրերից հարկերը՝ որպես «մայրական կաթ», սնուցել են պետությանը, ապահովել վերջինիս զարգացումը, արտահայտել նրա հզորությունը: Զարգացման որոշ աստիճանում հարկերը դրսերմանը են ոչ միայն ներքին, այլև պատերազմի հետևանքով գե-

րեվարկած պետությունների հետ փոխհարաբերություններում՝ որպես հարկահանման արտաքին գործառույթ, պետական միասնական իշխանության անբաժան մաս, որը, հասկանալի պատճառներով, իր տեղը չի գտնել իշխանությունների տարանջատման առաջին դրսերման և, որպես պետության ֆինանսական իշխանության դրսերման, այսօր ուշադրության չի արժանանում:

Իրավագետության մեջ պետության հատկանիշների համակարգում առանձնացնում են հարկերը և տուրքերը, որոնք վկայում են, որ պետությունն իր ծագման պահից իրենից ներկայացրել է նյութական, արտադրական, տնտեսական, բազիսային հարաբերություններ, որոնք հանդիսանում են մարդկանց կենսագործունեության աղբյուր, և ժամանակի ընթացքում հասարակության թույլատվության և հասարակության աջակցության շնորհիվ ձևավորված պետական իշխանության միջոցով վեր է ածվում նրա քաղաքական կազմակերպության և իրեն ներհատուկ ինստիտուտների միջոցով իրականացնում է հասարակության պետական և քաղաքական կառավարում:

Փոխանակային համարժեքի դրամական և ֆինանսական հարաբերությունների ըստ հասարակության զարգացման պատմական տիպերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ պետությունը սաղմնավորման պահից հանդես է եկել որպես բազիսային արտադրատնտեսական հարաբերությունների համակցություն, որը զարգացնած որոշ աստիճանում, հատկապես հասարակության շերտավորմանը զուգահեռ, ձեռք է բերել քաղաքական, ապա՝ իրավական բնույթ:

Պետության, նրա հիմնական հատկանիշների, գործառությների և հատկապես իշխանությունների տարանջատման մասին ժամանակից իրավական տեսությունները, ինչպես նաև քաղաքակերպ աշխարհում նրա դերն ու նշանակությունը խոսում են այն մասին, որ պետության հիմնական հատկանիշներից մեկի՝ հարկերի, տուրքերի և պետության օգտին կատարվող պարտադիր վճարումների գոյությունը հրանայաբար պահանջում է պետական իշխանության ձերի շարքում առանձնացնել, ճանաչել և ընդունել պետության ֆինանսական իշխանությունը: Առանց նրա անհնար է ներկա աշխարհում պատկերացնել պետություն, խոսել նրա գոյության, առավել ևս՝

հզորության մասին:

Պատմական էքսկուրսները վկայում են, որ հարկերը գոյություն են ունեցել շատ վաղ ժամանակներում՝ դեռևս մարդկության քաղաքակրթության արշալույսին: Ի սկզբանե հարկման հիմքում ընկած էին պետության կողմից մշակված որոշակի սկզբունքներ և գործութին հարկերի հավաքման և օգտագործման որոշակի մեթոդներ:

Հին Հունաստանում գործում էր իր ժամանակի համար մշակված հարկային համակարգ: Գանձվում էր գույքահարկ, որը մուտք էր ար վուն գանձարան և նախատեսված էր բացառապես ռազմական ծախ սերի ծածկման համար: Աթենական պետությունում հարկման էին են թարկվում նրա տիրություններում բնակվող օտարերկրացիները: Ար տահանվող և ներմուծվող ապրանքների համար գանձվում էր մաք սատուրք: Բացի այդ, հավաքվում էին բազմաթիվ հարկեր շուկաներից, ինչպես նաև՝ դատական և այլ տուրքեր:

Հին Հռոմում գանձվում էր գույքահարկ (*tributum civium*) և մաքսա տուրք: Գույքահարկը, ինչպես և Հունաստանում, համարվում էր ար տակարգ հարկ և օգտագործվում էր բազմաքանակ զորքը պահելու համար: Հպատակ պրովինցիաների բնակչությունը մուծում էր հատուկ հարկ՝ «ստիպենդիում», որի հաշվին ֆինանսավորվում էին այլ տարածքներում տեղակայված զորքերը: Կայսրական ժամանակաշրջանում մտցվեցին հողի, աղի և տարբեր ապրանքների վաճառքի համար հարկեր և բազմապիսի տուրքեր:

Արևելյան ստրկատիրական պետություններում չկար տնտեսության որևէ ճյուղ, որ չհարկվեր ուղղակի և անուղղակի հարկերով Հարկվում էին ապրանքների արտահանումը և ներմուծումը, տեղափոխումը, վաճառքը և գնումները, վարձակալությունները, պայմանագրերը և բազմաթիվ առևտրային գործարքները: Հարկեր էին սահմանված անասունների, ամբարտակների, կամուրջների, ճանապարհների և ջրանցքների կառուցման համար, գանձվում էին հարկեր գույքից, անհատական հարկ՝ տղամարդկանցից: Գանձարանի կարևոր եկամտային աղբյուր էր համարվում բնամթերային հարկը, ներառյալ հողի ռենտան (քանի որ հողը պատկանում էր պետությանը), ինչպես նաև դրամական գանձումները պտղատու և խաղողի այգիներից: Հարկերի մի մասը վճարվում էր բնամթերքով, իսկ մյուս

չ այլ՝ դրամով:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հարկերը բոլոր ժամանակներում անփոխարինելի միջոց են եղել պետական ապարատի պահպանման համար: Ի հաշիվ հարկերի են ծևավորվում ֆինանսավորության միջոցները, առանց որի ոչ մի պետություն չի կարող իրականացնել իր գործառույթները:

Իրավագիտության ոչ մի ուղղություն չի ժիստում այն կարևոր դերն ու նշանակությունը, որ ունեն հարկերը յուրաքանչյուր ազգի ու պետության կյանքում:

Պետության կողմից հասարակության օգտին համախառն ներքին արդյունքի որոշակի մասից պարտադիր վճարի տեսքով գանձումը արդյունքի ուղղությունը: Այսպիսով, հարկերի տնտեսական բուկազմությունն արտահայտվում է պետական ֆինանսների վանդակությունն արտահայտվում է պետական ֆինանսների ծևավորման առնչությանը տնտեսավարող սուբյետների, քաղաքացիների և պետության իրավապահ փոխհարաբերություններում:

Քաղաքացիական հասարակության զարգացումը, իրավունքների և պարտականությունների ծավալով և հասարակական տնտեսավարման նոր ձևերի կիրառմամբ, արտահայտում է հասարակության անմիջական մասնակցությունը և միջամտությունը պետության տնտեսական կառավարմանը, որն իրականացվում է բաժնետիրական և ապահովագրական ընկերությունների, բանկերի և սեփականության այլ ձևերի վրա հիմնված մարմինների միջոցով, ինչն էլ, իր հերթին, աստիճանաբար առաջ է բերում հարկային բեռի առավել համամասնական բաշխում բնակչության տարբեր շերտերի միջև՝ վճարունակությանը համապատասխան:

Այս գործընթացն իր դրսեւորումն է գտնում ֆինանսահրավական տեսական գրականության մեջ՝ ուղղված հարկերի հասկացության իրավական մշակմանը: Այսպես, ֆրանսիացի իրավաբան Պոլ Գոդմեն այն կարծիքին է, որ «Հարկը պետական իշխանության կողմից պարտադիր կարգով գանձվող դրամական միջոց է, որը նպատակ ունի ծածկել հասարակության ծախսերը և բաշխել այդ ծանրությունը քաղաքացիների միջև նրանցից յուրաքանչյուրի հնարավորությանը համապատասխան»:

Ներկայումս աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրներում, պետու-

թյան տնտեսական դերի ու գործառույթների ընդարձակմանը զուգահեռ, մեծանում է հարկերի դերն ու նշանակությունը: Զուտ ֆինանսական նպատակ հետապնդելու հետ միաժամանակ, հարկերը սկսում են հետապնդել նաև «սոցիալ-քաղաքական» նպատակ:

Հարկային համակարգը իր հիմքում միշտ էլ ունեցել է դասակարգային և խմբային շահեր, հանդես է եկել որպես սոցիալական ուժեղի, նրանց պայքարի և փոխզիջումների վառ դրսերումներից մեկը։ Պայքարը հասարակության ունեոր և չունեոր խավերի, հողատերերի և կապիտալիստների միջև արտահայտվել է հարկային համակարգի ծեավորման օրենսդրության մեջ։ Եկամուտների հարկման համամասնության ընդհանուր սկզբունքը կրել է բազմաթիվ կերպարանափոխումներ, որոնք չեն նպաստել միասնական լուծումների սահմանմանը։ Իրավագիտական միտքը և հարկային օրենսդրությունը այսօր էլ ուղղված են հարկման օպտիմալ սկզբունքների մշակմանը։

Որպես պետության հիմնական հատկանիշ՝ հարկերին ուղղված տնտեսագիտական և իրավական տեսություններում այն գաղափարն է պաշտպանվում, թե հարկի վճարումը վկայում է անձի ազատության աստիճանը պետության շրջանակներում:

Հարկերի հետ կապված ժամանակակից գիտական տեսությունները, կարծում ենք, ելնում են միայն պետության շահերից և չեն կարող բավարար հիմք հանդիսանալ հարկերի մասին օրենքների մշակման համար: Այդ է պատճառը, որ այսօր ֆինանսահրավական գրականության մեջ ավելի մեծ ուշադրության են արժանանում այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են, օրինակ՝ ո՞վքեր են հարկման սուբյեկտները, ի՞նչ իրավական կապի մեջ են արտադրության և բաշխման գործընթացների հետ (որոնք խոսում են սեփականության ձևի և հարկերի միջոցով սեփականատիրոջ փոփոխության ու իրավական պատասխանատվության մասին):

Իրավական պրակտիկան վկայում է, որ հարկերի գործող համակարգը և օրենսդրությունը հենված են հարկման առաջադեմ վարչական մեթոդի վրա, երբ հարկման ծանրությունը աճում է անկախ ունեցվածքից և եկամուտներից: Գործնականում մենք տեսնում ենք այդ երկու մոտեցումների վրա կառուցված ժամանակակից հարկային համակարգեր, որից անմասն չէ մեր հանրապետությունը:

ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐԵՍՈՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

§1. ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐԵՍՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՍՈՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հարկման պրակտիկայի տեսական հիմնավորման փորձերը իրենց արտացոլում են գտել հարկային համակարգերի վերաբերյալ տեսություններում: Երկար ժամանակ տնտեսագիտության մեջ իշխող էր միայն հարկերի դերի մասին դասական ուղղությունը: Պետության տնտեսական հիմքերի ամրացման նպատակով առաջին անգամ Ա. Սմիթի կողմից առաջ քաշվեցին հարկման չորս հիմնական սկզբունքներ՝ հավասարաչափություն, որոշակիություն, վճարման հարմարավետություն և էժանություն:

Դասական ուղղության ներկայացուցիչ Ռ. Պետտին, Ժ. Սեյնը և անգլիացի տնտեսագետներ Ռ. Ոիկարդոն, Ջ. Միլը տնտեսությունը համարում էին կայուն և ինքնակարգավորվող համակարգ, որտեղ պահանջարկը ծնունդ է առաջարկ, իսկ դրանցից որևէ մեկի ավելցուկի պայմաններում տեղի է ունենում ինքնահավասարակշռություն՝ տնտեսության պակասուրդային ճյուղերում արտադրողների տեղաշարժի ճանապարհով: Այդ պահանջարկը հարկերը խաղացել են միայն պետության բյուջեի եկամուտի աղբյուրների դեր, իսկ վիճաբանությունը առաջացել է դրանց գանձման արդարացիության սկզբունքների (հավասարաչափ կամ պրոգրեսիվ) և հարկաբյուջենտային պահանջմունքներով պայմանավորված գանձման չափի շուրջ:

Դասարակական կյանքում, տնտեսական հարաբերությունների բարդացման և օրյեկտիվ պարբերաշրջանային գործընթացների հետ կապված, անհրաժեշտություն առաջացավ ճշգրտումներ մտցնել հարկերի մասին դասական ուսմունքի մեջ՝ պետության դերի

լուանձնացման, տնտեսական գործընթացների վրա նրա ազդեցույան, ինչպես նաև հարկման սոցիալ-տնտեսական սահմանների լարգավորման հարցում: Առաջացան նոր գիտական տեսություններ, որոնցից ներկայումս կարելի է առանձնացնել տնտեսական մտքի որկու հիմնական ուղղություններ՝ քեյնյան և նոր դասական:

Անգլիացի տնտեսագետ Ջ. Քեյնը հայտարարեց, որ շուկայական տնտեսության «ինքնակարգավորիչը», ըստ Ա. Սմիթի՝ «անտեսանելի ծեռքը», որն ուղղորդում է առանձին անհատների գործունեությունը, ստիպում է նրանց ծառայել «հասարակության շահերին», վերջականապես և անշրջելիորեն սպառել է իրեն: Այդ պատճառով ճգնաժամից դուրս գալու ելքը նա տեսնում է տնտեսությանը պետական միջամտության մեջ: Այդ ամենին նա նայում էր «որպես միակ գործնական հնարավոր միջոցի՝ խուսափելու համար գոյություն ունեցող տնտեսակարգի ամբողջական փլուզումից»:

Ըստ Ջ. Քեյնսի, տնտեսական աղետների պատճառը «ամբողջական պահանջարկի» անբավարությունն է: Իր տեսական հիմնավորումներում նա ելնում էր զուտ հոգեբանական հարաբերություններից: Նա սուբյեկտիվ-հոգեբանական դպրոցի կատեգորիաները տարածեց մակրոտնտեսական ցուցանիշների վրա՝ օգտագործելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ներդրումների սահմանային արդյունավետություն», «կուտակման և սպառման նկատմամբ սահմանային հակում» և այլն:

Ջ. Քեյնսը գտնում էր, որ պետությունը կարող է նպաստել վճարումակ պահանջարկի և արտադրության ծավալի միջև համապատասխանության ստեղծմանը ֆինանսական այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսիք են պետական ծախսերը, փոխատվական տոկոսը և հարկերը: Նա այն կարծիքին էր, որ «սպառելու ձգտման վրա կարող են ազդել կապիտալի արժեքի անկանխատեսելի փոփոխությունները, ինչպես նաև լուրջ փոփոխությունները տոկոսադրույթի և հարկային քաղաքականության մեջ»:

Ջ. Քեյնսը կողմնակից էր պրոգրեսիվ հարկմանը: Նրա տեսության կարևոր պայմաններից մեկը համարվում է տնտեսական աճի կախվածությունը բավարար խնայողություններից, եթե հասարակությունը ունի աշխատանքային լրիվ զբաղվածություն: Եթե այդ չկա, ապա մեծ չափի խնայողությունները խանգարում են տնտեսության զարգացման աճին: Այստեղից հետևում է, որ հավելյալ խնայողությունները անհրաժեշտ են գանձել հարկերի օգնությամբ:

Զ. Քեյնսը անդում էր, որ «հիմնական օրենքը», որի գոյության մեջ մենք կարող ենք համոզված լինել, այն է՝ որ մարդիկ հակված են, որպես կանոն, մեծացնել իրենց սպառումը՝ եկամտի աճի հետ, բայց ոչ այն չափով, ինչ չափով աճում է եկամուտը։ Այս իրողությունից հանգում է այն հետևությունը, որ անհրաժեշտ է պետական միջամտություն, որն ուղղված կլինի հարկերի օգնությամբ խնայողություններում ներդրված եկամուտների գանձմանը և այդ միջոցների հաշվին ներդրումների և ընթացիկ պետական ծախսերի ֆինանսավորմանը։

Հարկերի վերաբերյալ հիշատակված ուսմունքները նկատելի ազդեցություն ունեցան մեր հանրապետությունում ֆինանսների մասին գիտության և օրենսդրության զարգացման վրա:

Հարկային քաղաքանության տնտեսական ուսմունքը հիմնվում է ազատ մրցակցության և բնական առավելությունների վրա:

Յարկային համակարգի ժամանակակից տեսությունը ունի երկու ուղղություն՝

1. առաջարկի տնտեսության տեսություն,
 2. մոմետարիզմ:

Առաջարկի տնտեսության տեսությունը ղեկավարվում է այն գաղափարով, որի եռւթյունը սահմանային հարկային դրույքների կրծատումն է, որով փոքրանում է նաև հարկման պրոգրեսիվությունը:

Առաջարկի տնտեսության տեսությունը նախատեսում է հարկերի իջնցում և կազմակերպություններին հարկային արտոնությունների տրամադրում, որովհետև այդ ուղղության կողմնակիցների կարծիքով բարձր հարկերը խանգարում են ձեռնարկատիրական նախաձեռնությանը և արգելակում արտադրությունում ներդրումային, նորացման և ընդլայնման քաղաքականությունը:

Այս տեսության մյուս կարևոր տեսանկյունը պետական ծախսերի պարտադիր կրծատումն է: Առաջարկի տնտեսության տեսության գլխավոր դրույթն այն է, որ շուկայի լավագույն կարգավորիչը ինքը շուկան է, հետևաբար բարձր հարկերը խանգարում են նրա նորմալ գործունեությանը:

Հարկային դրույքաչափերի մակարդակի ձևավորման ընդհանուր օրենքը հոչակում է, որ հարկային լայն բազան թույլ է տալիս ունենալ հարկման ոչ մեծ դրույքներ, և, ընդհակառակը, առանձին տեսակի հարկերի բավականաչափ նեղ բազան պարտադիր ենթադրում է դրանց բարձր դրույքներ:

Յարկային դրույքաչափերի աճը միայն որոշակի սահմաններում է

Ապահովում հարկային մուտքերի աճ, որից հետո այդ աճը դանդալում է, և նկատվում է բյուջեի եկամուտների կամ լողացող կրծառում, կամ կտրուկ անկում: Այսպիսով, եթե հարկային դրույքը հասում է որոշակի մակարդակի, նվազում է ծեռնարկատիրական նախում և որոշակի մակարդակի, փոքրանում են եկամուտները, որի արդյունքում հարկությունները, փոքրանում են եկամուտները, որի արդյունքում հարկությունների մի մասը տնտեսության լեզաւ սեկտորից անցնում է ստվերային:

Տնտեսվարող սուբյեկտների գործառական հալվայրը դրական է Տնտեսվարող սուբյեկտների ուսումնասիրությունները վկայում են, որ «ստվերաբերությունների ուսումնասիրությունները վկայում են, որ «ստվերաբերությունների ուսումնասիրությունները վկայում են, որ «ստվերաբերային տնտեսության» զարգացումը ունի հետադարձ կապ հարկա- յին համակարգի հետ, այսինքն՝ հարկերի մեծացումը մեծացնում է յին համակարգի հետ, այսինքն՝ հարկերի մեծացումը մեծացնում է «ստվերային տնտեսության» չափերը, հարկերից «լեզալ» և «անլե- զալ» խուսափումը, որի դեպքում ստացված եկամուտների մեծ մա- սր չի հայտարարվում:

Հարկերի իշեցումը խթանում է տևտեսության զարգացմանը. Դա հանգեցնում է նրան, որ պետության եկամուտները աճում են ոչ թե հարկային դրույքի և հարկային բեռի մեծացման, այլ հարկային բացալի ընդլայնման հաշվին:

Պատմական էքսկուրսները վկայում են, որ հարկային ուսական գի հիշատակված ուսմունքի երկու ուղղությունների որոշ դրույթներ օգտագործվել են ԱՄՆ-ի կառավարության կողմից 1920-60-ական թվականների հարկային բարեփոխումների իրականացման ժամանակ, իսկ 1980-ական թվականներից կիրառվում են որոշ փոփոխություններով:

Մոնետարիզմի տեսության հությունը ուժագույն է Այլա, որ պատ-
քյան դերը պետք է սահմանափակել միայն այն գործողության մեջ,
որը բացի նրանից ոչ ոք չի կարող իրագործել: Դա շրջանառության
մեջ փողի զանգվածի կարգավորումն է: Տնտեսության ելակետային
կարգավորման մոնետարիզմի տեսության հիմնական միջոցներից
մեկը համարվում է փողի զանգվածի և բանկային տոկոսադրույթնե-
րի փոփոխությունը՝ այն հիմնավորմամբ, որ պետությունը յուրա-
դասը տարի ավելացնում է իր ծախսերը՝ առաջ բերելով լրացու-
քանչյուր տարի ավելացնում է իր ծախսերը՝ առաջ բերելով լրացու-
քից սղաճ: Պետությանը չպետք է թույլ տալ մասնակցելու հասարա-
ցիք սղաճ: Պետությանը չպետք է թույլ տալ մասնակցելու հասարա-
ցիք սղաճ: Արտադրության ծավալների, կության հարստության ստեղծմանը, արտադրության ծավալների,
գբաղվածության և գների կարգավորմանը: Սակայն նա կարող է օգ-
գայի զանգվածի կարգավորմանը՝ շրջանառությունից հանելով

փողի ավելցուկային ծավալը, եթե՝ ոչ փոխառությունների, ապա հարկերի օգնությամբ:

Մոնետարիզմի տեսությունների հիմնական գաղափարը սղածի տեմպերի իջեցման մեթոդների որոնման և արտադրողների ու շուկայում սպառողական պահանջարկը ձեւվորող՝ բնակչությանը հարկային քազմաթիվ արտոնությունների տրամադրման մեջ է: Մոնետարիզմը՝ որպես նոր դասական ուղղություն, ճիշտ է, ճանաչում և գործնական կիրառում գտավ, սակայն լրիվ չփոխարինեց տնտեսության կարգավորման քեյնսյան մեթոդին: Քեյնսյան տեսության զարգացման մեջ այսօր առաջացել են նոր հոսանքներ, տեղի են ունեցել նոր դրսերումներ՝ դասական որոշ ուղղությունների միացությամբ:

Հարկային համակարգերի վերաբերյալ տարբեր հեղինակների հետազոտությունները, ինչպես նկատում ենք, տարբերվում են կոնկրետ կիրառական բնույթով, քանի որ նրանց կողմից մշակված տեսական դրույթները ավանդաբար հանդես են գալիս որպես տարբեր երկրների ֆինանսական օրենսդրության հարկաբյուջետային քաղաքականության հիմք: Տեսական վեճերը տեղի են ունեցել ոչ այնքան հարկերի՝ որպես տնտեսական կատեգորիայի շուրջ, որի օբյեկտիվ գոյության և անհրաժեշտության հարցում բոլորը եղել են համախոհ, որքան տնտեսությունում նրանց ունեցած դերի վերաբերյալ:

Համաշխարհային տնտեսավարման փորձը ցույց է տալիս, որ, որքան էլ տարածված լինեն շուկայական ինքնակարգավորման մեթոդները, որքան էլ մեծ լինի տնտեսության մեջ մասնավոր սեկտորի բաժինը, երկրի սոցիալ-տնտեսական կյանքում պետությունը հանդես է գալիս ոչ որպես երկրորդական, այլ գլխավոր դերակատար:

Ժամանակակից աշխարհում տնտեսության պետական կարգավորումը նույնականացնելու և երկու հիմնական ուղղություններով՝ քեյնսյան և մոնետարիստական:

Քեյնսի կողմնակիցները գտնում են, որ ազատ շուկան ունի գենետիկական ախտ՝ կայուն տնտեսական զարգացում ապահովող մեխանիզմի բացակայություն։ Ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկը առանձնացնում են որպես կարգավորման որոշիչ գործոն։ Պահանջարկի խթանման գլխավոր գործիք է համարվում ներդրումների խրախուսումը։

Մոնետարիստական ուսմունքը տնտեսական գործընթացների կարգավորման հիմնական գործիք է համարում դրամաշրջանառությունը, իսկ փողը դիտվում է որպես որոշիչ գործոն: Այս ուսմունքին

ինիատուկ են երեք առանձնահատկություններ.

1. Ծուկան մրցունակ է:
 2. Մրցակցության համակարգը ապահովում է մակրոտնտեսության կայունության բարձր մակարդակ:
 3. Տնտեսական գործունեության մեջ անցկացվում է պետության մշակույթի նվազագույնի հասցնելու կուրս:

Առաջարկի խթանման տիպիկ միջոց է համարվում եկամտահար-
կի կրծատումը, որն իջեցնում է արտադրական ծախսերը, ինարավո-
րություն է տալիս միջոցներն ուղղել անհրաժեշտ մասնագիտու-
թյունների ձեռք բերմանը, աշխատատեղերի ընդլայնմանը, աշխա-
տավարձի ֆոնդի բարձրացմանը, ձեռներեցների համար նպաստա-
վոր պայմանների ստեղծմանը:

§2. ՀՀ ՀԱՐԿՎՅԻՆ ԶԱՂԱՋՎԿՎԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԱԿՈՐՍՎԱՆ ԻՐԱՎԱԿՎԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Այսօր մեր հանրապետությունում շուկայական տնտեսվարման պայմաններում պետական կարգավորման դերն ավելի մեծ է, քան արդեն ձևավորված շուկայական տնտեսությունում: Այն ունի երկու հիմնական պատճառ: Նախ՝ այս փուլում շուկան գտնվում է ձևավորման գործընթացում և նրա ինքնակարգավորման հնարավորությունները բարձր չեն, իետևաբար անհրաժեշտ է պետության առավել ակտիվ միջամտություն տնտեսական գործընթացներին: Երկրորդ, անցումը վարչականացնելու շուկայականից շուկայականին ունի նպատակային բնույթ և իրավական կարգավորում: Պետությունը կարգավորում է անցման գործընթացը, խթանում է շուկայական ենթակառուցվածքների ձևավորումը և դրանց համար ստեղծում բնականոն գործունեության պայմաններ:

Պետության դերը տնտեսությունում կրնկրետացվում է տնտեսական-կազմակերպական գործառույթներում: Կարելի է առանձնացնել պետության կարգավորող գործառույթների երկու խումբ: *Առաջինը՝* շուկայի արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծման, *երկրորդը՝* շուկայական կարգավորիչների գործողությունը լրացնող և ճշգրտող գործառույթներն են:

Առաջին խմբին են դասվում շուկայական տնտեսության գործունեության օրենսդրական բազան ապահովող գործառույթները, ինչպես նաև շուկայական միջավայրի հիմնական շարժիչ ուժի՝ մրցակցության պաշտպանության և խթանման գործառույթները:

Երկրորդ խմբին են դասվում եկամուտների վերաբաշխման, ռեսուրսների բաշխման ճշգրտման, տնտեսական կայունության և աճի խթանման գործառույթները:

Բնակչության եկամուտների վերաբաշխման հիմնական միջոցներ են համարվում անձնական եկամուտների պրոգրեսիվ հարկումը և տրամսֆերտային համակարգի օգտագործումը: Դարկման պրոգրեսիվության զգալի բարձրացումը չեզոքացնում է բարձր եկամուտներ ստանալու խթանները, դրանով հանդերձ՝ բարձր արտադրողական աշխատանքի և ներդրումների նկատմամբ խթանները: Այն միաժամանակ նպաստում է երկրից դուրս կապիտալի հոսքին, որն իր հերթին բացասաբար է անրադարձում ազգային տնտեսության զարգացման վրա:

Տնտեսության զարգացման ներկա փուլում, երբ առաջնահերթ ննդիր է դառնում ազգային տնտեսության վերածնունդը, ել ավելի է կարևորվում տնտեսության պետական կարգավորման դերը: Այս առումով մոնետարիստական միջոցառումները դառնում են տնտեսական աճը արգելակող գործուներ:

Այս փուլում պետության հիմնական խնդիրներն ու գործառույթները պետք է լինեն.

► ընդհանուր օրենսդրական դաշտի ստեղծումը, որի նպատակն է շուկայական տնտեսության գործունեության իրավական կարգավորումը,

► տնտեսության ենթակառուցվածքի հիմնական բաղադրամասերի, բնական մենաշնորհների, քաղաքական, տնտեսական և ֆինանսական առումով հատկապես կարևոր արտադրությունների (մեր հանրապետության համար՝ ռազմական արտադրություն, հանքարտադրություն, թանկարժեք մետաղների, ադամանդի, ալկոհոլային խմիչքների որոշ տեսակների արտադրություն) ոլորտում ուղղակի պետական հսկողության սահմանումը և կառավարումը,

► առանցքային նշանակություն ունեցող ներդրումային, կառուցվածքային-տեխնոլոգիական ծրագրերում՝ լրիվ կամ մասնակի ֆինանսավորման միջոցով տնտեսական երաշխիքների, արտոնյալ վարկերի և ֆինանսական աջակցության այլ ձևերի տրամադրումը,

► մակրոտնտեսական կարգավորման այնպիսի գործիքների ակտիվ օգտագործումը, ինչպիսիք են հարկերը, տուրքերը, բանկային տոկոսադրույթը, գների հակամենաշնորհային վերահսկումը, դրամաշրջանառության կառավարումը և այլն,

► արտաքին տնտեսական ճկուն քաղաքականության իրականացումը՝ ուղղված միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում երկրի ինտեգրմանը, ազգային տնտեսության անվտանգության պաշտպանությանը և երկրից դուրս կապիտալի հոսքի նվազեցմանը,

► սոցիալական քաղաքականության իրականացումը:

Նշված գործառույթների իրականացման և խնդիրների լուծման նպատակով պետությունը մշակում է տնտեսության իրավական կարգավորման մեթոդների և նղանակների համակարգ: Այդ համակարգի կարևոր լծակ է համարվում հարկման մեթոդը և ֆինանսական ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության վրա: Այսպիսով, շուկայական տնտեսությանը բնորոշ տնտեսական և իրավական

կարգավորիչների՝ հարկման, վարկավորման և ներդրման միջոցով պետությունը խթանում է տնտեսական գործունեության այն ցանկալի տարբերակների ընտրությունը, որոնք բավարարում են հասարակական պահանջները:

Իրագործելով տնտեսական և իրավական կարգավորման նեթողները, պետությունը, որպես կանոն, իր առջև դնում է հետևյալ հիմնական նպատակները.

1. կայուն տնտեսական աճ,
2. ապրանքների և ծառայությունների կայուն գներ,
3. աշխատունակ բնակչության առավելագույն զբաղվածություն,
4. բնակչության եկամուտների որոշակի նվազագույն մակարդակ,
5. քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության համակարգի ստեղծում,
6. արտաքին տնտեսական գործունեության հավասարակշռություն:

Պետության իիշատակված ներքին և արտաքին գործառույթների միաժամանակյա իրականացումը անհնար է: Օրինակ, եթե գները սկսում են աճել, ապա անհրաժեշտ է իրականացնել դրանց սահմանափակման և կարգավորման միջոցառումներ: Սակայն գների սահմանափակումը գրեթե միշտ հանգեցնում է տնտեսական աճի դանդաղեցմանը և զբաղվածության մակարդակի իջեցմանը: Լրիվ զբաղվածության ձեռքբերումը նույն անխուսափելի հությամբ առաջացնում է գների աճ, քանի որ պետք է վճարել աշխատավարձ մեծ քանակությամբ մարդկանց, ինչի պատճառով կը նկնի մրցունակությունը աշխատանքի շուկայում: Անհրաժեշտ է գտնել հավասարակշռված հարաբերակցություն, որն էլ կհանդիսանա պետության տնտեսական գործառույթի նպատակը:

Այսպիսով, պետության ձեռքում գտնվող կարգավորման հիմնական լժակներից մեկը ֆինանսական քաղաքականությունն է, որն առաջին հերթին իրականացվում է հարկային համակարգի միջոցով:

Տնտեսական հարաբերությունների զարգացման ներկա փուլում հարկային համակարգին գործող օրենսդրությամբ վերապահված են չորս՝ հարկաբյուջետային, կարգավորող, սոցիալական և վերահսկման գործառույթներ:

Առաջին գործառույթը հարկերի էռթյունը բացահայտում է որպես բաշխման հարաբերությունների հաստատում, կենտրոնացված գործիք, որին համապատասխան դրանք օգտագործվում են որպես պե-

տական բյուջեի ձևավորման աղբյուր, որի նպատակը պետության և հասարակության շահերի բավարարումն է: Հարկաբյուջետային գործառույթը արտահայտում է հարկատունների հարաբերությունները պետության հետ, որոնք օրենքի կարգավորման շրջանակներում վեր են ածվում իրավահարաբերության:

Երկրորդ գործառույթը պարունակում է հարկային իրավունքի նորմերով տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ակտիվության, զբաղվածության գործընթացների և վերարտադրության տեմպերի, արտաքին տնտեսական կապերի և այլ օբյեկտների կարգավորումը:

Հարկերի կարգավորող գործառույթը, ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, իրացվում է արտոնությունների և բացառությունների սահմանման նախընտրությունների համակարգի միջոցով: Նախընտրությունները սահմանվում են ներդրումային և նորացման ծախսերի ֆինանսավորման համար՝ ներդրումային հարկային վարկի և նպատակային հարկային արտոնությունների տեսքով:

Կարգավորման գործառույթը, որը բխում է ՀՀ հարկային օրենսդրության ոգուց, ունի վերարտադրական նշանակություն: Վերարտադրական նշանակության գործառույթը են պարունակում բնական ռեսուրսների օգտագործման համար վճարումները, ճանապարհային ֆոնդերի, հանքահումքային բազայի վերարտադրության համար օրենքով սահմանված հարկերի գանձումը: Այդ հարկերը ունեն հատուկ ծյուղային պատկանելի հություն:

Երրորդ գործառույթը, որը ունի սոցիալական ուղղվածություն, նպատակ ունի ֆինանսական և հարկային իրավահարաբերությունների սուբյեկտների տարբեր խմբերի վերապահել եկամուտների բաշխման և վերաբաշխման իրավունք:

Չորրորդ գործառույթի էռթյունը հարկային մուտքերի և ֆինանսական միջոցների օրենքով սահմանված ծախսերի օրինականության ստուգումն է, որի համեմատական վերլուծությունները կնպաստեն գործող հարկային օրենսդրության արդյունավետության բացահայտման և ֆինանսական ռեսուրսների հիմնավորված շարժի ապահովման վերահսկմանը: Որա շնորհիվ բացահայտվում է հարկային օրենսդրության և բյուջետային քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Հարկային հարաբերությունների վերահսկման գործառույթը արտահայտվում է միայն հարկաբյուջետային գործունեության պայ-

մաններում: Այսպիսով, հիշատակված գործառույթները իրենց օրգանական միասնության մեջ որոշում են հարկային-ֆինանսական իրավահարաբերությունների և բյուջետային քաղաքականության արդյունավետությունը:

Հարկային համակարգի գործառույթների այսպիսի դասակարգումը չի խոսում առանձին գործառույթների գոյության հնարավորության մասին, այլ, ընդհակառակը, այն ընդգծում է մոտեցումների համարի անհրաժեշտությունը հարկային օրենսդրության վերլուծուայն և գիտական մշակումների ժամանակ: Դեռ ավելին, այս կամ առաջացնել հարկային արդյունավետության կորուստ և բացասակարգի հարկաբյուջետային գործառույթի ուժեղացումը կարող է հրականացվել միայն ի վճաս կարգավորող և սոցիալական գործառույթների¹:

Հիմնավորված խիստ վարչական գործիքների միջոցով վերահսկման գործառույթի ուժեղացումը հոյի է տնտեսվարող սուբյեկտների համար գործունեության ոլորտների սահմանափակումներով՝ այն դեպքում, երբ, որքան էլ մեծ լինեն պահանջմունքները ֆինանսական ռեսուրսների նկատմամբ ենթադրվող և չենթադրվող ծախսների համար, հարկերը չպետք է խարիսկն հարկատուների հետաքրքրությունը տնտեսական գործունեության նկատմամբ:

Հարկային օրենսդրության միջոցով տնտեսական գործընթացների կարգավորման հնարավորությունը թույլ է տալիս քննարկել հարկերի կարգավորող ներուժի հիմնական գործառույթները: Ակնհայտ է, որ հարկերի կարգավորող և վերաբաշխող գործառույթները կարող են առաջ բերել տնտեսական հետաքրքրություն այս կամ այն ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ: Հարկերի միջոցով կարելի է խթանել կամ, ընդհակառակը, սահմանափակել գործարարական մունիշությունը, հետևաբար՝ ձեռնարկատիրական գործունեության այս կամ այն ճյուղի զարգացումը, ստեղծել արտադրական ծախսների իջեցման և մասնավոր կազմակերպությունների աշխուժացման, որական մրցունակությունը բարձրացնելու համար նախադրյալներ:

¹ Խօլօծօ լ. Ի. Օсновы государственной экономической политики. М., Издательство БЕК, 1997, с. 310.

տեսական քաղաքականություն կամ ապահովել ապրանքային շուկայի ազատությունը: Հարկերը ստեղծում են պետության տարածաշրջանային և տեղական բյուջեների եկամուտների հիմնական մասը, ծախսերի հատվածի միջոցով ապահովելով տնտեսության վրա ֆինանսական ազդեցության հնարավորությունը: Այսպիսով, վերաբաշխման հարաբերությունների հրականացումը անուղղակիորեն անբաժան է կարգավորող գործառույթից, որը իրավունքի առաջնային գործառույթներից մեկն է:

Հարկային քաղաքականության օգնությամբ, որի դրսևորման միակ ուղին հարկային օրենսդրությունն է, տնտեսության պետական կարգավորման հիմնական օբյեկտներ են հանդիսանում տնտեսական տարածաշրջանները, տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը, կապիտալ ներդրումները, գները, գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքները, արտաքին տնտեսական կապերը և շրջակա միջավայրը:

Հարկերի կարգավորող գործառույթն ամրագրված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքում: Հարկում իրականացվում է հարկման համակարգի սահմանման և փոփոխության, հարկային դրույքաչափերի որոշման, դրանց տարբերակման, իրականացվող տնտեսական քաղաքականությանը համապատասխան հարկային արտոնությունների տրամադրման միջոցով:

Առանց հարկային օրենսդրության հիմքերի և կառուցվածքի փոփոխության պետությունը չի կարող ժամանակավորապես իջեցնել հարկային դրույքաչափերը, սահմանել հարկային արտոնություններ և մեծացնել չհարկվող նվազագույնը, պետության տնտեսական քաղաքականության նպատակներին համապատասխան պահպանել կամ ընդլայնել հարկից ազատված, հարկվող օբյեկտների ցանկը և այլն:

Գործնականում կիրառվում են շահութահարկի գեղչերը, երբ շահույթն ուղղվում է կապիտալ ներդրումների, գիտական հետազոտությունների և դրանց արդյունքների ներդրմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, շրջակա միջավայրի պահպանմանը և այլն:

Հարկային կարգավորման գործառույթի նպատակային բնույթը երևում է կոնկրետ ընդգծված տնտեսական օբյեկտներին հարկային գործիքների ուղղվածությամբ: Օրինակ, արտասահմանյան մի շարք երկրներում կիրառվում է ընկերության շահույթի երկու մասերի բաժանման ձևը՝ չբաշխված, որը մնում է ընկերության տրամադրության

տակ՝ նրա գործունեության համար և շահաբաժին, որը բաշխվում է բաժնետոմսերի սեփականատերերին՝ տարբերակված հարկման նպատակով: Չբաշխված շահույթից հարկի դրույքաչափերի իշեցումը՝ շահաբաժինների բարձր հարկման դեպքում, հանգեցնում է շահույթի այդ երկու մասերի հարաբերակցության փոփոխությանը՝ հօգուտ շահույթի չբաշխված մասի: Կապիտալի ներքին կուտակման մեծացումը, ներդրումների ինքնաֆինանսավորման աճը, շահաբաժինների միաժամանակյա իշեցումը, եթե մանավանդ այդ միտունը կրում է երկարատև բնույթ, կարող են հանգեցնել բաժնետոմսերի կուրսի իշեցման, դա էլ՝ հայրենական և օտարերկրյա ներդրողների կողմից դրանց գնման վտանգի և ընկերության իրական սեփականատերերի կազմի փոփոխության: Շահույթի չբաշխված մասի վրա հարկերի մեծացման, իսկ շահաբաժիններից՝ փոքրացման դեպքում նկատվում է հակառակ պատկերը:

Տնտեսության պետական կարգավորման նպատակների մեջ մասը ծեռք է բերվում կապիտալ ներդրումների ընդհանուր և նպատակառողջված խթանման ճանապարհով: Դենց հիմնական կապիտալի նորացման և ընդլայնման մասշտաբներից են հիմնականում կախված աճի տեմպը, մրցակցային իրավիճակը, գրաղվածությունը, պահանջարկը, ազգային մրցունակությունը, իսկ ներդրումների կառուցվածքից՝ ճյուղային և տարածաշրջանային համամասնությունների տեմպերը և ուղղությունները: Շատ երկրներում վերջին տասնամյակների ընթացքում ներդրումային պահանջների ապահովման հիմնական ծև է համարվում ինքնաֆինանսավորումը, որի տեսակարար կշիռը կապիտալ ներդրումներում տատնվում է 50-80%-ի սահմաններում: Ինքնաֆինանսավորման այդպիսի չափերը կարող են հնարավորության վերածվել՝ շնորհիվ պետական հարկային քաղաքանության, ինչը շոշափում է ռիսկի օգտագործումը, ռեսուրսների բաշխումը, անդրադառնում է կազմակերպությունների ներդրումների մակարդակի վրա, որոշում է ազգային խնայողությունների կառուցվածքը, այսինքն՝ այն ամենը, ինչը երկարաժամկետ հեռանկարում որոշում է տնտեսական աճի տեմպերը:

Ընդհանուր առմանք, կապված հարկերի իրավական այս կամ այն գործառույթի դերի հետ, հարկային քաղաքականության մեջ կարելի է առանձնացնել երկու ուղղություն: Առաջինի էությունն այն է, որ գործող հարկային օրենսդրությամբ հարկային իրավահարաբերությունների սուբյեկտի համար սահմանվում է արտոնությունների

որոշակի շրջանակ: Այդ ժամանակ գործում են հարկման ընդհանուր բավական բարձր դրույքաչափեր: Իսկ երկրորդ ուղղության դեպքում, ընդհակառակը՝ սահմանվում են արտոնություններ, ինչը ընդլայնում է հարկման բազան և թույլ է տալիս իշեցնել հարկման ընդհանուր դրույքը: Եթե առաջին ուղղության նպատակն է արտադրության գործընթացի և գիտատեխնիկական առաջընթացի վրա բավական գործընթացի և գիտատեխնիկական առաջընթացի վրա նպատակառողջված ազդեցությունը, ապա երկրորդը ձգտում է ստեղծել առավել բարենպաստ և հավասար պայմաններ տնտեսության բոլոր օղակների ազատ ձեռնարկատիրական գործունեության համար:

ՀՀ հարկային օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ կառավարության հարկային քաղաքանության առաջին փուլի հիմքում ընկած էին այդ երկու ուղղություններին բնորոշ գծեր: Սակայն պետք է նկատել, որ այն ոչ արտադրության խթանման և ոչ էլ ձեռնարկատիրական գործունեության ակտիվացման բնագավառում որևէ նշանակալի արդյունք չտվեց՝ առաջին հերթին ներդրումային մթնոլորտի բացակայության պատճառով: Կառավարության հարկային քաղաքականությունը 90-ական թթ. սկզբին կրում էր հայտարարագրածին բնույթ: Կառավարությունն այդ տարիներին հայտարարության գրադարձին այդ տարիներին հայտարարությունը էր, որ իր հարկային քաղաքականության հիմնական սկզբունքը պետք է ուղղված լինի ցածր տոկոսադրույքների սահմանմանը, ընդպես պետք է ուղղված լինի ցածր տոկոսադրույքներին հարկերից հույպ մինչև նոր ստեղծվող կազմակերպություններին հարկերից ազատմանը, ինչպես նաև հարկային մեջ արտոնությունների տրամադրման ճանապարհով նոր կառուցվածքների ստեղծմանը և դրանով իսկ հանրապետության տնտեսական կյանքի աշխուժացմանն ու ձեռներեցության զարգացմանը: Սակայն տնտեսության ճգնաժամը առաջացրել էր պետական բյուջեի վիթխարի պակասուրդ, ինչը, իր հերթին, կառավարության վարած իներցիոն, նոր պայմաններին տնտեսության հարմարեցման քաղաքականության պատճառով մեծացրել էր հարկերի հարկաբարյութետային գործառույթի նշանակությունը: Ստեղծված իրավիճակը հանգեցրեց նրան, որ հարկային դրույքաչփերի իշեցումը առաջ բերեց բնակչության վճարունակ պահանջարում որոշում է տնտեսական աճի տեմպերը:

Ինչպես վկայում է ՀՀ առաջին տարիների հարկային օրենսդրությունների սուբյեկտի համար սահմանվում է արտոնությունների

թյունը, չնայած գործող հարկային բազմաթիվ արտոնություններին, ներդրումային արտոնությունների կշիռը մեծ չէ: Ծեշտադրումն արկում էր առավելապես հարկերի հարկաբյուջետային դերի բարձրացման վրա. իսկ որպես արտադրության գործընթացների վրա ազդեցության լծակ՝ հարկային համակարգը թույլ էր ներգործում: Տեղի էր ունենում արտադրության ոլորտից առևտրի ոլորտ կապիտալի ոչ ցանկալի տեղաշարժ և դա մասնավորապես այն պատճառով, որ պետական առևտրական կազմակերպությունների համար սահմանված հաստատագրված վճարումները 1991թ.-ից չեն ինդեքսավորվել, ինչի պատճառով սղածի այդ փուլին բնորոշ բարձր տեմպերի պայմաններում արտադրական կազմակերպություններն առևտրի ոլորտի համեմատությամբ հայտնվեցին անբարենպաստ պայմաններում:

Սոնետարիստական հայեցակարգն ընդունելուց հետո հանրապետության կառավարության հարկային քաղաքականության հիմնական միջոցառումներն ուղղվեցին բյուջեի պակասուրդի առավելացույն կրծատմանը և հարկերի հարկաբյուջետային դերի մեծացմանը՝ որպես համալիր մակրոտնտեսական քաղաքականության իրականացման կարևոր տարր:

Այս առումով պետք է նկատել, որ կառավարությունը հարկային քաղաքականության որդեգրման հարցում հաշվի չի առել զարգացող երկրների հարուստ փորձը: Այսպես, մասնագետները, վերլուծելով շուկայի կայունացման ծրագրերը Լատինական Ամերիկայի երկրներում, արդարացիորեն նշում են, որ տնտեսության պետական կարգավորման մոնետարիստական սխեմաների արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ են մի շարք սկզբունքային պայմաններ: Դրանց շարքում կարելի է նշել գների բարձր առածգականությունը դրամական զանգվածի նկատմամբ, ներքին գների բավարարացման միջազգային գների շարժի նկատմամբ, ապանքների արտադրության (առաջարկի) բարձր առածգականությունը գների շարժի նկատմամբ, տնտեսական ռեսուրսների մեծ փոխարինելիությունը (առաջարկի փոփոխության հետ կապված):

Ժամանակակից թեյնսականությունը հետսոցիալիստական երկրում մոնետարիստական մոտեցումներով հրապուրվելը համարում է անցում «մեծ ուստոպիայից մեծ պատրանքին»: Նրանք նշում են, որ այդ երկրներում արտադրության անկումը ունի այն նույն պատճառները, որոնց հետևանք էր անցած դարի 30-ական թվականների համաշխարհային ճգնաժամը: Այն սահմանափակ ֆինա-

սական քաղաքականության պայմաններում ամբողջական պահանջարկի խախտումն է:

Քեյնսականությունը ժամանակակից փուլում առաջ է քաշում, այսպես կոչված, կարգավորման պետական կառուցվածքային հայեցակարգը:

Այսպիսով, շուկայական տնտեսությանը անցնող երկրի համար կարենոր խնդիր է հանդիսանում կարգավորման տնտեսական մեթոդների ամբողջական համակարգի ստեղծումը: Այս նպատակով իրակացվում են բազմակի արմատական բարեփոխումներ, այդ թվում՝ նաև հարկային օրենսդրության կարգավորման բնագավառում: Այդ փուլում ցայտուն է դրանորվում հարկերի՝ որպես տնտեսության պետական կարգավորման կարևորագույն լծակի դերը:

Բացի զուտ հարկաբյուջետային գործառույթից, հարկերի և տուրքերի համակարգը հասարակական արտադրության, նրա տեղաբաշխման, կառուցվածքի և դինամիկայի, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի համար ծառայում է որպես տնտեսական ագդեցության մեխանիզմ: Այս առումով հարկային քաղաքականության բնագավառում նպատակահարմար է հաշվի առնել զարգացած երկրների փորձը:

Ներկայումս աշխարհի շատ երկրներում գործում են հարկային կարգավորման համակարգեր, որոնք ստացել են «Շվեյցարական պանդիր» անունը: Այս համակարգի եռթյունը նրանում է, որ կառավարությունը որոշում է ծեռնարկատիրական գործունեության մի շարք ուղղություններ, որոնք սահմանվում են հարկային օրենսդրությամբ, կոնկրետացվում են հարկային արտոնությունները, հարկման արտոնյալ դրույքները, ներդրումների համար գեղչերը, ինչպես նաև արագացված անորտիգացիան:

Իհարկե, հարկման այդպիսի քաղաքականությունն ունի մի շարք թերություններ: Այսպես, տնտեսության որոշակի սեկտորներին հարկային օրենքով գերադասելի վերաբերմունքը պայմաններ է ստեղծում չարաշահումների համար:

Արտոնությունների առկայությունը ինքնին ծնում է անհավասարության տպավորություն: Այն խախտում է հոգեբանական տրամադրվածությունը, իսկ վերջինս կարևոր է հատկապես այն երկրի համար, որտեղ կառավարության հեղինակությունը առանց այն էլ խաթարված է: Այդ թերությունների պատճառով շատ երկրներ գնում են հարկային արտոնությունների կրծատման ուղիով:

Նման մոտեցումների կիրառումը կարող է արդյունք տալ միայն կոնկրետ տնտեսական իրավիճակում: Զարգացման որոշակի մակարդակում այն կարող է հակադրության մեջ մտնել ազգային տնտեսության ծևավորման և զարգացման խնդիրների հետ:

Հայաստանի համար, կարծում եմ, առավել ընդունելի են տնտեսության հարկային կարգավորման խառը մոդելը և ըստ արտադրության ճյուղերի, գործումնեության ոլորտների տարբերակված հարկային դրույթաչափերի ու նպատակային հարկային արտոնությունների կիրառումը, ինչը պայմանավորված է մեր տնտեսության դեռևս զարգացման ցածր տեմպերով, տնտեսության ճյուղերի միջև գոյություն ունեցող անհամամասնություններով:

Խոսելով հարկային օրենսդրության և արտոնությունների վերապահման մասին, կարծում եմ, արտոնություններ ներկա փուլում պետք է վերապահել՝

1. արտահանման կողմնորոշում ունեցող ճյուղերում արտահանվող ապրանքի ծավալների մեծացնանը,

2. ներքին իրացման ծավալների ընդլայնմանը (ներքին շուկային կողմնորոշված ճյուղերի հաճար),

3. օտարերկրյա ներդրումների ընդլայնմանը՝ արտադրության և արդյունաբերության ոլորտում:

Հիշատակված ուղղություններով հարկային օրենսդրության ծևավորման և կարգավորման նպատակով կառավարությունն ունի հիմնական դեր և այդ առումով նոր որակ կարող են ստանալ հարկի կարգավորիչ գործառությունները:

Կարծում եմ՝ տնտեսական հարաբերությունները ճիշտ արտացոլող հարկային օրենսդրության ծևավորման նպատակառուղյամբ քաղաքականությամբ կարելի է շարժ հաղորդել տնտեսական զարգացման գործընթացներին: Նման մոտեցումը հարկային օրենսդրության ոլորտում պահանջում է ոչ թե տարբեր արտոնություններից իրաժարում, ինչը բնորոշ է ներկայում գործող հարկային համակարգին, ոչ թե եկամուտների մեծացում կարճաժամկետ հեռանկարում, հարկման բազայի ընդլայնում և հարկային կառուցվածքի հարմարեցում ներկա տնտեսական իրավիճակին, այլ հարկային արտոնությունների սահմանման ճանապարհով սատարում արտադրության խթանմանը և ինդուստրիալ հասարակության կառուցմանը:

§3. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎՈՎԱՆՎՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ տարածքում գործող հարկային օրենսդրության ծևավորումը սկսվել է 1992թ. սկզբից, երբ մշակվեցին և ընդունվեցին հարկային ոլորտի մի շարք օրենքներ և օրենսդրական ակտեր («Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին», «Շահութակար հարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքները և այլն):

Տնտեսական հարաբերությունների բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների և տեղաշարժերի ընթացքում պահանջվում եր համապատասխան փոփոխություններ իրականացնել նաև գործող հարկային օրենսդրության մեջ: Այդ ինաստով պարբերաբար փոփոխություններ են կատարվել ընդունված օրենքներում, ընդունվել են մեծ քանակությամբ նորագույն սուբյեկտական ակտեր:

«Հարկերի մասին» ՀՀ 1997թ. ընդունված օրենքը նպատակառուղյամբ էր ՀՀ այլ օրենքների և առաջին հերթին ՀՀ Սահմանադրության նորմերի հետ հարկային օրենսդրության նորմերը համապատասխանեցնելուն, ինչպես նաև՝ հարկային հարաբերություններում ծագած բազմաթիվ այլ հարցերի կարգավորմանը: Օրենքում առաջին անգամ տրվել են հարկային օրենսդրության բնորոշումը, ՀՀ կառավարության, ինչպես նաև ՀՀ հարկային մարմնի իրավասության սահմանները՝ հարկային հարաբերությունների կարգավորման բնագավառում: Հստակ սահմանվել է հարկի վճարման համար պարտադիր սահմանադրական սկզբունքների պահանջը:

Օրենքով ամրագրվել են նաև հարկատունների պարտականությունները, այդ թվում՝ սահմանվել է տնտեսվարող սուբյեկտների հարկային մարմիններում հաշվառման կանգնելու կարգը: Հարկ կարգավորողների ֆինանսական կանխատեսումների համար առավել վճարողների պայմաններ ապահովելու նպատակով սահմանվել է, որ հարկայուն պայմաններ ապահովելու նպատակով սահմանվել է, որ հարկայի դրույթաչափի փոփոխությունը, հարկի սահմանումը կամ վերացումը կատարվելու է միայն ֆինանսական տարվա սկզբից:

ՀՀ տարածքում գործում է միասնական հարկային համակարգ, որը հենվում է բոլոր վճարողների միատեսակ և միանման հարկման սկզբունքի վրա: Հարկեր և տուրքեր պարտավոր են վճարել Հայաստանի Հանրապետության բոլոր իրավաբանական և ֆիզիկական

անձիք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները:

Այսօր մեր հանրապետությունում ամրագրված են հետևյալ հարկատեսակները՝ շահութահարկ, եկամտահարկ, ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), ակցիզային հարկ, գույքահարկ, հողի հարկ, պարզեցված հարկ և հաստատագրված վճարներ:

Գործում են նաև իրավաբանական և այլ ծառայությունների դիմաց գանձվող պետական տուրքեր, այդ թվում՝ տեղական տուրքեր և վճարներ, բնապահպանական և բնօգտագործման վճարներ, ինչպես նաև՝ մաքսատուրքեր արտահանվող և ներմուծվող ապրանքների համար:

Նշված հարկերը և տուրքերը վճարվում են հանրապետության պետական և համայնքային բյուջեներ:

Առանձին հարկի կարգավիճակ դեռևս չունեն պարտադիր սոցիալական ապահովագրության և ճանապարհային վճարները:

ՀՀ օրենսդրությամբ կազմակերպությունների համար կարող են սահմանվել մի շարք հարկային արտոնություններ (հարկվող օբյեկտի նվազեցում, հարկի դրույքաչափի նվազեցում, հարկի նվազեցում, հարկի հաշվարկման ժամկետի հետաձգում, հարկային օրենսդրությունը և ՀՀ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում):

ՀՀ-ում համապետական հարկեր և տուրքեր, հարկման օբյեկտներ և հարկ վճարողներ, հարկերի դրույքաչափեր և արտոնություններ սահմանելու բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ Ազգային ժողովին:

ՀՀ հարկային համակարգը ունի որոշ առանձնահատկություններ: Այսպես, ըստ հարկային համակարգում ունեցած դերի՝ պայմանականորեն կարելի է տարբերակել ուղղակի և անուղղակի հարկերը:

Զարգացած պետությունների հարկային համակարգերի ուսումնասիրությունը վկայում է, որ հարկման «ամերիկյան մոդելը» բնութագրվում է ուղղակի հարկերի արտահայտված գերակշռությամբ, այն դեպքում, եթե եվրոպական հարկային համակարգերը հաճախ կողմնորոշված են դեպի անուղղակի հարկերի ակտիվ կիրառումը: Հարկային մեխանիզմների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս կամ այն ուղղվածությամբ մոդելի ընտրությունը որոշվում է ինչպես

տնտեսական համակարգի առանձնահատկություններով, այնպես ել անցկացվող պետական տնտեսական քաղաքականության ակտիվությամբ: Նույնիսկ «Եվրոպական պահպանողականության» շրջանակներում կարելի է առանձնացնել մի շարք երկրներ (օրինակ, Նիդեռլանդները), որոնք ակտիվորեն կիրառում են ուղղակի հարկման տարրերը: Ավելին, Եվրոպական համակարգերի ինտենսիվ ինտեգրման հետ միասին, ներկայումս ակտիվորեն մշակվում են հարկման միջազգային նորմեր: Ակնհայտ է դառնում անուղղակի հարկման, որպես պետական եկամուտների ծևավորման առավել արդյունավետ լծակի և որպես տնտեսության պետական կարգավորման հիմնական տարր հանդիսացող ուղղակի հարկման միջև օպտիմալ տարրերակի ընտրության անհրաժեշտությունը:

Սկսած 1995թ.-ից մեր հանրապետությունում ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ հարկման բազայի ընդլայնման ուղղությամբ: Այդ միջոցառումների թվին են պատկանում բազմաթիվ արտոնությունների վերացումը՝ կապված ավելացված արժեքի հարկի, քաղաքացիների եկամտահարկից և կազմակերպությունների շահութահարկից ազատման, մաքսային դրույքաչափերի ճշգրտման և ներմուծման ու համապատասխան հայրենական արտադրանքի վրա անվանական դրույքաչափերի հավասարեցման հաշվին ակցիզային դրույքաչափերի կառուցվածքի պարզեցման հետ:

Ընդհանուր առմամբ, անցած տարիներին հարկային քաղաքականությունը հանրապետությունում կրել է ավելի շատ հարկաբյուջետային բնույթ և հետապնդել է կարճաժամկետ նպատակներ:

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, սկսած 1995 թվականից նկատվում է ուղղակի հարկերի տեսակարար կշռի ընդհանուր նվազման միտում՝ անուղղակի հարկերի և տուրքերի տեսակարար կշռների միաժամանակյա բարձրացմամբ:

Հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով է բացատրվում նաև 1998թ.-ից անուղղակի հարկերի տեսակարար կշռի բարձրացումը: Ընդլայնվել է ԱԱՀ-ի բազան, փոփոխություններ են կատարվել գանձման կարգում, մասնավորապես՝ ներմուծվող ապրանքների գծով, վերանայվել են ակցիզային հարկի դրույքաչափերը (ընդլայնվել է բազան, փոփոխվել են հարկի դրույքաչափերը, մտցվել է հաստատագրված վճարումների սկզբունք բենգինի, ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ծխախոտի գծով):

Պետական բյուջեի եկամուտների ծևավորումը՝ անուղղակի հար-

Կերի բազայի ընդլայնումով, այսօր ստեղծում է հարկաբյուջետային կարգավորման անհիմն պատկերացում: Իրականում դա պետության ներդրումային քաղաքականության պասիվ դերի վկայությունն է:

Հանրապետության հարկաբյուջետային քաղաքականության բնութագրիչ առանձնահատկություններից մեկը պարզեցված հարկի և հաստատագրված վճարումների համակարգի լայն օգտագործումն է: Որպես հարկման պարզ ծեր՝ Վերջիններիս էռությունը հաճախ հանգում է հարկային պարտավորությունների «նվազագույն» չափերի սահմանմանը:

Հաստատագրված վճարումների օգտագործման հիմնական նպատակը հարկման բազայի ընդլայնումն է, տվյալ հարկատեսակով պետական բյուջեի նվազագույն եկամուտների ապահովումը: Չնայած հաստահագրված վճարումները օճտված են ակտիվ հարկաբյուջետային գործառույթով, սակայն շատ սահմանափակ են դրանց կարգավորիչ հնարավորությունները: Կարգավորման հիմնական կողմնորոշիչ կարող է հանդիսանալ տնտեսական ակտիվության ոլորտների վերաբաշխումը:

Այսպիսով, Հայաստանի հարկային համակարգը բնութագրվում է նրա կողմից իրականացվող բոլոր գործառույթների նկատմամբ հարկաբյուջետային գործառույթի գերակշռմամբ: Հարկման այս առանձնահատկությունը առավելապես արտահայտվում է նրանում, որ, արևմտյան երկրների համեմատությամբ, հարկային մուտքերի մեջ զգալի դեր են խաղում անուղղակի հարկերը և տուրքերը, որոնք ել մեծ տեսակարար կշիռ ունեն հարկային մուտքերի համակարգում:

Անուղղակի հարկերից Հայաստանում զգալի դեր է խաղում ԱԱՀ-ն, որը այսօր էլ բյուջեի հարկային մուտքերի աղբյուրների շարքում շոշափելի չափեր ունի: ԱԱՀ-ի դրույքաչափը Հայաստանում 20% է, որը բարձր է, քան եվրոպական համագործակցության երկրների գերակշռող մասում: Նկատենք, որ նշված երկրներում ԱԱՀ-ի 20%-ից ավելի դրույքաչափը (օրինակ, 25%) տարածվում է սովորաբար պերճանքի առարկաների վրա: ԱԱՀ-ի դրույքաչափը Հայաստանում գերազանցում է նաև այլ զարգացած երկրների համանման դրույքաչափերը /օրինակ, ԱՄՆ-ում առևտորի ոլորտում հարկի դրույքաչափը տատանվում է 3-8%-ի սահմաններում, ճապոնիայում կազմում է 3%:

Ակցիզային հարկերի և մաքսատուրքերի դերը Հայաստանում համեմատաբար ցածր է:

Մաքսատուրքերը կարելի է դասել անուղղակի հարկերի թվին: Ելնելով միջազգային շուկայում մրցունակությունը պաշտպանելու շահերից, վերջիններս հաճախ դիտվում են որպես հարկային համակարգի ոչ ցանկալի տարր: Մաքսատուրքերն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և մնում են որպես տնտեսության հարկային կարգավորման կարևորագույն լծակ: Մաքսատուրքերի հիմնական նպատակը, կարծում են, ոչ թե պետական բյուջեի եկամուտների ապահովումն է, այլ հայրենական արտադրողների պաշտպանվածության ապահովումը:

Այնպիսի առանձնահատուկ պարտադիր վճար, ինչպիսին է սոցիալական ապահովագրության վճարը, Հայաստանում, ի տարբերություն արևմտյան երկրների գերակշռող մասի, գանձվում է գործատուններից, որոնք սոցիալական վճարումները կատարում են աշխատանքի վարձատրությանն ուղղվող և դրանց հավասարեցված միջոցների ընդհանուր գումարի նկատմամբ տոկոսային հաշվարկով, բայց յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական ոչ պակաս 7.000 դրամ: Վարձու աշխատողները սոցիալական վճարումներ են կատարում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով, բայց ամսական 7000-ից ոչ պակաս դրամ /պահումները կատարում և լիազորված մարմին են փոխանցում գործատունները/:

Հայաստանի տնտեսությունում մեծ է նաև այս հատկացումների ընդհանուր տոկոսը, որը ավելի քան երկու անգամ գերազանցում է համաշխարհային միջին մակարդակը: Այս հատկացումները ուղղվում են կենսաթոշակային հիմնադրամ:

Հայաստանում մեծ չէ եկամտահարկի տեսակարար կշիռը: Այն զգալիորեն ցածր է, քան զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում: Եկամտահարկի համեմատաբար ոչ մեծ ծավալները Հայաստանում արտացոլում են բնակչության ցածր կենսամակարդակը, ինչպես նաև նրա եկամուտների մասը կազմող աշխատավարձի փոքր չափը, որի հարկման գործընթացն ավելի ոյուրին է: Աշխատավարձի վճարման ոլորտում պետական քաղաքականությունը, որը անցումային տնտեսության պահանջներին համապատասխան կողմնորոշված է սպառման զամանը, հանգեցրել է օրենսդրորեն սահմանված նվազագույն աշխատավարձի սահմանների կարծրացմանը, ինչը, վերջին հաշվով, ստվերի տակ է թողնում աշխատանքի և աշխատավարձի նկատմամբ պետական հոգածությունը:

Եկամտահարկի գանձման սկզբունքների նման առանձմահատկությունը ինքնըստինքյան որոշում է վերջինիս կարգավորման գործառույթի կիրառման ոլորտի սահմանափակվածությունը:

Գույքահարկը, որի տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է համայնքային բյուջեի եկամուտների ծնավորման մեջ, փոխարինել է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հիմնական միջոցներից գանձվող հարկերին (Փոնդավճարին):

Կազմակերպություններից գանձվող գույքահարկը կարող է դիտվել որպես նվազագույն հարկի տարատեսակ, քանի որ այն պայմանավորված չէ գույքը տիրապետող կազմակերպության շահույթի մակարդակով: Կազմակերպության ակտիվից գանձվող նվազագույն հարկը ունի որոշակի տնտեսագիտական հիմնավորում, որի եռթյունը նրանում է, որ հիմնարկի եկամուտը ինչ որ ծնով պետք է կախված լինի նրա ակտիվներից: Սակայն գործնականում այդ հարկը անցումային շրջանում կարող է դառնալ ծանր բեռ կազմակերպությունների համար, դանդաղեցնել նրանց հիմնական ֆոների ակտիվ մասի նորացման գործընթացը և առաջացնել լուրջ տնտեսական վճարմանը: Կարծում եմ՝ վերոհիշյալի փոխարեն կարելի է հարկել անշարժ գույքը, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտագործել մասնավորեցված պետական գույքը: Այդ հարկի իրավական կարգավորման մեխանիզմի տրամաբանությունը նրանում է, որ ոչ շահութաբեր արտադրության դեպքում կազմակերպության սեփականատերերը ֆինանսական վիճակը բարելավելու համար պետք է կամ իրականացնեն լրացուցիչ ներդրումներ, կամ ստիպված վաճառեն այն: Այդպիսի մեխանիզմի կիրառումը հատկապես կարևոր է մասնավորեցված կազմակերպությունների գործումներյան ակտիվացման համար, որոնց փաստացի շահութաբերությունը չի գերազանցում նրանց տնօրինության տակ գտնվող շենքերի և շինությունների իրական շուկայական գմի 1%-ը: Ի դեպ, այդ շենքերից և շինություններից շատերը ընդհանրապես չեն շահագործվում:

1994թ. ապրիլի 27-ից ՀՀ-ում գործում է «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը: Հողի հարկման էական թերություններից է նրա արժեքի գնահատման համակարգը, որը բնականաբար չի համընկնում ներկա շուկայական արժեքին: Հասկանալի է, որ շատ դժվար է հողային կադաստրի հիմքում դնել նրա շուկայական գինը, որովհետև առ այսոր իրականացվել է միայն բնակավայրերի հողերի վաճառք (գյուղատնտեսական նշանակության հողատեսքների վաճառք ըստ

էության չի իրականացվել): Այնուամենայնիվ, հողի վաճառքի ուսումնասիրությունները վկայում են, որ վաճառված հողերի գինն ավելին է, քան նրա կադաստրային արժեքը:

Հայաստանի պետական բյուջեի հարկային բոլոր մուտքերում վերջին տարիներին շահութահարկի տեսակարար կշռի աճի տեմպերը աննշան են, որը բացատրվում է այլ մուտքերի մեծացմամբ, առաջին հերթին՝ անուղղակի հարկերի և տուրքերի: Շահութահարկի ծավալների աճին չի խթանում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, որով նկատելիորեն փոքրացվել են հարկի դրույքաչափերը, ընդլայնվել են ծախսային այն հողվածները, որոնք նվազեցնում են համախառն եկամուտը՝ հարկվող շահույթի որոշման համար: Ակնհայտ է, որ, խթանող ազդեցության տեսանկյունից, շահութահարկի դրույքաչափի իջեցումը դրական տեղաշարժ է վարվող հարկային քաղաքանությունում: Գործնականում հիշատակվածը կրում է հարկային բերի ընդհանուր նվազման բնույթ և չունի ուղղորդված ազդեցություն: Դա նշանակում է, որ ակնհայտորեն թերօգտագործվում են նշված հարկի կարգավորող հնարավորությունները:

Մինչև «Ամորտիզացիայի հատկացումների նորմաները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1997թ-ի հունիսի 18-ի թիվ 187 որոշման ընդունումը, ամորտիզացիոն հատկացումների կարգը սահմանվում էր նախկին օրենսդրությամբ, որով նախատեսված էին ավելի քան 100 տեսակ ամորտիզացիոն նորմաներ: Նշված որոշման համաձայն՝ ՀՀ տնտեսավարող բոլոր սուբյեկտների համար հաստատվեցին ամորտիզացիոն հատկացումների ընդհանուր նորմաներ, որոնք բնութագրվում էին ավելի մեծ դրույքաչափերով՝ նախկինուն գործողների համեմատ: Այսպիսով, դրվեցին ամորտիզացիոն հատկացումների մեխանիզմի պարզեցման հիմքերը, սակայն ընտրության ազատության տեսանկյունից տվյալ մեխանիզմը որևէ փոփոխություն չնետքրեց գործող կարգում: Ինչպես և նախկինում, հաստատված միասնական նորմաներից շեղում չեր թույլատրվում:

Ամորտիզացիոն հատկացումների վերաբերյալ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթները կարելի են գնահատել որպես կազմակերպությունների ինքնուրույնության դրսևորման առաջին քայլ: Այսպես, ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է՝ ելեկով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված գործածության ժամկետից:

Հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեց-

ηությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ, սակայն՝ տվյալ խմբի համար վերոհիշյալ ժամկետից ոչ պակաս:

Ամորտիզացիոն հատկացումները կարգավորող վերը նշված իրավական ակտը ունի դիսպոզիտիվ բնույթ, որը տնտեսավարող սուբյեկտներին ազատության հնարավորություն է տալիս միայն ամորտիզացիոն ֆոնդերի ձևավորման ոլորտում:

Հայաստանում հարկային համակարգի վերը նշված առանձնահատկությունները բխում են ոչ թե իրավական կարգավորման բնույթից, այլ պայմանավորված են նրա յուրահատուկ տնտեսական իրավիճակով: Արևմտյան երկրների հարկային համակարգը ձևավորվել և գործում է տնտեսական զարգացման նորմալ պայմաններում: Մեր հանրապետության հարկային համակարգը իր վրա կրում է խորը տնտեսական ճգնաժամի հետքերը, որը ուղեկցվում է արտադրության անկմամբ և ինֆլյացիայով:

Յարկ է նկատել, որ անցումային շրջանում հարկային համակարգի հարկաբյուջետային դերի բարձրացումը հարկման փակուղային ճանապարհ է, քանի որ այն չի հանգեցնում երկրում հարկային ճգնաժամի հաղթահարմանը։ Արտադրության անկման և վնասաբեր աշխատող կազմակերպությունների թվի մեծացման պատճառով անընդհատ նեղանում է հարկման բազան, ինչի պատճառներից մեկն էլ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն է։ Նման գործընթացի անարդյունավետության մասին է վկայում նաև միջազգային փորձը։ Բյուջեի եկամուտների ապահովումը հարկային համակարգի խնդիրներից միայն մեկն է։ Յարկաբյուջետային գործառությը չպետք է կաթվածահար անի կուտակման և արտադրության աճի գործընթացները, խախտի սոցիալական արդարությունը, ծեափոխի շուկայական գործընթացները։

Ֆինանսական կայունացումը և հարկային քաղաքականությունը հաջողություն կունենան այն դեպքում, երբ վերջիններս օգտագործվեն որպես ոչ թե արտադրության կրծատման, այլ խթանման միջոց: Այդ պատճառով արդյունք կարող են ապահովել միայն այն հարկային միջոցառումները, որոնք կարող են խթանել արտադրությունը և, համապատասխանաբար, ընդլայնել հարկման բազան:

Հարկային համակարգի ծևավորման բնագավառում հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը ընկած է հարկային օրենսդրության հիմքում, որի իրավական առանձնահատ-

կությունները առաջին հերթին պայմանավորված են հարկի տնտեսություններով և առաջին պայմանավորված են հարկի տնտեսական և իրավական առանձնահատկություններով, որոնց լուսաբանումը հնարավորություն կը նձեռի հասկանալ և ճիշտ գնահատել հարկերի դերը հասարակական և պետական կյանքում:

տակցված և անհրաժեշտ ըմբռնում, որ հարկերը հասարակական բարեկեցության իիմք են: Պետության կողմից սահմանվող պարտադիր վճարների ընդհանրական անվանումը հայերենում իր իմաստով բավականին մոտ է հարկի ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավական էությանը:

Հարկի իրավական բովանդակությունը ամրագրված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, որտեղ ասված է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Հիմք ընդունելով հարկի օրենքով տրված սահմանումը, կարելի է սահմանագատել այն իրավական առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են ընձեռում հարկը տարբերել պարտադիր այլ վճարներից: Այսպես՝

ա) հարկը հետապնդում է պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակ,

բ) հարկը Հայաստանի Հանրապետությունում կրում է համապարտադիր բնույթ, այսինքն՝ այն պարտադիր է բոլորի համար, անկախ հարկ վճարողի պաշտոնից, սոցիալական կամ որևէ այլ դրությունից,

գ) այն անհատույց վճար է, այսինքն՝ վճարվող հարկի դիմաց որևէ կոնկրետ փոխհատուցում չի նախատեսվում,

դ) վճարողի իրավակազմակերպական ձևը նշանակություն չունի, հարկը գանձվում է ֆիզիկական անձանցից, քաղաքացիներից, անհատ ձեռնարկատերներից, իրավաբանական անձանցից, հիմնարկներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից,

ե) հարկի չափերը, գանձման կարգը և ժամկետները սահմանվում են օրենքով:

Հարկերի և հարկային համակարգի իրավական կարգավորումը այսօր էլ դեռևս ունի չշուծված իմմնահարցեր, որոնց լուսաբանման են ուղղված ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավագիտական մի շարք հետազոտություններ:

Գիտության ոլորտում շատերն են փորձել լուսաբանել այն սկզբունքները, որոնց պետությունը պետք է հետևի հարկերի սահմանման և գանձման ժամանակ, բայց բոլոր այդ փորձերի հիմքն ըստ

Էլեքտրան կազմում են Ա. Սմիթի հանրահայտ ուսմունքները, որոնք ժամանակի ընթացքում «պարարտ» հող են հանդիսացել իրավագիտության մեջ հարկերի և հարկային համակարգի իրավական կարգավորման վերլուծությունների համար:

Ժամանակին այն կարծիքն էր հայտնվում, որ պետական իշխանությունը հարկային համակարգը և օրենսդրությունը ձևավորելիս պետք է ելնի այնպիսի սկզբունքներից, ինչպիսիք են.

1. Հպատակները պետք է վճարեն հարկեր՝ որքան հնարավոր է իրենց վճարունակությանը համաչափ, այսինքն՝ այն եկամուտների շրջանակներում, որոնք նրանք ստանում են պետության հովանավորության ներքո:

2. Հարկը, որն անհատը պարտավոր է վճարել, պետք է սահմանվի ճշգրիտ և ոչ կամայական: Վճարնան ժամանակը, եղանակը, տեղը և չափը պետք է ճշտորեն հայտնի լինի ինչպես հարկ վճարողին, այնպես էլ ողջ հանրությանը:

3. Յուրաքանչյուր հարկ պետք է գանձվի (իրավաքի) այնպիսի ժամկետում և այնպիսի եղանակով, ինչպիսիք առավել հարմար են վճարողին:

Հետագայում տեսական գրականության մեջ հիշյալ սկզբունքներին ավելացվեց ևս մեկը, որի համաձայն՝ պետությունը չպետք է սահմանի վարքագծի և բարոյական կանոններին հակասող հարկեր:

Հարկերի հասկացության և հարկային համակարգի կառուցման գործող սկզբունքները նորույթ չեն, դրանք առաջարկվել և գործում են վաղնջական ժամանակներից և դրանց մի մասը ընկած է մեր հանրապետության գործող հարկային օրենսդրության հիմքում:

Ընդհանրացնելով տնտեսագիտական և իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետները, կարծում են, հարկային համակարգի կառուցման սկզբունքները գնահատելիս, պետք է առաջնորդվել ինչպես ժամանակին ձևավորված դասական, այնպես էլ ներկա իրավիճակից բխող սկզբունքներով, որոնք ձևավորված են ֆինանսատնտեսական նկատառումներով: Առաջարկվող սկզբունքներն առավել մանրամասն են մոտենում այսօրվա հարկային համակարգին՝ որպես անհրաժեշտ չափանիշներ: Այդ նորմ-սկզբունքները, որոնք ընկած են գործող հարկային օրենսդրության հիմքում, կարելի է բաժանել չորս խմբի:

1. Ֆինանսական սկզբունքներ՝

ա) հարկման բավականաչափություն,

բ) շարժունականություն:

2. Ժողովրդատնտեսական սկզբունքներ՝

ա) հարկման աղբյուրի ընտրություն, այսինքն՝ հարկման աղբյուր պետք է հանդիսանա անձի միայն եկամուտը, թե՛ նրա ընդհանուր կապիտալը,

բ) ինչպես է հարկն ազդում վճարողի վրա, ո՞վ է իրականում կրում հարկային բեռը:

3. Արդարության սկզբունքներ՝

ա) հարկման ընդհանրություն,

բ) համաչփություն:

4. Հարկային վարչարության սկզբունքներ՝

ա) հարկման որոշակիություն,

բ) հարկի վճարման ժամանակ վճարողի հարմարությունը,

գ) հարկերի հավաքման հնարավոր քիչ ծախսեր:

Ֆինանսաքաղաքական բնույթի առաջին երկու սկզբունքները՝ բավականաչափություն և շարժունականություն, տնտեսագետների մեծամասնությունը համարում է առաջնային սկզբունքներ, ի հակադրություն այն գիտնականների, որոնք առաջին տեղում տեսմում են արդարության համաչափության սկզբունքները: Այս գիտնականները գտնում են, որ հասարակական-տնտեսական համակարգը մարդկանց համար առաջնային է: Այդ է պատճառը, որ միջոցներ հայթաթելու, բավականաչափությունը պետք է դիտվի առաջին տեղում: Արդարության սկզբունքները միայն այնքանով են նշվում, որքանով դա թույլատրում են ֆինանսական սկզբունքները: Այնուհետև՝ հարկումը պետք է տիրապետի շարժունակության, այսինքն՝ պետական կարիքներին հարմարվելու կարողությանը:

Հարկային համակարգը պետությունում գանձվող հարկերի և պարտադիր այլ վճարների, ինչպես նաև դրանց կառուցման ձևերի և մեթոդների ամբողջությունն է: Հարկային համակարգն իր մեջ ներառում է հարկերը, դրանց հաշվարկման և գանձման մեթոդները, հարկային կարգավորման բնագավառում պետական իշխանության և կառավարման մարմինների իրավասությունը և միմյանց միջև փոխներգործության միջոցները, ինչպես նաև հարկային հարաբերությունների մասնակիցների իրավասությունը և պատասխանատվության համակարգը սահմանող նորմերի ամբողջությունը:

Հարկային համակարգի էությունը, կառուցվածքը և դերը որոշվում են հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքով՝ կայու-

նությամբ և կանխատեսումներով, հուսալիությամբ և հետևողականությամբ, որոշակիությամբ և հարաբերական պարզությամբ: Մրանք են այն ելակետային սկզբունքները, որոնցով առաջնորդվում են քաղաքակիոթ և ժողովրդավար երկրները պետական ֆինանսահարկային քաղաքականությունը իրականացնելիս:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի անցած տարիների գործունեության ուսումնասիրությունը վկայում է, որ դրան բնորոշ են հարկային օրենքների հաճախակի փոփոխությունները, հարկային մարմինների և հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների անհաշվեկշռվածությունը, հարկային օրենսդրության նորմերի գործողության և հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման արդյունավետության վերաբերյալ վերլուծական գնահատականների բացակայությունը: Պատմական էքսկուրսները վկայում են, որ մինչև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի ընդունումը անկայուն էին ՀՀ հարկային համակարգը և օրենսդրությունը: ՀՀ հարկային համակարգը ներառում էր շուրջ 13 հարկատեսակներ և պարտադիր այլ վճարներ, գործում էին ավելի քան 15 օրենքներ՝ 60 փոփոխություններով:

Վերադաս հարկային մարմինը պարբերաբար ենթարկվում էր կառուցվածքային, իրավասության և անվանական փոփոխությունների: Հարկային մարմիններին զուգահեռ ստուգումներ էին իրականացնում 16 այլ գերատեսչություններ: Այս իրավիճակում անարդյունավետ էր պատասխանատվության կիրառման իմստիտուտը, որը շիկացնում էր մթնոլորտը, ավելի էր գրգռում տնտեսվարող սուբյեկտներին և, լարումից բացի, բավարար ազդեցություն չէր ունենում հարկ վճարողի վարքի վրա:

ԳԼՈՒԽ 3

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

§1. ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆԱԿԱՆ ՀԱԽՏԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՈՎԱՆՎՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում անկախության հռչակումը և զարգացման ինքնուրույն ուղի որդեգրելը նոր պետականության տնտեսության հզորության ամրապնդման գործում հրատապ պահանջ առաջադրեցին, շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացմանը համապատասխան, ձևավորել նոր հարկային համակարգ, որը կոչված պետք է լիներ իրավական կարգավորման ենթարկել օրեցօր զարգացող տնտեսական հարաբերությունները, անհրաժեշտ պայմաններ ստեղծել տնտեսական լայնամասշտաբ բարեփոխումների իրականացնան համար:

Կարծ ժամանակահատվածում ՀՀ-ում հաջողվեց ստեղծել հարկային մարմինների համեմատաբար կայուն համակարգ, որը անցած տարիների ընթացքում որոշակի դեր է խաղացել տնտեսության հարկային բարեփոխումների իրականացնելու ճանապարհին, նպաստել շուկայական նոր հարաբերությունների ամրապնդման, մասնավոր ծեռներեցության և ծեռնարկատիրական գործունեության զարգացմանը:

ՀՀ հարկային առաջին մարմինները ստեղծվեցին ՀՀ նախարարների խորհրդի 1991թ. հոկտեմբերի 2-ի թիվ 585 որոշմամբ. ձևավորվեց «Գլխավոր պետական հարկային տեսչությունը», որը, ժամանակին կատարելով իր պատմական առաքելությունը, 1995թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմավորվեց հարկային տեսչության, ավելի ուշ (20.07.1999թ.) վերակազմակերպվեց պետական եկամուտների նախարարու-

թյան, հետագայում՝ ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 13-ի որոշմամբ վերակազմավորվեց որպես կառավարության առների հարկային պետական ծառայություն: Վերջինիս խնդիրները և իրավասության շղանակները սահմանվեցին ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 21-ի թիվ 1926 որոշմամբ հաստատված կանոնադրությամբ: Այնուհետև, ՀՀ նախագահի 20.08.2008թ. N ՆՀ-226-Ն հրամանագրով ՀՊԾ-Ն միաձուլվեց Մաքսային պետական կոմիտեի հետ՝ անվանվելով Պետական եկամուտների կոմիտե, որից հետո ՀՀ կառավարության 04.09.2008թ.-ի N 1005-Ն որոշմամբ հաստատվեց կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը:

Հարկային մարմինների ձևավորմանը գուգահեռ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ հարկային նոր օրենսդրության ձևավորմանը: Այդ աշխատանքը սկսվել է 1992թ. սկզբից, եռք մշակվեցին և ընդունվեցին հարկային մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: 1997թ. ընդունվեց «Հարկերի նախին» ՀՀ նոր օրենք: Այն նպատակառողջված է ՀՀ այլ օրենքների և, առաջին հերթին, Սահմանադրության նորմերի հետ հարկային օրենսդրության նորմերը համապատասխանեցնելուն, ինչպես նաև՝ հարկային հարաբերություններում ժագած բազմաթիվ այլ հարցերի կարգավորմանը:

Օրենքով սահմանվեցին հարկային օրենսդրության բնորոշումը, ՀՀ կառավարության, ինչպես նաև ՀՀ հարկային մարմնի իրավասության սահմանները՝ հարկային հարաբերությունների կարգավորման հարցում: Հստակ սահմանվել են հարկի գանձման համար պարտադիր, անհրաժեշտ սահմանադրական սկզբունքները՝ հարկը գանձվում է օրենքով նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Առաջին անգամ հարկատուի առջև օրենքով պարտավորություն դրվեց կոնկրետ ժամկետում, որպես հարկ վճարող, հաշվառման կանգնել հարկային մարմիններում: Հարկ վճարողների ֆինանսական կանխատեսումների համար առավել կայուն պայմաններ ապահովելու նպատակով, որպես սկզբունք, ամրագրվել է, որ հարկի դրույքաչափի փոփոխությունը, հարկի սահմանումը կամ վերացումը կատարվելու է միայն ֆինանսական տարվա սկզբից:

ՀՅ տարածքում գործում է միասնական հարկային համակարգ, որը հենվում է բոլոր վճարողների միատեսակ և միանման հարկային սկզբունքի վրա: Հարկեր և տուրքեր պարտավոր են վճարել ՀՅ բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձիք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հարկային համակարգի ներքին կառուցվածքը եական նշանակություն ունի հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության կիառման արդյունավետության հարցում:

Անուամենայնիվ, կապված հարկային կառուցվածքի և մուտքերի դիմամիկայի հետ, ինչպես անցած տարիներին, այնպես էլ այսօր իրավիճակը շարունակում է անհանգստացնող մնալ՝ ՀՆԱ-հարկեր հարաբերակցության կտրվածքով: Հավաքվող հարկերի աճի տեմպերը ցածր են: Հարկերի գծով պետական բյուջեին պարտքերը շարունակում են պահպանել իրենց տեսակարար կշիռը:

Հարկային իրավունքի չլուծված խնդիրներից են մնում հարկային իրավախախտումները, որոնց օբյեկտների ծզգրիտ սահմանազատումը և հարկային պատասխանատվության կիրառումը այն արդյունավետ գործոններից են, որոնց շնորհիվ կարելի է ոչ միայն ապահովել հարկային եկամուտների ժամանակին գանձումը բյուջե, այլև նշանակալից չափով կրծատել բյուջետային դեֆիցիտը:

Հարկային իրավախախտումների հասկացության, դրանց կազմի, ինչպես նաև սահմանազատման հիմնահարցերը այսօր ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն են ծեռք բերում. դրանց պարզաբանումներին ուղղված տեսական հետազոտությունները միջազգային իրավաբանական գրականության մեջ շարունակում են մնալ խիստ վիճելի:

Այսպես, 1998թ. իրատարակված «Տնտեսագիտական բառարանում» որպես հարկային իրավախախտումներ են բնութագրվում հարկային օրենսդրությամբ պատճելի բոլոր գործողությունները, դրանց թվում՝ չարամտորեն հարկեր վճարելուց խուսափելը, հարկումից եկամուտները թաքցնելը և այլ խախտումներ:

Հարկման տերմինների բառարանում հարկային խախտումը բնութագրվում է որպես հարկային օրենսդրությունը խախտող

գործողություն:

Հարկային իրավախախտման հասկացությունը սահմանված է ՌԴ հարկային օրենսգրքի 106-րդ հոդվածում, որտեղ ասված է՝ «Հարկային իրավախախտում է համարվում հարկատուի, հարկային գործակալի կամ նրանց ներկայացուցչի հակաիրավական մեղավորությամբ կատարած այն արարքը (գործողությունը կամ անգործությունը), որի համար սահմանված է պատասխանատվության»:

«Հարկային իրավախախտում» տերմինը օգտագործված է նաև մեր հանրապետության վարչական, քրեական, քրեական դատավարության օրենսգրքերում, որտեղ, սակայն, որևէ ծեսով սահմանված չէ հարկային իրավախախտման հասկացությունը: Դատական պարզաբանումներում նույնպես բացահայտված չեն իրավախախտումների այս տեսակի հասկացության տարրերը:

Առավել անհասկանալի է, որ հարկային իրավախախտում հասկացությունը իր տեղը և լուսաբանումը չի ստացել «Հարկերի մասին» ՀՅ օրենքում, այն դեպքում, երբ օրենքի չորրորդ գլուխը անբողջովին նվիրված է հարկային օրենսդրության խախտումների պատասխանատվությանը:

Անկասկած հիմնախնդրի լուծման հարցում իր բացասական դերը ունի հարկային իրավունքի գիտության աղքատ տեսական ժառանգությունը. դրանով գրադրվող իրավաբան-գիտնականները անհայտ են իրենց հետազոտություններով կամ ստվերում են:

Անուամենայնիվ, համաշխարհային իրավագիտության տեսական հետազոտությունները իրավախախտման, նրա կազմի և պատասխանատվության լուսաբանման ոլորտում լուրջ հանգողություններ ունեն, որոնք կարող են նպաստել հարկային իրավախախտման հասկացությունը պարզաբանելուն և այն սահմանազատելուն հակաիրավական մյուս իրավախախտումներից, ինչպիսիք են վարչական, քրեական, կարգապահական և գույքային խախտումները:

Քանի որ ՀՅ օրենսդրությունը չի պարունակում հարկային իրավախախտման սահմանումը, ուստի պետք է հասկանալ, որ հարկային օրենսդրության խախտում է համարվում այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի հետևանքով չեն կատարվում հարկային օրենսդրության պահանջները և որի համար

ՀՅ օրենսդրությամբ սահմանված է պատասխանատվություն:

Չանդրադառնալով իրավախախտումների տեսական վերլուծությունների մանրամասներին, որոնք իրավունքի տարբեր ճյուղերի համար ստացել են իրենց լուծումները, նպատակահարմար ենք համարում հարկային իրավախախտման՝ որպես ֆինանսահրավական խախտման տարատեսակի հասկացությունը լուսաբանել իրավախախտման տեսակային օբյեկտով, որը միակ չափանիշն է, ինչով հարկային իրավախախտումը կարելի է սահմանագատել իրավունքի ճյուղերի ավանդական իրավախախտումներից:

Հարկային իրավախախտումները հիմնականում ծագում են պետության ֆինանսական գործունեության ընթացքում, որը ուղղված է երկրի կենտրոնացված դրամական ֆոնդի համալրմանը և որի նպատակը պետության գոյության և հզորության պահպանումն է, նրա ներքին և արտաքին գործառությունների իրականացման դրամական ֆինանսավորումը: Ցուրաքանչյուր պետություն, անկախ կառավարման ձևից կամ պետական կառուցվածքից, լուծում է տնտեսական, սոցիալական, պաշտպանական, վերահսկողական, արտաքին հարաբերությունների հետ կապված և այլ խնդիրներ: Գործունեության նշված ոլորտներին համապատասխան ձևավորվում են պետության ներքին գործառություններ, որոնց համակարգում իր բազիսային նշանակությամբ առանձնանում է տնտեսական գործառությը, որի եռլունը արտահայտվում է պետության կողմից երկրի տնտեսության անենաբարենպաստ զարգացման ռազմավարական ուղղությունների մշակման համակարգումով:

Ծուկայական ապրանքային հարաբերությունների պայմաններում տնտեսության պետական կարգավորումը իրականացվում է հիմնականում տնտեսական եղանակով, որի առանցքն է կազմում հարկային քաղաքականությունը, ինչը պետությանը հնարավորություն է տալիս հաջողությամբ լուծել իր սոցիալական խնդիրները, ինչպես նաև վերաբաշխել ազգային եկամտի մի մասը՝ հասարակության արտադրողական ուժերի առավել հավասարակշռված զարգացման նպատակով:

Պետական ներգործությունը հասարակության տնտեսական կյանքի վրա ամբողջությամբ պայմանավորված է պետական և

տեղական բյուջեների ձևավորմամբ, որի հիմնական աղբյուրը հարկերն են: Դրանց սահմանմանը և հավաքնանը մասնակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

Պետական ֆինանսական գործունեությունը, որն ըստ էռլունի իր մեջ ներառում է տնտեսական խնդիրների և գործառույթների իրագործման հարկաբյուջեներին մեթոդները՝ դրանական միջոցների բյուջե հավաքագրման նպատակով, ուղղված է հարկային պարտավորությունների ժամանակին և լրիվ կատարմանը: Հարկային օրենսդրությամբ սահմանված պետական և տեղական բյուջեների եկամուտների հարկային աղբյուրների համալրման պահանջների չկատարմանը ուղղված հակաիրավական, մեղավորությամբ կատարված ցանկացած արարք կործողություն կամ անգործություն/ համարվում է հարկային իրավախախտում:

Հարկային իրավախախտման՝ որպես հակաիրավական գործունեության հանրորեն վտանգավորության աստիճանը և դրա այս կամ այն իրավախախտման շարքը դասելու հարցի որոշումը, կարծում ենք, կախված է խախտվող հասարակական հարաբերության կարևորությունից և բնույթից: Հասարակական ավելի կարևոր օբյեկտների դեմ ուղղված ոտնձգությունները դիտվում են որպես հանցագործություն՝ կախված ոտնձգության բնույթից և վտանգավորության աստիճանից:

Ծիշտ է, հանցագործության և այլ իրավախախտման օբյեկտները երբեմն կարող են նույնանալ, այս դեպքում դրանք միմյանցից սահմանազատվում են այլ հատկանիշներով, բայց որ դրանց հիմնական տարբերությունը ոտնձգության օբյեկտի ծիշտ ընտրությունն է, կարծում ենք՝ այսօր պետք է ընդունվի քրեագետների և ֆինանսական իրավունքի տեսաբանների կողմից:

Հարկային իրավախախտման տեսակային օբյեկտներ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են պետության ֆինանսական գործունեության ընթացքում և ուղղված են պետական և համայնքային բյուջեները օրենքով սահմանված հարկատեսակներից նախապես որոշած դրույթաչփերով պարտադիր գանձումներ կատարելուն:

Հարկային իրավախախտումները ուղղված են պետության բյուջետային համակարգի կենտրոնացված և ապակենտրոնացված եկամուտների հավաքագրման և կառավարման կարգի դեմ,

իսկ բյուջետային կառավարումը՝ իր բազմատեսակ ծախսերի ֆինանսվորմամբ, ուղղված է պետական և հասարակական անվտանգության ապահովմանը:

Իրավախախտումների հասկացության և կազմի առանձին տարրերի լուսաբանման ուղղված իրավաբանների տարբեր ժամանակներում արտահայտած կարծիքների և հարկային գործող օրենսդրության վերլուծությունների հիման վրա կարելի է ընդհանուր իրավախախտումների համակարգից առանձնացնել հարկային իրավախախտումները՝ այս էական առանձնահատություններով, որոնք բնորոշ են պետությանը, նրա լիազոր մարմինների ֆինանսահարկային գործումներությանը:

Առաջին իրավական առանձնահատությունն այն է, որ հարկային իրավախախտումները ծագում են պետության ֆինանսական գործումներության ընթացքում և ուղղված են բյուջետային եկամուտների հավաքագրման սահմանված կարգի խախտմանը:

Երկրորդ. հարկային իրավախախտումները իրենց բնույթով հակահրավական են, դրանց հիմքը ոչ իրավաչափ գործողություններն (անգործություններն) են, որոնք դրսենորվում են իրավաբանական փաստի ձևով:

Երրորդ. հարկային իրավախախտումները կարող են տեղիք տալ միայն մեղքի դրսենորմամբ, ինչպիսիք են ուղղակի կամ անուղղակի դիտավորությունը, անփութությունն ու անտարբերությունը:

Չորրորդ. հարկային իրավախախտումները պատժելի արարքներ են, որոնց նկատմամբ մեծամասամբ կիրառվում են վարչական, ֆինանսական և քրեական իրավունքի ճյուղերի նորմերով նախատեսված պատժամիջոցներ:

Հարկային իրավախախտումները ճիշտ դասակարգելու, դրանց հետևանքները պետության և հասարակության համար ոչ էական լինելը ծցգրիտ սահմանազատելու համար կարևոր նշանակություն ունի խախտված հարկային իրավահարաբերության հանրորեն վտանգավորության աստիճանի որոշումը, որը իրավական որակման առումով կարևոր է դատաքննական և նախաքննական մարմինների համար:

Կոնկրետ հարկային իրավախախտման հանրորեն վտանգավորության աստիճանը, կարծում ենք, պետք է որոշել նրա օբյեկ-

տիվ և սուբյեկտիվ հատկանիշների ամբողջությամբ:

Քրեական իրավունքում հանցագործությունը, որպես կանոն, բնորոշվում է հանցակազմով: Քրեական իրավունքից կատարված ընդհանրացումներով կարելի է հստակեցնել իրավախախտման կազմը, որը հնարավորություն կընձեռի հարկային օրենսդրությունում այս կամ այն խախտումը կոնկրետ որակել հարկային զանցանք կամ հանցագործություն: ճիշտ որոշելու համար, թե այս կամ այն հարկային իրավախախտումը ֆինանսական զանցանք է, թե հանցանք, անհրաժեշտ է պարզել հարկային իրավախախտման կազմի տարրերը, այսինքն՝ խախտման օբյեկտը, նրա օբյեկտիվ կողմը, այն կատարող սուբյեկտը և կատարման սուբյեկտիվ կողմը:

Հարկային իրավախախտման օբյեկտ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են պետության ֆինանսական գործումներության իրականացման գործընթացում և ուղղված են դրամական միջոցների համապետական ֆոնդի՝ պետական բյուջեի լրիվության և կայունության ապահովմանը:

Հարկային իրավախախտման օբյեկտները բազմազան են, խախտումները ուղղված են պետության ֆինանսական գործումներության բնականոն ընթացքի, պետական բյուջեի ձևավորման խոշընդունմանը:

Հարկային օրենսդրությունը սահմանելով այս կամ այն արարքի կատարումը, սահմանում է ֆինանսական պատասխանատվություն, հարկային ծառայության մարմինների վրա դնում է իրավապաշտպանական գործումներության իրականացում՝ հարկային իրավախախտումների դեմ պայքարելու համար և այն իրականացնող մարմիններին օժտում է մի շարք իրավունքներով, մասնավորապես՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները կատարելու ժամանակ թույլ տրված խախտումները կանխելու իրավունքներով:

Պետությունը հարկային մարմինների և դատարանների միջոցով պահանջում է հետևել սահմանված կոնկրետ պարտականությունների կատարմանը, այլ կերպ ասած՝ հետևել, որ պետական և համայնքների բյուջեների հանդեպ ունեցած հարկային պարտականությունները անմիջականորեն կատարվեն:

Հետևաբար դժվար չէ նկատել, որ հարկային իրավախախումների օբյեկտները հարկային իրավունքի նորմերով կարգավորվող այնպիսի հասարակական հարաբերություններ են, որոնք ըստ էության հանդիսանում են տնտեսավարող սուբյեկտների հարկային պարտականությունները պետության հանդեպ:

Միևնույն հարկային իրավահարաբերությունները, ինչպես նշվեց, կարող են պաշտպանվել ֆինանսական (հարկային), վարչական, քրեափական նորմերով:

Գործնականում երբեմն հարկային իրավախախումները ըստ պատասխանատվության դժվար է սահմանազատել քրեափական խախտումներից: Այդպիսի դեպքում հանցանքը հարկային իրավախախտումից (զանցանքից) ըստ օբյեկտի սահմանազատումն անհնար է դառնում: Կարծում ենք, նման դեպքերում առաջին պլանի վրա պետք է մղել իրավախախտման սուբյեկտի և սուբյեկտիվ կողմի հատկանիշների տարբերությունները, որոնցով էլ պետք է դրանք սահմանազատել միմյանցից:

Ընդհանրացնելով հարկային իրավախախտման առանձնահատկությունները և վերջիններս հանցագործություններից տարբերելու համար, մի շարք դեպքերում, անհրաժեշտ է նաև զատել իրավախախտման առարկան, քանի որ հասարակական հարաբերությունների խախտումը որոշակի առարկաների վրա ներգործելու միջոցով կարող է պետությանը և հասարակությանը ավելի մեծ վնաս պատճենել, հետևաբար՝ հանրության համար ավելի մեծ վտանգավորություն ներկայացնել:

Հարկային իրավախախտման էության լուսաբանման համար պակաս կարևորություն չեն ներկայացնում իրավախախտման օբյեկտիվ կողմի, սուբյեկտի և սուբյեկտիվ կողմի իրավական առանձնահատկությունների վերլուծությունները, որոնք արմատապես տարբերվում են ավանդական և հասարակության համար ճանաչելի իրավախախտումների տարրերից, և որոնց թեկուզ հասկացությունների պարզ վերլուծությունները իրավաբան-գիտնականների ուշադրությանը չեն արժանացել:

Իրավագիտության տեսության ոլորտում իրավախախտման օբյեկտիվ կեղմը բնութագրում է նրա արտաքին կողմը, այսինքն՝ գործողության ձևը, եղանակը, հասցված վնասի չափը, բնույթը, վերջապես գործողության և հետևանքների միջև ընկած պատճա-

ռական կապը, որը ամբողջապես վերաբերում է նաև հարկային իրավախախտման օբյեկտիվ կողմին:

ՀՅ գործող հարկային օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ այն, ըստ էության, բոլոր հարկատեսականների գծով առաջին պլանի վրա է մղում ենթադրվող հարկային իրավախախտումներն՝ ըստ օբյեկտիվ կողմի բնորոշմանը, այն է՝ մատնացուց է արվում իրավախախտողի գործողության եղանակը, այսինքն՝ այն ձևերը, միջոցները, որոնցով տնտեսվարող սուբյեկտը խախտում է կամ կարող է խախտել համապատասխան հարկի մասին օրենքը, որն էապես կարող է ազդել արարքի հասարակական վտանգավորության աստիճանի վրա, հետևաբար, դառնալ հարկային իրավախախտումը հանցագործությունից սահմանազատելու հիմք:

Այսպես՝ ՀՅ օրենսդրությամբ իրավախախտման օբյեկտիվ կողմի, այդ հակափական գործողության եղանակ, ձև, միջոց կարող են հանդիսանալ:

1. հարկը ոչ ճիշտ հաշվարկելը,
2. հաշվապահական կամ օրենսդրությամբ սահմանված այլ հաշվառում չվարելը կամ դրանք կոպիտ խախտումներով վարելը,
3. հարկային մարմնին ներկայացվող հաշվարկները (հայտարարագրերը) ուշացնելը,
4. հաշվապահական (հարկային) հաշվառման սահմանված կարգը խախտելը,
5. ապօրինի գործումներությունը,
6. հարկվող օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը,
7. ձեռնարկատիրական գործումներության առարկաների չգրանցելը,
8. առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կամ դրանց շահագործման կանոնների խախտմանը դրամարկղային հաշվարկներ իրականացնելը և այլն:

Հարկային իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը առկա է, եթե պետության և հասարակության համար վտանգավոր հետևանքները վրա են հասնում իրավահարաբերության մասնակիցների մեղավորությամբ կատարած գործողությունների հետևանքով:

Որոշ հանցագործությունների համար անձը կարող է պատասխանատվության ենթարկվել նաև այն դեպքում, եթե չկառաջ հետևանք: Բայց իրավախախտի նախապատրաստական գործողությունները բնութագրվում են որպես հանցափորձ:

Ի տարբերություն քրեական իրավական խախտումների, ֆինանսական (հարկային) իրավունքը բացառում է հարկային իրավախախտումներ կատարելը նախապատրաստելու կամ փորձի համար պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Յետևաբար, հարկային իրավախախտումները չեն կարելի բաժանել ավարտված և չավարտվածի: Բոլոր հարկային իրավախախտումները ավարտված են, քանի որ ուղղված են պետության, նրա ֆինանսական հիմնական ծրագրի հանդեպ նախապես օրենքով սահմանված պատրավորությունների չկատարմանը:

Հարկային իրավախախտման հասարակական վտանգավորության աստիճանը որոշելու համար կարևոր են նաև իրավախախտման սուբյեկտին բնութագրող հատկանիշները, որոնք միշտ հստակեցնում և որոշակի դեր են խաղում իրավախախտում կատարող անձի պատասխանատվությունը անհատակացնելու և իրավախախտի նկատմամբ կիրառվող հարկադրանքի և ֆինանսական պատժամիջոցները սահմանելու գործում:

Ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի սուբյեկտներին վերապահված իրավունքների և պարտականությունների, որոնց շրջանակը ընդարձակ է, և իրավահարաբերության ընթացքում մասնակիցները կարող են իրացնել միանգամից մի շարք իրավունքներ կամ կրել պատասխանատվություններ (ինչպես, օրինակ, քաղաքացիական, նույնիսկ քրեական իրավունքում), ֆինանսական իրավունքում սուբյեկտները այդպիսի հնարավորություններից գրկված են՝ կախված այն հասարակական հարաբերությունների առանձնահատկություններից, որոնք առաջանում են պետության ֆինանսական գործունեության ոլորտում: Խոսքը անբողոքին վերաբերում է հարկային իրավահարաբերություններին և դրանց սուբյեկտներին:

Հարկատեսակների ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում հարկային իրավախախտումների սուբյեկտներին բաժանել երեք խմբի:

1. հասարակական-տարածքային միավորներ,
2. կոլեկտիվ սուբյեկտներ,
3. անհատական սուբյեկտներ:

Յիշատակված սուբյեկտների, հատկապես վարչական և ֆինանսական պատասխանատվության հիմնահարցերը դեռևս պատշաճ լուսաբանված չեն իրավագիտության ոլորտում, առավել ևս կոնկրետացված չեն հարկային իրավախախտումների կոլեկտիվ սուբյեկտների (իրավաբանական անձանց) հարկային պարտավորությունների չկատարման համար պատասխանատվության հարցը:

Ինչպես 33, այնպես էլ ԱՊՀ Երկրների, այդ թվում ՌԴ վարչական իրավախախտումների մասին օրենսդրությամբ չի սահմանվում իրավաբանական անձի՝ որպես միևնույն արտադրատնտեսական և սոցիալական խնդիրների լուծման համար միավորված մարդկանց միասնական-ամբողջական միավորման պատասխանատվության հարցը, այն անհասկանալիորեն շրջանցվում է և միայն պատժի անհրաժեշտությունից սկզբունքի պահպաննան անհատականությունից ելնելով, հատկապես հարկային իրավախախտումների դեպքում, պատասխանատվության են կանչվում կազմակերպությունների պաշտոնատար անձիք:

Զարմանալիորեն հարկային իրավունքի և պատասխանատվության իրավական ինստիտուտների լուսաբանմանը նվիրված ուսումնական դասագրքերում անգամ ուշադրության չեն արժանացնում գործնականուն լայն կիրառում ունեցող հարկային իրավախախտումների սուբյեկտների պատասխանատվության հարցերը, որոնց անորոշությունը նախաքննական մարմիններին գրկում է որակյալ իրավախախտումների դեպքում քրեական հետապնդում սկսելու հնարավորությունից:

Հարկային իրավախախտման սուբյեկտներին ներկայացվող հիմնական պահանջները ֆինանսական իրավունակությունն ու գործնականությունն են: Հարկային իրավախախտման ծագման նախադրյալն է հանդիսանում սուբյեկտի ֆինանսական իրավունակությունը, որը իրավահարաբերություններում սուբյեկտի իրավունքները ունենալու և իրավաբանական պարտավորությունները կրելու ունակությունն է պետության ֆինանսական գործունեության ոլորտում:

Տնտեսավարողի իրավունակությունը գործում է տվյալ մարմնի կազմակերպման և իրավասության որոշնան պահից: Հենց այդ պահից էլ սկսվում է նրա գործունեությունը, այսինքն՝ իր իրավասությունը կենսագործելու ունակությունը:

Ֆինանսական գործունեություն իրականացնող բոլոր կազմակերպությունների իրավասությունը իր արտացոլումն է գտնում նրանց կանոնադրություններում, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերում: Իրավասության ծավալով կարելի է սահմանել այն ֆինանսահրավական հարաբերությունների տեսակները, որոնցում որպես մասնակիցներ կարող են հանդես գալ կոլեկտիվ սուբյեկտները:

Հարկային իրավախախտումների սուբյեկտների համակարգում կարելի է առանձնացնել ֆինանսական իրավախախտումների կոլեկտիվ սուբյեկտներին, որոնց էությունը բնութագրվում է տնտեսավարող սուբյեկտների պաշտոնատար անձանց գործունեությամբ, և որոնց հարկային իրավունակության և գործունեության իրավական գնահատման հարցերը երբեք չուսաբանում չեն ստացել:

Պետության ֆինանսական գործունեության ժամանակակից հիմնախնդիրները և հարկային իրավահարաբերությունների կարգավորմանը ուղղված օրենսդրությունը իրամայական պահանջ են առաջադրում սահմանել ծառայողների, հատկապես ֆինանսական գործունեության ոլորտում տնտեսական նարմինների պաշտոնատար անձանց (դեկավար, գլխավոր հաշվապահ) ֆինանսական իրավունակության և գործունակության ծագման, դրանց ծավալի, բովանդակության և պատասխանատվության կարգավորմանն ուղղված հիմնահարցերը:

Պատահական չեն, որ տնտեսական մարմինների ֆինանսական, այդ թվում հարկային գործառությունների իրականացման իրավունքը և պատասխանատվությունն ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրված է տնտեսական նարմնի դեկավարի և գլխավոր հաշվապահի վրա:

Կազմակերպությունը որպես իրավաբանական անձ ստեղծված է համարվում և նրա իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից:

Հիմնարկի՝ որպես հարկային իրավախախտման սուբյեկտի

իրավունակությունը ֆինանսական կարգավիճակի միայն մեկ տարրն է, երկրորդ տարրը գործունակությունն է, որը ծագում է իրավունակության հետ միասին, կազմակերպության, հիմնարկի, ընկերության ստեղծման պահից:

Տնտեսական կազմակերպության գործունեությունը, բնականաբար, արտահայտում է կազմակերպությունը կազմող մարդկանց գործունեությունը, քանի որ միայն մարդիկ են ունակ իրականացնելու գիտակցված գործունեություն: Սակայն մարդկանց դերը իրավաբանական անձի գործունեության իրականացման գործում տարբեր է: Միասնական նպատակային գործունեության կազմակերպման, իրավաբանական անձի կամքը ձևավորելու, նրա գործունեությունը դեկավարելու, իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու համար ՀՀ քաղ.օրենսգրքի 57-րդ հոդվածը սահմանում է իրավաբանական անձի մարմնի հասկացությունը:

Հետևաբար՝ իրավաբանական անձի իրավունակությունը և գործունեությունը իրականացնում է ոչ թե իրավաբանական անձը՝ որպես այդպիսին, այլ նրա նարմինները: Այլ խոսքով, հարկային գործունեություն իրականացնելիս՝ սուբյեկտները հանդես են գալիս ոչ թե իդենտիկ կազմակերպությունները, հիմնարկները, այլ նրանց գործադիր նարմինները՝ տնօրենները, տնօրինությունները:

Կազմակերպության կամ հիմնարկի ֆինանսական գործունեությունը իրականացնում է նրա գործադիր տնօրինությունը (դեկավարները), այլ ոչ թե նրա ամբողջ աշխատավորական կոլեկտիվը: Հետևաբար, որպես հարկային իրավախախտման սուբյեկտ կարող է հանդես գալ ոչ թե ամբողջ կազմակերպությունը կամ հիմնարկը, այլ նրա տնօրինությունը, որը օժտված է վարչական լիազորություններով:

Կազմակերպության դեկավարությունը (տնօրինությունը) գործում է օրենքի հիման վրա, սեփական նախաձեռնությամբ՝ իրավական նարմինների հսկողության ներքո, որը կազմակերպում է հիմնարկի կառավարումը:

Մրանով է արտահայտվում տարբերությունը ֆինանսահրավական հարաբերությունների սուբյեկտների և քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների (իրավաբանական անձանց) միջև:

Հարկային իրավախախտումների կոլեկտիվ սուբյեկտներից են հանդիսանում անհատական և ընտանեկան, գյուղական կոլեկտիվ տնտեսությունները, որոնք հարկային իրավահարաբերություններում հանդիս են գալիս որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտներ: Վերջապես՝ որպես հարկային իրավախախտման անհատական սուբյեկտներ կարող են հանդիս գալ քաղաքացիները:

Հարկային հարաբերությունների սուբյեկտներ կարող են լինել ոչ միայն հանրապետության քաղաքացիները, այլև օտարերկրացիներ և քաղաքացիություն չունեցող անձիք:

ՀՅ քաղաքացու ֆինանսական իրավունակությունը ծագում է նրա ծննդյան օրից և դադարում է նրա մահվան հետ միասին:

Քաղաքացիների՝ որպես ֆինանսական հարաբերությունների սուբյեկտի, գործունակության քացահայտման համար էական նշանակություն ունեն աշխատանքային և քաղաքացիական իրավունքի ճյուղերի կողմից նշակված և օրենսդրական ամրապնդում ստացած գործունեության սկզբունքները:

ՀՅ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ գործունակություն է համարվում քաղաքացու իր գործունեությունով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար պարտավորություններ ստեղծելու և դրանք կատարելու ունակությունը:

ՀՅ քաղաքացիական օրենսգրքը քաղաքացուն լրիվ գործունակ է ճանաչում 18 տարեկանը լրանալու պահից: Այս սկզբունքը առանց քացառությունների կիրառվում է նաև հարկային իրավունքի սուբյեկտների համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ֆինանսական իրավունակությունների ծավալը որոշվում է Սահմանադրությամբ, ինչպես նաև ֆինանսահրավական նորմերի ողջ համակցությամբ: Պետական ֆինանսական, վարկային, ինչպես նաև հարկային մարմինները իրենց վրա դրված խնդիրները իրականացնելու համար ֆինանսահրավական հարաբերությունների մեջ են մտնում ինչպես հանրապետության քաղաքացիների, այնպես էլ օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձանց հետ: Քաղաքացիները իրենց հերթին, կենսագործելով իրենց սուբյեկտիվ իրավունքները և կատարելով պետության կողմից

իրենց վրա դրված ֆինանսահրակային և այլ բնույթի պարտականությունները, մշտական իրավական հարաբերությունների մեջ են մտնում պետական լիազոր հարկային մարմինների հետ:

Հարկային օրենսդրությունը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձիք կարող են հանդիս գալ հանրապետության հարկային իրավահարաբերությունների սուբյեկտ:

Հարկային-իրավական հարաբերությունների վերլուծությունները վկայում են, որ որպես հարկային իրավախախտման հարաբերությունների սուբյեկտներ հանդիս են գալիս հանրապետության վարչատարածքային մարմինները, ինչպես նաև օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձիք, որոնք առօրյա մասնակցություն ունեն պետության կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի ձևավորմանը կամ հանդիս են գալիս որպես այդ միջոցների օգտագործողներ և որոնց ֆինանսական իրավունակության և գործունակության ծավալը սահմանված է հարկային իրավական ակտերով:

Այսպիսով, հարկային իրավախախտման սուբյեկտները հանդիսանում են այն քաղաքացիները (օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձիք), սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների պաշտոնատար անձիք, որոնք մեղավոր են հարկային իրավախախտման (զանցանքի կամ հանցանքի) կատարման մեջ և ընդունակ են կատարած իրավախախտման համար կրել ֆինանսական պատասխանատվություն:

Հարկային իրավախախտման՝ որպես պետության և հասարակության համար վտանգավոր արարքի բնութագրման համար էական նշանակություն ունի խախտման սուբյեկտիվ կողմը:

Հարկային իրավախախտման սուբյեկտիվ կողմը անձի կողմից իր կատարած արարքի նկատմամբ ցուցաբերվող հոգեբանական վերաբերմունքն է, նրա մեղքը:

Ինչպես իրավունքի մյուս ճյուղերում, այնպես էլ ֆինանսական իրավունքում պատասխանատվություն է սահմանվում մեղքի սկզբունքով:

ՀՅ հարկային օրենսդրության ուսումնասիրությունը և վերջինիս խախտումները խոսում են այն մասին, որ իրավախախտողի

հոգեբանական վերաբերմունքը իր կատարած արարքի նկատմամբ կարող է արտահայտվել ուղղակի և անուղղակի դիտավորությամբ, ինքնավստահությամբ և անփութությամբ:

Յարկային իրավահարաբերություններում քաղաքացու կողմից կատարված արարքը կարող է հանրության համար վտանգավոր լինել և առաջ բերել համապատասխան վտանգավոր հետևանքներ, նա կարող է ենթարկվել ֆինանսական պատախանատվության մեջի առկայության դեպքում, քանի որ ցանկացած տնտեսավարող սուբյեկտ նախապես գիտի իր հարկային պարտավորությունները, նույնիսկ պարտավորության եղանակով վճարվող հարկատեսակը, վճարման ժամկետները, դրույքաչփը, հարկման միավորը և իրեն վերապահված արտոնությունները:

Ուրեմն, հարկային իրավախախտման համար, որպես առանձնահատկություն, անձը բոլոր դեպքերում պետք է ենթարկվի պատասխանատվության, քանի որ նա գիտակցում է իր գործունեության կամ անգործության պետության և հասարակության համար վտանգավորության բնույթը, նախատեսում է հանրության համար վտանգավոր հետևանքները, ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս դրանց վրա հասնելը:

Յարկային իրավախախտման համար անձին մեղավոր պետք է համարել նաև այն դեպքում, երբ նա փաստորեն ինարավորություն է ունեցել քանականության և կամքի անհրաժեշտ լարումով կանխատեսել այդ արարքի վտանգավոր հետևանքները, բայց չի նախատեսել կամ թեև նախատեսել է, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու այն:

Վերջապես, հարկային իրավախախտման համար պատասխանատվությունը որոշելիս, կարծում ենք, անհրաժեշտ է պարզել նաև իրավախախտման շարժառիթը և նպատակը: Այս հանգամանքների պարզումը կարևոր է ոչ միայն արարքը որոշելու, այլև հարկային իրավախախտումների պատճառները և սոցիալական արմատները պարզելու համար, որոնց կապակցությամբ ծերնարկած պետական, հարկային ճիշտ քաղաքականությունը կնպաստի տնտեսական ինքնիշխանության և ազգային անվտանգության ապահովմանը:

Յարկային օրենսդրության և հարկային ծառայության մարմին-

ների կողմից կիրառվող պատասխանատվության գործնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային իրավախախտումներից շատերը տեղի են ունենում հարկերից խուսափելու ձևով: Այդ իսկ պատճառով, որպես հարկային իրավախախտումներին նպաստող կամ հարկային իրավախախտումը ծնող պատճառներ, իրավագիտության մեջ առանձնացվում են հարկերից խուսափման չորս հիմքեր՝ բարոյական, քաղաքական, տնտեսական, տեխնիկական:

Յարկերից խուսափելու բարոյական պատճառներն են համարվում այն, որ

1. հարկատումների մեծամասնության համար պետությունը չի ընկալվում որպես անձնավորված ապրանքարտադրող և հասրակական բարիքների բաշխումը և վերաբաշխումը կարգավորող,

2. ցանկացած պետությունում առկա են կոռուպցիայի և պետական միջոցները անձնական նպատակներով օգտագործելու փաստեր, ինչի պատճառով հարկատումները հարկերից խուսափելու համար չեն գումար բարոյական պատասխանատվություն,

3. շատ հարկատումներ իրենց իրավունք են վերապահում շրջանցել (խուսափել) հարկերը վճարելուց՝ մատնանշելով դրանց անշափ ծանրությունը, հարկային օրենքները երբեմն լիովին անտեսվում են, քանի որ դրանք ուղղված են մասնավոր տնտեսական և կորպորատիվ գործունեության եկամտաբերության նվազեցմանը, հարկային օրենքների համընդհանրության, անընդհատության և անկողմակալության սկզբունքը խախտվում է և կորցնում իր ընդհանրական բնույթը, երբ պետությունը փորձում է հարկային բեռը հարմարեցնել պահի ֆինանսարյութետային պահանջներին (կոնյուկտուրային), անփոփոխ են մնում պետական գանձարան եկամուտների կենտրոնացման իրամայական սկզբունքները. նման պարագայում հարկային բեռի ծանրությունը հարկատումների կողմից ընկալվում է որպես հարկերից խուսափելու բարոյական արդարացում,

4. հասարակական պահանջմունքների բավարարումը հարկերի միջոցով (պետական բյուջեի ձևավորում) հարկատումների կողմից չի գիտակցվում որպես հասարակական անհրաժեշտություն, հատկապես՝ երբ պետության ծախսերի կապակցությամբ

հասարակությունը չի իրազեկվում:

Յարկերից խուսափելու քաղաքական պատճառների շարքը կարելի է դասել տնտեսական քաղաքականության ուղղությունների որոշման ժամանակ պատգամավորական խմբերի, խմբակցությունների կանխակալ դիրքորոշումը: Խոսքը վերաբերվում է հատկապես օրենսդիր մարմնում տնտեսական, արտադրական և առևտուրի (արտահանման և ներմուծման) հարկային քաղաքականության մշակմանը: Յարկ վճարող խոշոր տնտեսվարողները իրենց պարտքն են համարում ԱԺ-ում հոգ տանել իրենց բիզնեսի և անձնական շահերի օրենսդրական պաշտպանության ուղղությամբ: Այդպիսի դեպքերում հարկատունները իրենց համարում են «շրջանցված» և փնտրում են տարբերակներ ու հովանավորներ հարկերի վճարումները պակասեցնելու համար: Բիշ չեն նաև եկամուտների ուղղակի թաքցման դեպքերը:

Յարկերից խուսափելու տնտեսական պատճառ է հանդիսանում եկամուտը, որը հարկատուն ստանում է շրջանցելով սահմանված հարկերի վճարումը: Որքան բարձր են հարկային դրույթաչափերը, այնքան ուժեղ է հարկից խուսափելու գայթակղությունը, որքան անկայուն է հարկատուի ֆինանսական դրությունը, այնքան ուժեղ է նրա թաքցնելու մտադրությունը:

Յարկերի թաքցման վրա ազդում է տնտեսական իրավիճակը: Արտադրության և արտադրանքի իրացման հնարավորությունների աճը երբեմն միտումնավոր ձևով նպաստում է հարկի տեսակների փոփոխությանը, այլ խոսքով՝ հարկային բեռը փոխադրվում է արտադրողից սպառողների վրա: Տնտեսական ճգնաժամի պայմաններում կառավարությունը փորձում է կարգավորել շուկան, որը հանգեցնում է գուգահեռ չկարգավորվող շուկայի («սև շուկա») առաջացմանը, որտեղ կնքվող գործարքները, բնականաբար, շրջանցում են հարկումը:

Յարկերից խուսափելու տեխնիկական պատճառներն են հարկային օրենսդրության խճճվածությունն ու հակասությունները, որոնք խզում են ստեղծում ինչպես հարկային օրենսդրության ներսում, այնպես էլ հարկային և օրենսդրության մյուս ճյուղերի, հատկապես քաղաքացիական, մաքսային, ֆինանսական և այլ ճյուղերի միջև: Նշված հակասությունները, ինչպես նաև հարկման և հարկերի հաշվառման բարդությունները հաճախ հնարավորու-

թյուն են տալիս հարկատուին խուսափել վճարումից՝ չխախտելով օրենքը:

Յարկային հարաբերություններն իրենց բնույթով ֆինանսական, վարչաիրավական են, դրանց նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական (ոչ հարկային) ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1, կետ 6): Այնուամենայնիվ, պատասխանատվության կիրառման հիմքերի առումով հետաքրքիր է գուգահեռ անցկացնել քաղաքացիական և հարկային օրենսդրության միջև, ընդգծելով դրանց ընդհանրությունը և տարբերությունները: Յամաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի առաջին կետի՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Օրենսգրքի 408-րդ հոդվածը սահմանում է, որ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

Ըստ քաղ. օրենսգրքի 417-րդ հոդվածի առաջին կետի՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ-ում հարկային իրավախախտումների համար պատասխանատվություն կիրառվում է՝ ելնելով «Յարկերի մասին» ՀՀ օրենքի IV գլխի դրույթներից, որտեղ ամրագրված է, որ՝ «Յարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն Յայաստանի Յանրապետության օրենքներով սահմանված կարգով»: Յարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները չպահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձիք, ինչպես նաև Յայաստանի

Համբաւետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պաշտոնատար անձիք: Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառվում են ինչպես պարտավորությունների ոչ պատշաճ կատարման (օրինակ՝ հաշվարկները, հայտարարագրերը սահմանված ժամկետներից ուշ (սխալներով) ներկայացնելը), այնպես էլ որոշակի գործողություններ չկատարելու (օրինակ՝ հաշվառում չփարելու) կամ որոշակի գործողությունների կատարումից ծեռնպահ մնալու (օրինակ՝ դրոշմավորման ենթակա ապրանքները չդրոշմավորելու) համար: Պատասխանատվության կիրառման համար, ի տարբերություն քաղաքացիական օրենսդրության, որպես առանձնահատկություն, մեղքի առկայությունը նշանակություն չունի հարկային օրենսդրությունը խախտած անձին պատասխանատվության ենթարկելու համար:

Հարկային օրենսդրությամբ իրավահարաբերության սուբյեկտի մեղքը հստակ նշված չլինելու պայմաններում ՀՀ հարկային իրավանորմերի կիրառումը ընթացել և ընթանում է այնպես, որ հարկային պատասխանատվության կիրառման հիմք, որպես կանոն, հանդիսանում է հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից կազմված ստուգման ակտը, որում արտացոլված է հարկային իրավախստումը: Տարբեր երկրների օրենսդրության, հատկապես պատասխանատվության կարգը սահմանող իրավական ակտերի ուսումնասիրություններից պարզ երևում է, որ այդ պետությունները, ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքներից և միջազգային իրավական համագործակցության պահանջներից, իրենց օրենսդրություններում հստակեցրել են «պատասխանատվությունը ըստ մեղքի» սկզբունքը: Ուսումնական Դաշնության հարկային օրենսգրքի 108-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ հարկ վճարողը հարկային իրավախստման առումով համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը ապացուցված չէ դաշնային օրենքով սահմանված կարգով և հաստատված

օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ինչպես վկայում են հարկային ծառայության մարմինների գործնական աշխատանքները, «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներում նախատեսված հարկային պատասխանատվության տեսակներն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանց կիրառումը գրեթե միշտ ենթադրում է հարկային մարմնի կողմից իրականացված արտագնա ստուգման ակտի առկայություն, իսկ այն դեպքերում, երբ հարկային իրավախստման փաստը ակնհայտ է առանց ստուգման (օրինակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24, 25-րդ հոդվածներ) և հարկային մարմնի կողմից կիրառվում են հարկային պատասխանատվության միջոցներ, ապա այդ դեպքերում հարկային իրավախստումը հաստատող փաստաթուղթ հարկային մարմնի կողմից չի կազմվում: Հարկային իրավախստումների համար վարչական և քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով նախապատրաստվող նյութերի հիմքում, կարծում են, որպես պարտադիր պայման, անկախ մեղքի առկայությունից, պետք է ընկած լինի հարկային մարմնի կողմից անցկացված ստուգման ակտը, որը իր բնույթով նեղ մասնագիտական է և գործնականում կարող է հիմք հանդիսանալ գործող օրենսդրության վերը հիշատակված բացերի լրացման համար:

Ակնհայտ է, որ հարկային հարաբերություններում պատասխանատվության կիրառման հիմքը պետության տնտեսական անվտանգության պահպան նպատակն է, ինչը, հանդես գալով որպես հարկային օրենսդրության հիմնարար սկզբունք, կյանքի է կոչվում «Հարկերի մասին», առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներով, վարչական և քրեական օրենսգրքերով, հարկային իրավախստումների դեպքերում ներգործության միջոցներ նախատեսող այլ իրավական ակտերով:

ՀՀ հարկային, ինչպես նաև այլ օրենսդրության ճյուղերը հարկային իրավախստումների դեպքերում նախատեսում են ուղղակի պատասխանատվության միջոցներ: Հարկային իրավախստումների համար պատասխանատվության միջոցներն ուղղակի կարելի է թվարկել՝ ելնելով այն իրականությունից, որ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերով ևս հարկային իրավախստումների համար անմիջական ներգործության

անուղղակի եղանակներ նախատեսող ակտեր կան, որոնց պահանջները նույնպես պարտադիր են: Յարկային իրավակախտումների կապակցությամբ կիրառվող պատասխանատվության տեսակների ուսումնասիրությունների և ՀՀ հարկային օրենսդրությամբ ամրագրված սանկցիաների վերլուծությունների հիման վրա դժվար չէ նկատել, որ հարկային պատասխանատվությունը ֆինանսական և բարոյական ներգործության միջոցների ամբողջություն է, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ:

Ընդհանրացնելով հարկային օրենսդրության կիրառման տեսության և պրակտիկայի վերաբերյալ շարադրվածք, հարկային իրավախախտումների պատասխանատվության ծեր կարելի է համարել վարչական, քրեական և անուղղակի պատասխանատվությունը (անուղղակի է համարվում հարկային, վարչական և քրեական օրենսդրություններից դուրս այլ իրավական ակտերով հարկ վճարողների նկատմամբ ներգործության միջոցներ նախատեսող նորմերի ամբողջություն):

§ 2. ՀՎՐԿՎՅԻՆ ՊԱՏՎՍԽՎԱՏՎՈՒԹՅՎԱ ՀՎՍԿՎՈՒԹՅՈՒԾ, ՎՈՎՍՁՆՎԱՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԵՎ ՀՎՍՎԿՐԳԸ

Հայաստանի Հանրապետության հարկային իրավունքի՝ որպես համալիր իրավունքի ճյուղի իրավական ինստիտուտների համակարգում իրավական կարգավորման իրատապության պահանջով առանձնանում է հարկային պատասխանատվության ինստիտուտը:

«Ինստիտուտ» հասկացությունը ծագել է լատիներեն “institutum” բառից, որը նշանակում է հաստատում, կարգում, սահմանադրում: Փիլիսոփայության, տնտեսագիտության և սոցիոլոգիական հետազոտությունների բացահայտումներում ինստիտուտը հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական, իրավական, բարոյական և նմանատիպ նորմեր մարմնավորող, ինչպես նաև մարդկանց կենսագործունեության և վարքի սոցիալական կանոնները ներառող հասարակական գործունեության և հար-

բերությունների որոշակի համակարգ է: Իրավական ինստիտուտը որոշակիորեն համասեռ, առանձին հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմերի համակցություն է (քաղաքացիության ինստիտուտ, ժառանգման ինստիտուտ, հարկային պատասխանատվության ինստիտուտ):¹

Պատասխանատվության ինստիտուտի իրավական հետազոտությունների արդյունքների տեսական վերլուծությունների և գործող հարկային օրենսդրության ուսումնասիրությունների հիման վրա կարելի է ասել, որ հարկային պատասխանատվության ինստիտուտը հարկային, վարչական իրավախախտումների մասին, քրեական, ինչպես նաև հարկային ծառայության մասին օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանող նորմերի համակցություն է: Այստեղ կարելի է ներառել նաև ՀՀ այլ իրավական ակտերով սահմանված և պատասխանատվություն նախատեսող նորմերը, սահմանափակումները, որոնց պայմանականորեն կարելի է անվանել հարկային իրավախախտումների համար ներգործության անուղղակի եղանակներ:

Վերջին տարիներին օրենսդրության մեջ կատարված արմատական փոփոխություններն եականորեն բարելավեցին հարկային օրենսդրության արդյունավետությունը: Յարկային ծառայության մարմինների գործնական աշխատանքների ուսումնասիրությունները վկայում են, որ հարկային օրենսդրության մեջ դեռևս զգացվում է իրավական անկայունության և անորոշության դրսերումներ, որոնք բացասական ազդեցությամբ երևան են գալիս հարկային իրավական ակտերի մեկնաբանության, դրանց իրացման և կիրարկման գործընթացներում: Նոր օրենքների և նորմատիվ ակտերի ընդունման հաճախականությունը անհամատեղելիություն և հակասություն է առաջացնում ինչպես տարբեր հարկային օրենքների, այնպես էլ միևնույն օրենքի ներքին կառուցվածքի շարադրանքում: Ավելին, նորմատիվ ակտերը, որոնք պետք է ծառայեն նոր օրենքների գործնական իրականացմանը, հաճախակի եական ուշացումով են ընդունվում:

Յարկային իրավախախտումների համար պատասխանատվություն սահմանող իրավական ակտերը շատ հաճախ չեն հասցվում կատարողներին, որը ծնուն է հարկային գործունեության անտեղ-

¹ Словарь иностранных слов, М., 1998, стр. 200.

յակություն:

Յարկային օրենսդրության լուսաբանմանն ուղղված բացատրական աշխատանքների պակասը լուրջ իրավական անվտահություն է ստեղծում շահագրգիռ կողմերի համար: Օրենքների արագ փոփոխությունները, դրանց բնող ենթաօրենսդրական ակտերի ընդունման ուշացումները պետական ծառայողներին դնում են ծանր կացության մեջ: Նրանք չեն հասնում ծանոթանալ և նախապես պատրաստվել դրանց կիրարկման համար: Խառնաշփոթության մեջ են հայտնվում նաև ձեռներեցները, որոնց համար նույնպես վստահելի իրավական տեղեկատվությունը հեշտ հասնելի չէ: Դրությունը ծանրանում է նաև նրանով, որ օրենքները և նորմատիվ ակտերը պարզապես վատ են շարադրված, երբեմն հակասում են միմյանց, առաջացնում տարակուսանք:

Երկրի հարկային համակարգը միայն գործող օրենքներով չի բնութագրվում: Անհրաժեշտ են նաև գործուն կիրարկման մեխանիզմներ: Տնտեսական բարեփոխումները չեն կարող առաջ ընթանալ, և մասնավոր ներդրողները, ներառյալ օտարերկրյա ձեռներեցները, իրենց լիովին պաշտպանված չեն զգա Յայաստանում ներդրումներ կատարելիս՝ առանց պատշաճ գործող դատաիրավական համակարգի. որը պետք է պաշտպանի տնտեսական իրավունքները խախտումներից և ստեղծի երաշխավորված միջավայր գործադրության համար:

Յարկային իրավահարաբերությունների մասնակիցների դատական պաշտպանվածության պրակտիկան գնահատելիս այն տպավորությունն է ստեղծվում, որ հասարակության հարգանքը դատարանի նկատմամբ ծայրաստիճան ցածր է: Մարդիկ չեն հավատում դատական համակարգին, իետևաբար խուսափում են նրանից: Մինչև այս վերաբերմունքը չփոխվի, և հասարակությունը չհավատա ու չհարգի դատավորներին, նա չի օգտվի դատական համակարգից: Եվ պատահական չէ, որ հարկային օրենսդրության խախտումներից առաջացած տնտեսական վեճերը մեծամասամբ լուծվում են դատարանից դուրս, հովանավորչության ճանապարհով:

Այս ամենը, ինչ խոսք, իմանական գծերով բացասաբար է անդրադառնում հարկային պատասխանատվության ինստիտուտի ձևավորման և զարգացման գործընթացի վրա:

Յարկային պատասխանատվության ինստիտուտի ձևավորման հարցում բացասական ազդեցություն ունեցան ինչպես ՀՀ քրեական,

այնպես էլ վարչական իրավախախտումների վերաբերյալ նախկին օրենսգրքերը: Այսպես, 90-ական թվականներին ՀՀ քր. օր.-ի «Տնտեսական հանցագործություններ» գլուխը ներառում էր շուրջ 28 հոդված, որոնցից միայն երկուսն էին վերաբերում ձեռնարկատիրությանը և եկամուտների հայտարարագրմանը: Իսկ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 12-րդ գլուխը՝ «Վարչական իրավախախտումներ» առևտուի, ֆինանսների և տնայնագործական արհեստներով գբաղվելու բնագավառում», պարունակում էր 13 հոդված, որոնցից միայն չորսն էին ինչ-որ ձևով առնչվում նոր օրենսգրքի 12-րդ գլուխում գործող հարկային պատասխանատվության ինստիտուտի որոշ հոդվածներին: Յարկային սանկցիաները՝ կապված օրենսդրության գործողության և հարկային մարմինների ծառայողների պատասխանատվության սահմանման հետ, իրավական կարգավորում ստացան սկսած 1995թ.-ից: Պատասխանատվություն սահմանող իրավական ակտերը մեծամասամբ շարադրված էին հակասական սկզբունքներով, և դրանց կիրառումը անարդյունավետ էր:

1998 թվականին ընդունվեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, որը բավարար ուշադրություն չդարձրեց հարկային իրավահարաբերությունների ոլորտին՝ հաշվի չառնելով հարկային իրավունքի նորմերի կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև հարկային մարմինների աշխատանքի փորձը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում արձանագրվեցին հարկային իրավական նոր հասկացություններ, որոնց սահմանումները մինչև օրս լուսաբանված չեն քրեական դատավարական օրենսգրքում:

Յարկային պատասխանատվության ինստիտուտի գործնական կիրառման վրա եական ազդեցություն ունեցավ 2000 թվականին ընդունված «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, որի հիմնական նպատակը պետական մարմինների կողմից տնտեսվարող սուբյեկտների մոտ անցկացվող ստուգումների կանոնակարգումն էր, ինչը հիմնականում ուղղված էր բացառելու պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մասնավոր ձեռնարկատիրության գործունեության անհարկի և ավելորդ միջամտությունը: Յարկային օրենսդրության առանձնահատկությունների անտեսումը և մեկ օրենքի շրջանակներում բոլոր պետական մարմինների ստուգումները կանոնակարգելու փորձը հաճացրեցին նրան, որ հարկային, ինչպես նաև վարչական և քրեական

օրենսդրությամբ նախատեսված շատ պատասխանատվության տեսակների կիրառման հնարավորություններն ուղղակի սահմանափակվեցին:

Հարկային ոլորտի պատասխանատվության ինստիտուտի ձևավորման առանձնահատկությունների առումով պետք է նշել 2002թ.-ին ընդունված «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որի 41 և 42-րդ հոդվածները նվիրված են հարկային ծառայողների պատասխանատվության ենթարկման հիմքերին: Պատասխանատվության կիրառման հիմք են հանդիսանում նրանց կողմից ինչպես հարկային ծառայության, այնպես էլ հարկային օրենսդրության դրույթների խախտումները և ներգործություն սահմանող այն անուղղակի եղանակները, որոնցից մի քանիսը հնարավոր է առաջիկայում ներառվեն հարկային օրենսգրքում՝ որպես հարկային պատասխանատվության ինստիտուտի մաս:

Համակարգված ու փորձարկված վարչական ներգործության միջոցների բացակայությունը, վարչական և քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված անցումային շրջանի հարաբերություններին ոչ լիարժեք գործընթացները, հարկային մարմինների կողմից կիրառվող ներգործության անարդյունավետ միջոցները, որոնց արդյունքում հարկային մարմնի պաշտոնատար անձիք հարկային իրավախախտումների փաստի բացահայտման, արձանագրման և հանապատասխան պատժամիջոցների կիրառման համար, որպես կանոն, որմում էին ստուգումների և հարկերի մասին օրենքներով նախատեսված այլ միջոցների, թուլացնում էին հարկային պատասխանատվության ինստիտուտի կիրառման հիմնավորվածությունը: Պակաս կարևորություն չէր ներկայացնում մասնագետ իրավաբան կադրերի պակասը, ինչպես նաև գործող օրենսդրության մեջ հարկային իրավախախտում հասկացության բացակայությունը: Արդյունքում խիստ դժվարանում էր կոնկրետ պատասխանատվության տեսակների կիրառման հիմք հանդիսացող օրինախախտումների փաստերի ապացուցումը, քանի որ ինչպես հարկատունների մոտ, այնպես էլ դատական ատյաններում նկատվում էր հարկային օրենսդրության իմացության պակաս, որի պառճառով էլ դատական պատասխանատվությունը կորցնում է արդյունավետությունը:

Հարկային պատասխանատվության ինստիտուտը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, որը, կարծում եմ, վերջնական տեսքի կրեռվի միայն Հարկային օրենսգրքի ընդունմամբ, որտեղ կսահման-

վեն հարկային իրավախախտման և պատասխանատվության հասկացությունները, պատասխանատվության տեսակները, կամքողջացվեն իրավահարաբերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, դրանց կիրառման ընթացակարգն ու ժամկետները: Իսկ ՎԻՎ-ի և ՔՕ-ի հարկային իրավախախտումների համապատասխան հոդվածներն իրենց էությամբ և բովանդակությամբ կամփոփեն Հարկային օրենսգրքում ամրագրված սուբյեկտների պարտականությունների չկատարման, սխալ կատարման կամ իրավունքների չարաշահման հասկացությունները:

Հարկային իրավունքի տեսության և գործող օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ հարկային իրավախախտումների կապակցությամբ կիրառվող պատասխանատվությունն ունի որոշակի առանձնահատկություններ:

Իրավունքի տեսության մեջ առանձնացվում են քրեական, վարչական, կարգապահական, քաղաքացիական պատասխանատվության տեսակները: Իրավաբանական գրականության էջերում այսօր որոշ հեղինակների կողմից, որպես պատասխանատվության ինքնուրույն ձև, առանձնացվում է նաև ֆինանսական պատասխանատվությունը: Գիտական գրականության մեջ այդ առումով կան են տարբեր տեսակետներ: Յեղինակների մի մասը կարծում է, որ անթույլատրելի է «ֆինանսական պատասխանատվություն» տերմինի օգտագործումը, մյուսները գտնում են, որ ֆինանսական պատասխանատվությունը, ըստ կարգավորման առարկայի և մեթոդի, հանդիսանում է վարչական պատասխանատվության տարատեսակ: Գործող նորմատիվային ակտերում «ֆինանսական պատասխանատվություն» տերմինը ամենից հաճախ օգտագործվում է կողմերի գույքային, դրամական պատասխանատվության նշանակությամբ:

Ինչ վերաբերվում է հարկային պատասխանատվությանը, ապադրան հատուկ են ինչպես իրավական պատասխանատվության բոլոր հատկանիշները, այնպես էլ որոշ առանձնահատկություններ, որոնք ունեն ճյուղային նշանակություն:

Ընդհանուր իրավական պատասխանատվության առանձնահատկություններ պետք է համարել՝

- օրինականության և իրավակարգի պահպանումը,
- պետության կողմից կիրառվող հարկադրանքը,
- իրավական նորմերի խախտումը,
- պատասխանատվության կիրառման օրենքով սահմանված վա-

րույթը և այլ ընդհանուր օրինաչափություններ:

Հարկային պատասխանատվությանը ներհատուկ են մի շարք առանձնահատկություններ. որոնք պայմանավորված են այդ ծառայության պետական և ազգային-տնտեսական անվտանգության խնդիրներով: Հարկային պատասխանատվության առաջին առանձնահատկությունն այն է, որ պատասխանատվության կիրառումը կարգվորվում է հարկային իրավունքի նորմերով, երկրորդը՝ պատասխանատվության կիրառման համար իմբռ է հանդիսանում հարկային իրավախախտումը, երրորդը՝ հարկային պատասխանատվությունը իրավախախտի նկատմամբ կիրառվում է միայն ֆինանսական սանկցիաների՝ տույժերի և տուգանքների գանձմանը:

Հարկային պատասխանատվության առանձնահատկությունների համակարգում կարելի է առանձնացնել ֆինանսական սանկցիաները՝ այնքանով, որ ֆինանսական սանկցիայի չափը, որպես կանոն, կապված է բյուջեի հարկային կորուստների չափին՝ այնպիսի ծավալային արտահայտությամբ, որ ապառքի և ժամկետանց վճարումների տուգանքի և տույժի չափերը համապատասխանեն կորուստներին:

Հարկային օրենսդրության չլուծված խնդիրների թվին կարելի է դասել նաև «ապառք» հասկացության լուսաբանման բացը: Կարծում եմ՝ ապառք ասելով պետք է հասկանալ հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարված հարկը, ինչպես նաև այլ պարտադիր վճարումների գումարը:

Օրենսդրությամբ նախատեսված է հարկային իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու հատուկ կարգ, ինչը ենթակա է անվերապահ կատարման, այն կարող է բողոքարկվել պատասխանատվության միջոց նշանակողի անմիջական դեկավարին, նրա վերադասին կամ դատական կարգով:

Հարկային պատասխանատվության սուբյեկտ կարող են համարվել ինչպես հարկ վճարողը, այնպես էլ օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը:

Հարկային օրենսդրությունը վկայում է, որ հարկային պատասխանատվությունը ֆինանսական ներգործության միջոցներ նախատեսող այն նորմերի ամբողջությունն է, որոնք սահմանված են հարկերի մասին. առանձին հարկատեսակների, ինչպես նաև դրանց փոխարինող հաստատագրված վճարների մասին ՀՀ օրենքներով: Նշված ներգործության միջոցները կիրառվում են պետական լիազորված

մարմինների կողմից: Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ հարկային ներգործության միջոցների կիրառման իրավունքը վերապահված է ՀՀ կառավարության առընթեր պետական նկանությունների կոնիտեին «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված է հարկադրանքի միջոցների կիրառման հիմքերը, կարգը և գործընթացը (Վարույթը):

Ի մի բերելով հարկային օրենսդրությունը՝ կարելի է ասել, որ գործող օրենսդրությամբ հարկային պատասխանատվություն է սահմանված՝

• «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23, 24, 25, 26, 27, 28, 28², 28³ հոդվածներով,

• «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69, 70 հոդվածներով,

• «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածով,

• «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածով,

• «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 42, 43, 43¹, 44¹, 45 հոդվածներով,

• «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածով,

• «Չողի հարկի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով,

• «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածով,

• «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94, 94¹, 95 հոդվածներով,

• «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածով,

• «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով:

Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձիք: Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ ՀՀ առանձին հարկատեսակների մասին օրենքներով սահմանված դեպքերում հարկի վճարման պարտավորությունը կարող է դրվել հարկային գործակալի վրա: Մասնավորապես այդպիսի կարգ սահմանված է «Եկամտահարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներով:

Հարկային օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության այս կամ այն տեսակի կիրառումը էապես պայմանավորված է

այն հասարակական հարաբերությունների շրջանակներով, որոնք հանդես են գալիս որպես իրավախախտման օբյեկտ: Ուսումնասիրությունները պարզեցնելու առումով նպատակահարմար ենք գտնում հարկային օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության հիմքերը դասակարգել ըստ հարկային իրավանորմերի խախտման հասարակական և պետական վտանգավորության աստիճանի: Այսպես, հարկային օրենսդրությամբ պատասխանատվութուն է սահմանվում հաշվապահական կամ օրենսդրությամբ սահմանված այլ հաշվառման փաստաթղթերը չներկայացնելու կամ դրանք կոպիտ խախտումներով վարելու համար:

Եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումներին վերաբերվող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարություն և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով (տես ՀՀ կառավարության 18.09.98թ. N 580 որոշումը): Հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերն անուղղակի եղանակով հաշվարկելու համար որպես հիմք կարող են ճանաչվել ակտիվները, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալները, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսների, գույքագրման և չափագրման տվյալները, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունները, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների համար կիրառված գները և այլ ցուցանիշները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պատասխանատվության կիրառման հիմք կարող է հանդիսանալ հարկերի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու հանգամանքը:

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպ-

քում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 %-ի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ: Տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար: «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 12-ի օրենքի որոշ հոդվածների վերաբերյալ Հարկային ծառայության հրահանգչական նամակներում պարզաբանված է, որ ստուգումներով հայտնաբերված գումարների նկատմամբ տույժերը հաշվարկվում են՝ հաշվի առնելով գերավճարների առկայությունը: Սա նշանակում է, որ եթե հարկ վճարողը հարկի վճարման համար սահմանված ժամկետում չի կատարել վճարումը կամ սխալ հաշվարկման արդյունքում պակաս է վճարել, ապա ստուգումների ժամանակ չվճարումների հայտնաբերման դեպքում օրենքի 23-րդ հոդվածով սահմանված տույժը հաշվարկվում է այդ չվճարումների և տվյալ պահի դրությամբ առկա գերավճարների տարբերության գումարը հիմք ունենալով:

Տույժի դրույքաչափի մեծությունը, ինչպես նաև դրա կիրառման ժամկետները այսօր ենթարկվել են եական փոփոխությունների:

Սասնավորապես, հարկերի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու համար տույժի դրույքաչափերը ստորև՝ աղյուսակում, բերված իրավական ակտերով 1992-2005թթ. ենթարկվել են փոփոխությունների, որոնք մեջ են բերվում 2004թ. «ԱԲԳ Կողմից «Պատասխանատվությունը հարկային խախտումների համար» 3-րդ լրանշակված իրատարակությունից²

² Տես մանրամասն, Պատասխանատվություն հարկային խախտումների համար, Ե., 2004, էջ 18:

Ժամանակաշրջան	Օրական տույժ	Օրենագումար եի՞նք
մինչև 26.03.1993	0.5%	23.03.1992-ի «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և առողջերի մասին» ՀՀ օրենք, Խոդա 23
27.03.1996- 31.05.1997	0.25%	05.03.1996-ի «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և առողջերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վտվախություն կատարելու մասին» ՀՀ օրենք
01.06.1997-	մինչև ժամկետանց 90-րդ օրը՝ 0.1%	14.04.1997-ի «Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խոդա 23
31.12.1998	91-րդ օրվանից՝ 0.3%	
01.07.1997-ից	ժամկետանց օրերի նկատմամբ տույժի հաշվարկման 365 օրյան սահմանափակում	21.10.1997-ի «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացնուներ կատարելու մասին» ՀՀ օրենք
01.01.1999-ից	0.2%	28.12.1998-ի «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վտվախություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
01.01.2001-ից մինչ այսօդ	0.15%	26.12.2000-ի «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վտվախություններ և լրացնուներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ինչպես վկայում են իրավական ակտերի համեմատական վերլուծությունները, սահմանված ժամկետից հարկերի վճարումը ուշացնելու համար նախատեսված տույժի դրույթաչափը 1992թ.-ից նվազել է 3 անգամ: Նշված ժամանակաշրջանում եղել են պահեր, երբ հարկային օրենսդրությամբ նախատեսված տոկոսաչափը եղել է ավելի ցածր, քան բանկային տոկոսը: 1997թ.-ից տույժի հաշվարկման ժամկետանց օրերի սահմանափակում նոցվեց՝ առավելագույնը 365 օր,

ինչ 2001-ի հունվարի 1-ից, երբ ժամկետանց տույժի դրույթաչափը սահմանվեց 0.15%, գուգահեռաբար հարկային օրենսդրությունը ենթարկվեց փոփոխությունների, համաձայն որի՝ հարկերի վճարումն ուշացնելու դեպքում հարկային մարմինը, բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած դեպքերի, եթե հարկային պարտավորությունը սահմանված ժամկետից հետո չի կատարվում 183 օրվա ընթացքում՝ հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան: Հարկային մարմինը հայցից չի կարող իրաժարվել, քանի դեռ հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն: ՀՀ կառավարության 31.07.2001թ. «Հարկերի և սոցիալական ապահովության վճարների ուշացման դեպքում լիազոր մարմինների կողմից դրանց վճարման համար օրենքով սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում հարկ վճարողին կամ ապահովադրին անվճարունակ ճանաչելու վերաբերյալ դատարան հայցադիմումներ ներկայացնելու բացառությունների դեպքերը սահմանելու մասին» N691 որոշման համաձայն հարկերի ուշացման դեպքում հարկային մարմինները դրանց վճարման համար օրենքով սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու վերաբերյալ դատարան հայցադիմումներ չեն ներկայացնում հետևյալ դեպքերում՝

◆ ՀՀ կառավարության որոշմամբ հավանության է արժանացել պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը, սահմանվել է պարտապանի պարտավորությունների կատարման ժամանակացույց, և պարտապանն իր պարտավորությունը կատարում է սահմանված ժամանակացույցին համապատասխան:

◆ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքին համապատասխան պարտապանի մասնավորեցման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված մասնավորեցման գործընթացի ավարտի դեպքում՝ դրան հաջորդող 60 օրվա ընթացքում:

◆ Պարտապանն ունի «Պետական գնումների (պետական պատվերների), քլիրինգային առաքումների և միջազգային պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների մասով հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան հաշվարկված և չվճարված տույժեր՝ պարտավորությունների այդ մասով:

Այս գործընթացները վկայում են, որ հարկերի վճարումը սահման-

ված ժամկետից ուշացնելու համար տույժերի սահմանման նպատակը ոչ թե տույժերի չափի մեծացումն է, այլ, որպես ներգործության միջոց, ունի կանխարգելիչ բնույթ՝ ապահովել հարկերի ժամանակի վճարումը:

Հարկային պատասխանատվության կիրառման համար որպես հիմք կարող է հանդիսանալ հարկային մարմին ներկայացվող հաշվարկը (հայտարարագիրը) ուշացնելը: Այս իրավախախտման համար պատասխանատվություն սահմանված էր դեռևս 1997թ.: Հիշատակված հիմքով պատասխանատվության ներարկելու օրենքոր և օրենքիվ կողմը ներկայում ներարկվել է փոփոխությունների: Այսպես, մինչև 30.05.1997թ. այն վճարողները, որոնք մինչև հարկերի վճարման համար սահմանված ժամկետները հանապատասխան ժամանակամիջոցի համար չունեին հաշվապահական հաշվետվություններ ու հաշվեկշիռներ, ինչպես նաև ըստ սահմանված ծեփի հաշվարկներ, վճարում էին նախորդ ժամանակամիջոցի եկամտի (շահույթի), իսկ դրա մասին տվյալների բացակայության դեպքում՝ ընթացիկ տարվա համապատասխան ֆինանսական ցուցանիշների հիման վրա հաշվարկված հարկի գումարի 110%-ը: Վերը նշված փաստաթղթերը ներկայացվելուց հետո կատարվում էր հարկերի վերահաշվարկ: Փաստաթղթերը սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշացնելու դեպքում վճարողից գանձվում էր տույժ՝ երկու ամսության գումանցող յուրաքանչյուր օրվա համար հարկի գումարի 5%-ի չափով: «Հարկերի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկ վճարողների կողմից հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկը հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար³ գանձվում է տույժանք՝ դրա հետևանքով չմուծված հարկի ընդհանուր գումարի 5%-ի չափով, բայց ոչ ավելի, քան այդ հարկի ընդհանուր գումարն է: Գործող իրավական ակտից պարզ երևում է, որ այսօր այս իրավախախտումը հարկ վճարողի մոտ ոչ մի ֆինանսական պարատավորություն չի առաջացնում, եթե հաշվարկի ներկայացումը ուշացնելը կամ հաշվարկի սխալ կազմելը չի հանգեցրել հարկի չվճարման կամ թերվճարման (ասենք՝ սահմանված կարգով հաշվարկված հարկի գումարը ժամանակին վճա-

³ Գույքահարկի հաշվարկի դեպքուն այս տույժանքի հաշվարկն այլ է. տես ՀՀ ՊՏ 2003/2/237/, 08.01.03 «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս:

րել է բյուջեն, սակայն դրա համար նախատեսված հաշվարկի ձևը չի ներկայացվել հարկային մարմնին կամ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով բյուջեն վճարման ենթակա հարկի գումարներ չեն առաջացել, սակայն հաշվետվություն ներկայացնելը պարտադիր է եղել):

Պատասխանատվություն հաշվապահական հաշվառման սահմանված կարգը խախտելու համար: Նախկինում հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հայտարարգրերը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթերը սխալ կազմելու համար հարկ վճարողը վճարում էր տույժանք՝ հարկի գումարի 10%-ի չափով: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի ընդունմանց հետո այդ նույն խախտումների համար հարկ վճարողից գանձվում է տույժանք՝ խախտումների հետևանքով բյուջեն չմուծված կամ պակաս մուծված հարկերի գումարի 10%-ի չափով⁴: Այսինքն՝ եթե նշված խախտումներն ու բացթողումները տեղի են ունեցել, սակայն դրանք չեն հանգեցրել հարկի գումարի թերվճարման:

Պատասխանատվություն ապօրինի գործունեության համար: Այս իրավախախտման համար հարկային պատասխանատվություն սահմանված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով, համաձայն որի՝ չգրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված, կամ առանց լիցենզիայի և տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս այդ գործողությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման ներակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն) գանձվում է տույժանք այդ գործունեության արդյունքում հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50% չափով: Տույլատրը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում՝ տույժանք գանձվում է շրջանառության 100% չափով:

Հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների անձնական գույքի /ներառյալ և անշարժ/ և իրերի օտարումը բացառությամբ

⁴ Տես «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տույժերի մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքների 25-րդ հոդվածները:

ճրենքով նախատեսված դեպքերի: ՀՅ հարկային օրենսդրությունը չի սահմանում ապօրինի ձեռնարկատիրության հասկացությունը, բայց խոսվում է ապօրինի գործունեության մասին՝ որոշակի տարրերություններով («Հարկերի մասին» ՀՅ օրենքի 26-րդ հոդված): ՀՅ գործող օրենսդրության կիրառման առումով քննարկվող իրավախախտման բացահայտման և դրան համապատասխան պատասխանատվության (ոչ միայն հարկային, այլ նաև վարչական և քրեական) կիրառման համար կարենոր է իիշտակված երկու հասկացությունների («ձեռնարկատիրություն») և «ապօրինի ձեռնարկատիրություն») ճիշտ սահմանումը՝ այն հաշվով, որ իիշտակված իրավական կատեգորիաները օրենսդրության բոլոր ճյուղերում ընկալվեն միատեսակ: Համաձայն ՀՅ ՎԻԿ օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելը առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ առանց լիցենզիայի պետական լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը, կամ առանց համապատասխան լիցենզիայի արտարժույթի փոխանակման գործունեությամբ զբաղվելը, կամ պետական մենաշնորհ հանդիսացող ձեռնարկատիրական գործունեությամբ ապօրինի զբաղվելը է: Հարկային օրենսդրությանը ձեռնարկատիրական գործունեության սահմանումը տրված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՅ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ «Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց»: ՀՅ քաղաքացիական օրենսգիրքը ձեռնարկատիրական գործունեության այլ սահմանում է պարունակում՝ «Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»: Վարչական և քրեական օրենսդրության կիրառման իմաստով, կարծում եմ, առավել ընդունելի է ՀՅ քաղաքացիական օրենսգրքի սահմանումը, որը, ի տարբերություն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՅ օրենքում բերված սահմանման, առավել ընդգրկուն է և օրենսդրության կիրառման առումով միասնական ու տրամաբանա-

կան⁵:

Հարկային պատասխանատվության կիրառման հիմք է հանդիսանում նաև հարկվող օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը: Հարկվող օբյեկտը թաքցնելու (պակաս ցույց տալու) համար պատասխանատվություն սահմանված է «Հարկերի մասին» ՀՅ օրենքի 27-րդ հոդվածով և որոշ հարկատեսակների մասին ՀՅ օրենքներով: «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՅ օրենքի համաձայն թաքցված (պակաս ցույց տված) համարվում էին հարկվող այն օբյեկտները, որոնք ցույց չեն տրվել հարկային մարմիններին ներկայացված հաշվապահական հաշվետվություններում, հաշվեկշիռներում, հաշվարկներում և հայտարարագրերում: «Հարկերի մասին» ՀՅ գործող օրենքը տալիս է թաքցված (պակաս ցույց տված) հարկվող օբյեկտի փոքր-ինչ այլ սահմանում. «Հարկվող օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը՝ հարկային տեսչություն ներկայացված տվյալ հարկատեսակի հաշվարկներում (հայտարարագրերում) հարկվող օբյեկտը ցույց չտալը, պակաս ցույց տալը կամ էլ գործունեություն չիրականացնելու (հարկվող օբյեկտներ չառաջանալու) մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:

Գործունեություն չիրականացնելու, ինչպես նաև հարկվող օբյեկտ հանդիսացող գույք չունենալու մասին հայտարարությունը հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկի (հայտարարագրի) ամփոփ ձևն է»: Այս իրավախախտման համար 1992-ից հետո ընկած ժամանակաշրջանում պատասխանատվությունը՝ կապված իրավախախտման օբյեկտի և օբյեկտիվ կողմի այնպիսի փոփոխությունների հետ, որոնք եական են դարձնում խախտման հետևանքները, գործող իրավական ակտերի վերլուծությամբ օգնում է ճիշտ հասկանալ և որակել իրավախախտումը:

Հարկվող օբյեկտը թաքցնելու (պակաս ցույց տալու) համար տուգանքների չափերը, հարկվող օբյեկտի համար հաշվարկված հարկի գումարի նկատմամբ հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները այսօր հետևյալ պատկերն են ներկայացնում.

⁵ Տես Պատասխանատվություն հարկային խախտումների համար, էջ 25-26:

Հարկառելունկ	Տաղանքի գործադրյամ ժամանակաշրջան	Տակամք ստացված ընթացքամ		Օրենսդրության հետքը
		1-ին խախտման համար	Կրկնվող խախտման համար	
ՀԱՐԿԱՆՀԱՐԱԿԱ	Ծինչն 01.01.1998	100 %	200%	14.04.1992-ի «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27 30.09.1997-ի «Շահուրանհարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 42
	01.01.1998 -ից	50%	100%	14.04.1997-ի «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27 30.09.1997-ի «Շահուրանհարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 69

ՄԱՅՈՎԱՅՐԻ ՀԱՐԿԱՆՀԱՐԱԿԱ	Ծինչն 30.05.1997	100%	200%	23.03.1992-ի «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27
	30.05.1997-01.08.2000	50%	100%	14.04.1997-ի «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27
	01.08.2000-ից	100%	100%	14.04.1997-ի «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27 07.07.2000-ի «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 10
ՄԱՅՈՎԱՅՐԻ ՄՐԺԵՔԻ ՀԱՐԿԱՆՀԱՐԱԿԱ	Ծինչն 01.07.1997	50%	200%	30.06.1993-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 22
	01.07.1997-ից 01.01.2002	30%	30%	14.05.1997-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 43
	01.01.2002-ից	50%	50%	14.05.1997-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 43
ԳՈՎՅՈՒՅՆԱԿԱ	Ծինչն 30.05.1997	100%	200%	23.03.1992-ի «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27 03.12.1995-ի «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 11
	30.05.1997-ից	50%	100%	14.04.1997-ի «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27 27.12.1997-ի «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 17 (01.01.2005-ից)
ՀԱՐԿԱՆՀԱՐԱԿԱ	Ծինչն 30.15.1997	100%	200%	23.03.1992-ի «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27 27.04.1994-ի «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 18

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշողակածների վերաբերյալ հարկային պետական ծառայության հրահանգչական նամակի համաձայն՝ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված տուգանքները չեն կիրառվում, եթե խախտումը կատարելուն հաջորդող ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից մինչև ստուգումը պատարվել է հարկվող օբյեկտի համապատասխան ուղղումներ: Չնայած հրահանգը վերաբերվում է բոլոր հարկատեսակների գծով հարկվող օբյեկտների թաքցմանը, սակայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքը այդպիսի դրույթ չի պարունակում, այլ խոսքով՝ հրահանգում շարադրված պարզեցումները և մեկնաբանությունները հակասում են օրենքի պահանջներին, որը այսօր վերանայման կարիք ունի:

Պատասխանատվություն ծեռնարկատիրական գործունեության
առարկաները չգրանցելու համար: Այս իրավախախտման համար հար-
կադիմական պատասխանատվություն սահմանող նորմերը «Հարկերի մասին»

Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար օրենքով սահմանված պատասխանատվություն: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածների համաձայն՝ նշված օրենքների խախտման համար հարկ վճարողները և հարկային գործակալները պատասխանատվություն են կոում Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով, այսինքն՝ տվյալ յաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով, այսինքն՝ տվյալ դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով. ինչով սահմանված է, որ հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային տեսչության կողմից հաշվարկված) հարկի գումարը. ինչպես նաև տուգանք այդ գումարի 50% չափով, իսկ հարկային տեսչության կողմից խախտումն արծանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն հարկատեսակի գծով հարկվող օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում տուգանք՝ հարկի անբողջ գումարի չափով, եթե հարկային օրենսդրությանը այլ բան սահմանված չէ: Այլ բան սահմանված է մասնավորապես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, համաձայն որի՝ ԱԱՀ -ով հարկվող շրջանառության թաքցման կամ պակաս ցույց տալու, ինչպես նաև օրենքով նախատեսված կարգի խախտումով ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ –ի գումարները պակասեցնելու (հաշվանցելու) հետևանքով բյուջե վճարման ենթակա ԱԱՀ –ի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ –ի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50% չափով: Հետևաբար, քանի որ հաստատագրված վճարն իրենից ներկայացնում է պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի և (կամ) շահութահարկին (Եկամտահարկին) փոխարինող պարտադիր և անհատույց վճար («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված), ուստի հաստատագրված վճարի հարկման բազան թաքցնելու դեպքում վճարողներից տուգանքը գանձվում է հաստատագրված վճարի բաղադրիչների համար առանձին օրենքով նախատեսված տուգանքների չափերով, այդ բաղադրիչների՝ հաստատագրված վճարի կառուցածքում ունեցած բաժիններին (ԱԱՀ՝ 60%. որոշ գործունեության տեսակների համար՝ 0%) համամասնորեն:

⁷ Այսուսակը՝ ըստ «Պատասխանատվություն հարկային իրավախախումների համար», էջ 26-34:

⁶ Հետազոտման տեղեկանք: «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 100 հոդվածի համաձայն՝ հարկման բազան թաքցնելը կամ պակաս ցույց տալը առաջացնում

ՀՅ օրենքի գործողության մեջ մտցնելուց հետո նույնպես ենթարկվել են էական փոփոխությունների: Մինչև 1998թ.-ը ձեռնարկատիրական գործունեության առարկաներ չգրանցելու, առաքող կամ տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքը, ինչպես նաև կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները ՀՅ կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողներից գանձվում էր տուգանք՝ այդ արտադրանքի, ապրանքի աշխատանքների, ծառայությունների ամբողջ արժեքի չափով: ՀՅ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից բարձր գներով իրացնելիս՝ հարկ վճարողից գանձվում էր տուգանք այդ տարբերության գումարի չափով (այդ թվում՝ նաև չիրացված արտադրանքի, ապրանքների մուացորդի համար): Նշված տուգանքները չեն կիրառվում, եթե խախտումները կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանում, որի համար սահմանված կարգով հարկ վճարողների կողմից ներկայացված էին հաշվապահական հաշվետվությունները (հայտարարագրերը): Նշված տուգանքների կիրառումը հարկ վճարողին չէր ազատում սահմանված կարգով հարկային պարտավորությունների կատարումից:

1998 թվականի նոյեմբերի 20-ից հետո սահմանվեց նոր կարգ, որի համաձայն սահմանված կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25%-ի չափով (այդ թվում՝ իրացված մասի համար):

Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից խախտման ֆաստն արձանագրելուց հետո՝ երեսունօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Հարկային մարմնի կողմից խախտման ֆաստն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու կրկնական ֆաստն արձանագրելու դեպքում գանձվում է տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների իրացման գներով հաշվարկված ամբողջ արժեքի 50%-ի չափով, այդ թվում՝ իրացված մասի համար: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային տեսչության կողմից խախտման ֆաստն արձանագրելուց հետո՝ երեսունօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Ձեռնարկատիրական գործունեության առարկաները ՀՅ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից բանկ իրացնելիս հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ տարբերության գու-

մարի 25%-ի չափով, այդ թվում՝ նաև չվաճառված-չիրացված ձեռնարկատիրական գործունեության առարկաների մնացորդի համար: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից խախտման ֆաստն արձանագրելուց հետո երեսունօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Հարկային մարմնի կողմից խախտման ֆաստն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության առարկաները ՀՅ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից բանկ իրացնելու կրկնական ֆաստ արձանագրելու դեպքում գանձվում է տուգանք՝ տարբերության գումարի 50% -ի չափով, այդ թվում՝ նաև չիրացված ձեռնարկատիրական գործունեության առարկաների մնացորդի համար: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից խախտման ֆաստն արձանագրելուց հետո՝ երեսունօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Վերը նշված տուգանքները չեն կիրառվում, եթե խախտումները կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանում, որի համար սահմանված կարգով հարկ վճարողի կողմից ներկայացված են հաշվապահական հաշվետվություններ կամ իրացման շրջանառությունից բխող հարկային պարտավորություններն արտացոլող՝ հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ ֆաստաթղթեր:

Այս նորմի առկայությունն ըստ երթյան պրակտիկայում դժվարացնում է հարկային մարմինների աշխատանքը: Գնորդի պահանջով մատակարարվող ապրանքների, մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների գործարքների համար հաշվարկային ֆաստաթուղթ (այդ թվում՝ հարկային հաշիվ) ՀՅ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս չգրելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարի 25% չափով:

Օրենսդրության տարբեր ճյուղերի իրավական ակտերի ուսումնասիրությունները վկայում են, որ գործնականում հարկային հաշիվ հանդիսացող հարկային ֆաստաթղթեր դուրս գրելու միասնական կարգ հանրապետությունում գոյություն չունի: Իրավական կարգավորման անշահան դրսառումների ենք հանդիպում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՅ օրենքի 18, 20-րդ հոդվածներում, ինչպես նաև ՀՅ քաղ. օր-ի 18-28 և 29-րդ հոդվածներում: Չնայած 2003թ. հունվարի 1-ից պատասխանատվությունը է սահմանվել հարկային հաշիվ հանդիսացող ֆաստաթղթերի գործածության համար, այնուամենայնիվ այն գրեթե կիրառում չունի:

Պատասխանատվություն առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կամ դրանց շահագործման կանոնների խախտմամբ դրամարկղային հաշվարկների իրականացնելու համար: Համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով դրամական գործարքներ իրականացնելու վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության համար կազմակերպությունը կամ անհատ ծեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով: Հսկիչ-դրամարկղային մեքենաների գորանցման կարգի և կամ շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ծեռնարկատերը տուգանվում են յոթանասունինգ հազար դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով։ Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում։

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի երկրորդ պարբերությունում նշված խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 10 օրով։ Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում։ Խախտումը թույլ տված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերների ցանկը հարկային մարմնի ղեկավարի կողմից ենթակա է հրապարակման։ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով։

Հոդվածով սահմանված գործունեության կասեցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ժառայության պետի համապատասխան որոշման հիման վրա:

Բացի այդ, տուգանքը, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում, կրկնապատվում է: Ներգործության այս միջոցը նախկինում

սահմանվում էր վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^թ և 170^{ին} հոդվածներով։ Այսօր պատասխանատվության այս տեսակը վարչական օրենսդրությամբ չի կարգավորվում։ Այն սահմանված է հարկային օրենսդրությամբ։ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման իսկության ստուգումը դիտվում է հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգման գործառույթ, որը, բնական է, պահանջում է հարկային մարմնի կողմից տրվող ստուգման հանձնարարագիր և ստուգումն ամփոփող համապատասխան տեղեկանք։ Գործնականում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման իսկության ստուգման դեպքում խախտում հայտնաբերելիս կազմվում էր ոչ թե ստուգման ակտ, ինչպես ընդունված էր ընդհանրապես հարկային ստուգումներ անցկացնելիս, այլ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն։ ՎիԿ-ի վերոհիշյալ հոդվածներով նախատեսված խախտման փաստ հայտնաբերելիս՝ այն արձանագրվում էր հարկային մարմինների տեսչական ապարատի աշխատակիցների կողմից, որոնք հիմնականում ոչ իրավաբանական կրթությամբ տեսուչներ են։ Գործնականում առաջանում էին իրավական բնույթի բարդություններ իրավախախտումների հայտնաբերման, արձանագրման և տուգանքների գանձման սահմանված կարգը խախտելու հետևանքով։ Գործընթացային խախտումները փոխադրվում էին նաև դատաքննություն։ ՀՊՄ-ների նիրառման հետ կապված պատասխանատվությունն սահմանող նորմերը վարչականից հարկային օրենսդրություն տեղափոխելը ժամանակին կատարվեց, սակայն՝ առանց օրենսդրության հակասությունների հաշվառման, որը տվյալ դեպքում որոշակի նյութական վնաս հասցրեց պետական բյուջեին։ Խոսքը վերաբերվում է ՎիԿ-ի 247-րդ հոդվածին, համաձայն որի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ սկսված գործը ենթակա է կարճման վարչական պատասխանատվություն սահմանող ակտի վերացմամբ։ Արդյունքում մինչև 01.01.2001թ.-ը ՎիԿ-ի 170^թ և 170^{ին} հոդվածների հատկանիշներով կազմված գործերով տուգանքները, որ մինչ այդ չէին գանձվել, այդպես էլ չմուտքագրվեցին բյուջե։

թեն հարկերի մասին օրենքի այս հոդվածը ըստ էության հարկային պատասխանատվություն չի սահմանում, սակայն հանդես է գալիս որպես կիրառման ակտ, որի հիման վրա իրացվում են ՎԻԿ-ով և ՔՕ-ով նախա-

Հարկային իրազախախտաներ	Հոդված	Ներգրածության միջոցներ
հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացմելը	23*	տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար՝ ժամանակին շնունդված հարկի գումարի 0.15%, բայց ոչ ավելի քան 365 օրվա համար
հարկ վճարողների կտրմից հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկը (հայտարարագիրը) հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից երկու ամսից ավել ուշացմելը	24*	տույժամբ՝ դրա հետևանքով շնունդված հարկի ընդհանուր գումարի 5% չափով այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար, բայց ոչ ավել, քան այդ հարկի ընդհանուր գումարն է
հաշվարկահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ և ՀՀ կառավարության դրամմաներով նախառեսկած դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) զրանցումներ) չփարելու կամ սահմանված կարգի խախտումներով վարելը, հաշվարկահական հաշվետվարանները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախառեսկած սյու փառարքերն ու սեղեղությունները սեղայ կազմելը	25*	տույժամբ՝ այդ խախտումների հետևանքով բյուջե շնունդված հարկի գումարի 10% չափով
ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկած կամ առանց լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ բռնյալությած վայրերից դրա այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկած կամ առօրին լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվելը (առօրինի զործունեություն)	26*	տույժամբ՝ այդ գործունեությամ արդյունքում հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկած իրացման շեշտական կամ առանց լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղված նախառեսկած 50% չափով, տույժամբ նշանակելուց հետո նեկ տարվա ընթացքում նոյն խախտումը կրկնելու դեպքում 100% (նշանակած տույժամբ ապօրինի գործունեություն իրականացնողն երի համար այդ գործունեությամ նաևով վերջնական պարտավորություն ⁸)
հարկային օբյեկտը քաջունելը կամ սլակած ցույց տալը	27*	տույժամբ՝ նախառեսկած հարկի գումարի 50% չափով, եթե հարկային օրենսդրությամբ այլ քան սահմանված չէ

⁸ Տես «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը:

⁹ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածը հարկային պարտավորությունների մեջ ներառում է թաքցրած կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի, ինչպես նաև հարկային օրենսդրությունը և ՀՀ-ում հարկային հարաբերություն-

հարկային տեսչության կողմից հախտության արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն հարկառնակի գծով հարկային գումարը կրկն քաջունելը կամ այլիս գույզ տալը		տույգանք՝ հարկառնակի գործունեության զգանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25% չափով
ծեռագրատիրական գործունեության առարկան երը չգրանցելը, այսինքն առարկայի տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, առարկանը ինչպես նաև կառույցի աշխատավորությունը կողմից տահմանված կարգով զգանց երը	28*	տույգանք՝ ծեռագրատիրական գործունեության զգանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 50% չափով
հարկային տեսչության կողմից իրախառն ուրծմագրելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկն հարկառնական գործունեության առարկան երը չգրանց ելու		տույգանք՝ ծեռագրատիրական գործունեության զգանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 50% չափով
ծեռագրատիրական գործունեության առարկան երը չգրանցված կամ առարկան երը չկառավարության կողմից սահմանված կարգով զրանցված գներից քան կամատելը (իրացնելը) եարկային տեսչության կողմից իրախառն ուրծմագրելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկն հարկառնակի գործունեության առարկան երը չգրանց ելու	28*	տույգանք՝ տարբերական զումարի 25% չափով, այդ թվում նաև շվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների եամար տարբերական զումարի 50% չափով, այդ թվում նաև շվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների եամար
ծեռագրատիրական գործունեության առարկան երը չգրանցված կամ առարկան երը չկառավարության կողմից սահմանված կարգով զրանցված գներից քան կամատելը (իրացնելը) եարկային տեսչության կողմից իրախառն ուրծմագրելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկն հարկառնակի գործունեության առարկան երը չգրանց ելու		տույգանք՝ տարբերական զումարի 50% չափով, այդ թվում նաև շվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների եամար
զնարդի պահանջով մատուցման կամ առարկան երը լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվող առօրին լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղված կամ առօրին լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղված նախառեսկած 50% չափով, տույժամբ նշանակելուց հետո նոյն խախտումը կրկնելու դեպքում 100% (նշանակած տույժամբ ապօրինի գործունեություն իրականացնողն երի համար այդ գործունեությամ նաևով վերջնական պարտավորություն ⁹)	28*	տույգանք՝ տարբերական զումարի 25% չափով, այդ թվում նաև շվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների եամար
զնարդի պահանջով մատուցման կամ առարկան երը լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվող առօրին լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղված կամ առօրին լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղված նախառեսկած 50% չափով, տույժամբ նշանակելուց հետո նոյն խախտումը կրկնելու դեպքում 100% (նշանակած տույժամբ ապօրինի գործունեություն իրականացնողն երի համար այդ գործունեությամ նաևով վերջնական պարտավորություն ⁹)	28*	տույգանք՝ 150.000 դրամի չափով, եթե այդ գործարքների լին արժեքով եամուցման զումարը կազմում է մինչև 1 մլն դրամ.

ները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տույգանքների ամբողջությունը:

		տուկանի գրծաշրմերի լրիվ արժեքը և հուտուցման գումարի 25% յափով, եթե այդ գրծաշրմերի առաջնային գումարը կազմում է 1 մլն դրամ և ավելի
ոյլաշմավորման ներակայ չղափառապերկած, ինչպես նաև ապօրինի ձևեր քերպած լյուզմանիշներով դրաշմավորմած ապրանքների և առօրինի գրծաշրմերի լրիվացրում ՀՀ կառավարության ստումանված գաճիկում ընդգրկված ապյանմեր իրացնելու	28*	այդ ապրանքների ներակայ և ոչ չղափառապերկած (այդ տպանձբային տեսքով շրջանառարկությունից բարու թարածան) հարկացին նարմիների կողմից՝ ՀՀ կառավարության ստումանում կարգու

ԹԵԱՎԱԾ ՍԱԲԿԳԻՋԱՆԵՐՐ

Գործնական աշխատանքները հեշտացնելու, հարկային պատասխանատվության կիրառման վարչական և քրեական հետապնդման վարույթի նախապատրաստմանը աջակցելու նպատակով ստորև բերվող աղյուսակում համարություններկայացված են հարկային պատասխանատվության նորմերը։ Առանձին հարկատեսակների մասին օրենքների դրույթների խախտումների դեպքում, եթե այդ օրենքներով առանձին պատասխանատվության ծևեր նախատեսված չեն, գործում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համապատասխան նորույթով⁸.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային պատասխանատվության ծերու ներկայացված են վերևի աղյուսակում, որտեղ որպես օրինակներ բերված են հարկային իրավակախտման օրյեկտը, օրյեկտիկ կողմը և այն սանկցիամեռը, որոնք ամրապնած են օրենքում*:

Գործնականում հարկային օրենսդրությունից և հատկապես հար-

*Ապդամիշ կրող հոդվածներով նախատեսված խախտումների համար ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև վարչական ապարանիանությունը:

¹⁰ Հարկային օրենսդրությամբ այլ բացառություններ են սահմանված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածով (որի համաձայն հարկ վճարողներից գանձվում է տուգանք թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարի 50%-ի չափով՝ անկախ այս խախտման կրկնողությունից), «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 2-րդ մասով և «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 5-րդ մասով (որոնց համաձայն ակցիզային հարկով և պարզեցված հարկով օբյեկտը կամ հարկման բազան թաքննելու կամ պակաս ցույց տալու համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկի գումարի չափով՝ 100%):

"Խավատումն արձանագրելով հետո Երեսունօրյա ժամկետում տուգանքը չմուտքելու դեպքում այն կրկնապատճեռում է:

Խարկային իրավավուսումը	Աերդոքտուրյան միջոցի կիրառման եղանքը	Աերդոքտուրյան միջոցը
Համբարձության հարշվարկում օրենքով սահմանված կարգով հաշվարկված վճառն ավել ցույց տալը	«Ծանոթահարիկ մասին» ՀՀ օրենքի 69 հոդված	Մուգանք՝ ավել ցույց տրված վճառի 20% չափով ¹²
Ֆիլիկիական աճճան Վճռված Եկամուտի գումարների, երանց թերակարգայն (հաշվարկան) վայրի հասցեների և այլ Եկամուտներից պահպաժ և բառու փոխացված Եկամուտահարկից գումարների մասին գրանդը տեղեկաբարեմների հարկային մարմնին ինչ հայտնելը	«Սկսամուահարկի մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածի 4 մաս	Մուգանք՝ հարկային մարմիններ մերկայացրած յուրաքանչյուր տեղեկաբարեմն համար 5.000 դրամի չափով ¹³
Անհատ ճենարկատիրաց կողմից Եկամուտների մասին հայտաբարակամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված վճառն ավել ցույց տալը ակցիային հարկեր հարկված օրենքու կամ հարկան քաղաքաց բարցնելը կամ պակաս ցույց տալը	«Եկամուահարկի մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածի 5 մաս	Մուգանք՝ ավելի ցույց տրված վճառի 20% չափով ¹⁴
Ակցիային հարկեր հարկված օրենքու կամ հարկան քաղաքաց բարցնելը կամ պակաս ցույց տալը	«Ակցիային հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդվածի 2 մաս*	Մուգանք՝ օրենսողակարանը նախատեսածից պակաս վճարված հարկի գումարի չափով

Կային պատասխանատվություն սահմանող ընթացիկ օրենսդրությունից հաջորդ աղյուսակում բերված քաղաքածքները, կարծում եմ, որպես ուղեցույց, կնպաստեն հետաքննության և նախաքննության մարմիններին հարկային օրենսդրության խախտումների կապակցությամբ նույթելոր և բռնկական օրոքներով նախապատրաստենիս:

Ինչպես վկայում են բերված աղյուսակները, հարկային պատաս-

¹² Այն հարկատունների նկատմամբ, որոնք մինչև հարկային մարդինների ստուգումներն ինքնուրուց հայտնաբերել են իրենց կողմից նախորդ տարինների վճարի ավել հաշվարկում, հաշվապահական հաշվառման մեջ կատարել են համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ են պահել իրենց հաշվառման վայրի հարկային մարդին, հիշատակված սանկցիաները չեն կիրառվում:

¹³ Եկանտահարկի հաշվարկի դեպքում, եթե հարկատուն մինչև հարկային մարմինների ստուգումներն ինքնուրույն հայտնաբերել է իր կողմից նախորդ տարիների վնասի ազել հաշվարկում, հաշվապահական հաշվառման մեջ կատարել է համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ է պահել հաշվառման վայրի հարկային մարմնին, միևնույնն է՝ չի ազատվում պատասխանատվությունից:

<p>Խաստանագրված վճար վճարողի լորդիք հարկային մարդին ներկայացվու տևողաբարյուններուն առևտոքի իրականացման պայման յուաքանչյատ առևտուրական գործունեաթյունն իրականացնեողի վկաբերյալ տևողաբարյուն շնորհացնելու դեպքում</p>	<p>«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 28-րդ եռովկած*</p>	<p>տուգանք՝ 500.000 դրամի շահովով</p>
---	---	---

խանատվություն սահմանող մորթերին գուցահեռ հարկ վճարողի ոչ իրավաչափ վարքագծի դեպքում սանկցիաների կիրաշնան հնարավորություն է ընձեռում նաև վարչական օրենսդրությունը: Ի տարրերություն հարկային օրենսդրության, վարչական օրենսդրությանը նախատեսված սանկցիաների կիրառումը պարտադիր չէ, այլ թողնված է հարկային նարմնի համապատասխան պաշտոնատար անձի հայեցողությանը, որը պետք է որոշի հարկ վճարողի կամ հարկային գործակալի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30¹ հոդվածի՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջողող երեք տարին լրանալուց հետո:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի վերը հիշատակված սկզբունքների ոգուն համապատասխան նմանատիպ իրավական կարգավորման հասցեագրումներ են ամրագրված գործող տարբեր հատկանիշների մասին օրենքներով, որոնց համապատասխան հոդվածները և նրանցում կատարված փոփոխությունները արձանագրված են ստորև բերված աղյուսակում:

Պարույրի մատուցման նախառածության բարպահման ակտեր, հոդված	Պարույրի մատուցման է ստմանից հետովայթներ սրբագրություն	Հարգուման կառավարման լավագության մասին	Հպավածք գործադրության ուղղաթեցման
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	14.04.97	ՀՀ 10.97.28.12.98, 26.12.00	
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	14.04.97	ՀՀ 12.03	
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	14.04.97	14.12.01 05.12.03, 16.12.05	
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	14.04.97	14.12.01, 11.12.02 25.12.03, 27.11.06	
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	14.04.97	ՀՀ 12.03	
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	14.04.97	ՀՀ 09.98, 14.12.01, 11.12.02, 25.12.03,	
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	26.12.00	ՀՀ 12.03 26.12.00, 25.12.03	ՀՀ 11.04
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	14.12.01	14.12.01	
Հարկերի մասին» ՀՀ օրենք, Խորված չ:	24.12.04, 13.11.07		
Համարակառնության մասին» ՀՀ օրենք, Խորված 69	14.12.01	ՀՀ 06.07.98, 14.12.01, 25.12. 03	
Համարակառնության մասին» ՀՀ օրենք Խորված 14 մաս	26.12.00	ՀՀ 12.00, 25.12.03	ՀՀ 07.07.06
Համարակառնության մասին» ՀՀ օրենք Խորված 5 մաս	14.12.01		
Հարկերի մասին մասին» ՀՀ օրենք 10 Խորված 2 մաս		ՀՀ 07.00	
Հարկերի մասին մասին» ՀՀ օրենք 10 Խորված 3 մաս		ՀՀ 07.00	
Հիմացլած արթիքի հարկի մասին» ՀՀ օրենք 29 Խորված	14.05.97	ՀՀ 12.00	
Հիմացլած արթիքի հարկի մասին» ՀՀ օրենք 42 Խորված	14.05.97		
Հիմացլած արթիքի հարկի մասին» ՀՀ օրենք 43 Խորված	14.05.97	ՀՀ 12.00, 14.12.01 25.12.03	
Հիմացլած արթիքի հարկի մասին» ՀՀ օրենք 44 Խորված	14.05.97		ՀՀ 12.97
Հիմացլած արթիքի հարկի մասին» ՀՀ օրենք 43՝ Խորված	26.12.00	ՀՀ 12.01, 11.12.02	
Հիմացլած արթիքի հարկի մասին» ՀՀ օրենք 44՝ Խորված	14.12.01	ՀՀ 12.02 16.12.05	
Հարգեցված հարկի մասին» ՀՀ օրենք 16 Խորված 3 մասին առ Խոր Խորված 4 մաս	05.06.00		
Հարգեցված հարկի մասին» ՀՀ օրենք 16 Խորված 3 մասին առ Խոր Խորված 4 մաս	05.06.00		03.07.07.
Հարգեցված հարկի մասին» ՀՀ օրենք 16 Խորված 4 մաս	05.06.00		
Հարգեցված հարկի մասին» ՀՀ օրենք 16 Խորված 4 մաս	11.12.02		
Հարգեցված հարկի մասին» ՀՀ օրենք 16 Խորված 4 մաս	11.12.02		
Համարակառնության մասին» ՀՀ օրենք 94 Խորված 4 մաս	14.12.01	ՀՀ 12.02, 25.12.06	
Համարակառնության մասին» ՀՀ օրենք 94 Խորված 4 մաս	14.12.01	ՀՀ 12.03	

ՏՅԱ ՎՐԱ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՅ-ում հարկային ոլորտում իրավախախտումների հաճար, վարչական պատասխանատվության միջոցներ կիրառվում են ՀՅ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքին հաճապատասխան: Օրենսգիրքը սահմանում է «վարչական իրավախախտում» հասկացությունը, Վարչական իրավախախտման գործերի վարությունը, Վարչական պատժի ձևերն ու տեսակները:

Վարչական օրենսդրությամբ (ԿԻՎ օրենսգրքի 9-րդ հոդվ.) հրավախախտում (զանցանք) է հաճարվում պետական կամ հասարակական կարգի, սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի ուն ոտնճգվող հակահրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի հաճար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Իրավախախտումների հաճար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությամբ համապատասխան:

Վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը հակաիրավական գործողություն կամ անգործություն կատարելու ժամանակ գտնվել է աննեխունակ վիճակում, այսինքն՝ քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության վիճակում և այդ վիճակի հետևանքով չեր կարող իրեն հաշիվ տալ գործողությունների համար կամ դեսպանական այլ գործողությունները:

Վարչական պատասխանատվությունը որպես իրավական պատասխանատվության տեսակ բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

1. այն պետական հարկադրանքի նիջոց է,
 2. գործում է իրավախախտման և մեղքի առկայության դեպքում,
 3. կիրառման հիմք է հանդիսանում օրենքով արգելված գործությունը կամ անգործությունը,
 4. որպես կանոն, կիրառվում է անկախ իրավախախտման առաջրած հետևանքներից,

¹⁴ Տես ՀՀ վարչական իրավախախումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ հոդվածը:

5. Կիրառվում է իրավասու մարմինների կողմից՝ օրենքով սահմանված որոշակի պատժամիջոցների միջոցով:

Վարչական և քրեական պատասխանատվությունը էապես տարբերվում է հարկային պատասխանատվությունից: Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ վարչական կամ քրեական պատասխանատվության կարող է ներարկվել միայն ֆիզիկական անձը՝ իր կողմից և իր մեղքով կատարված խախտման համար: ՀՀ օրենսդրության համապատասխան՝ այսօր կազմակերպությունները նույնպես կարող են հարկային իրավախախտումների համար ենթարկվել վարչական պատասխանատվության: Չնայած՝ ներկայումն ըստ միջազգային կազմակերպությունների կողմից (OECD, GRECO) ՀՀ-ին տրված խորհուրդների, պետք է պատասխանատվություն սահմանել իրավաբանական անձանց նկատմամբ՝¹ կոռուպցիոն իրավախախտումների և փողերի լվացման համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը չի ամրագրում վարչական պատասխանատվության սահմանումը, սակայն, ենթերի դրան բնորոշ առանձնահատկություններից, կարելի է սահմանել, որ վարչական պատասխանատվությունը օրենքով սահմանված պետական հարկադրության ծև է, որը կիրառվում է վարչական իրավախախտումն դեպքում իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ:

Վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է՝ նպատակ ունենալով վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել օրենքի պահանջները կատարելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև նպատակ է հետապնդում նախազգուշացնել և կանխարգելել նոր իրավախախտումների կատարումը:

Վարչական տույժերի համակարգը ամրագրված է օրենքով: Վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող են կիրառվել հետևյալ վարչական տույժերը՝

1/ նախազգուշացում,

2/ տուգանք,

3/ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմանը վերցնում,

4/ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում,

5/ քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային

միջոցներ վարելու իրավունքից, որսորդության իրավունքից) գրկում:

Նշված վարչական տույժերի տեսակներից ՀՀ հարկային օրենսդրության խախտում դեպքերում գործնականում կիրառվում է միայն տուգանքը:

Մեղքը վարչական իրավախախտումներում կարող է դրսերպել դիտավորությանը կամ անգուշությամբ: Վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է գործողության կամ անգործության հակարգավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել է դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը: Անգուշաբար է համարվում այն իրավախախտումը, որը կատարած անձը կանխատեսել է իր գործողությունների կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևանտորեն հույս է ունեցել կանխատելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք:

Վարչական ներգործության միջոցներ կիրառելու իրավասությանը օժտված են հարկային տեսչության մարմինները, որոնք համաձայն ՎիԿ օրենսգրքի 244² հոդվածի՝ քննում են օրենսգրքի 48.1, 158, 165, 169, 169.5, 169.7, 169.9, 169.10, 169.11, 169.12 և 169.13, 169.14, 169.15, 163.17 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, ինչպես նաև օրենսգրքի 169.1, 170.2, 170.3, 170.4, 170.6, 170.7, 170.8, 170.9, 170.12 և 182.1 հոդվածներով և 198.2 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ հարկային իրավախախտումների մասով:

Յարկային տեսչության մարմինների անումից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն վերադաս հարկային մարմնի վարչությունների պետերը:

Յարկային իրավախախտումների վերաբերյալ նյութերի նախապատրաստման գործընթացին աջակցելու նպատակով ուսումնական ծերնարկում ի մի են թերված «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված պատասխանատվության տեսակները: Այսպես, «Վարչական իրավախախտումների վե-

րաբերյալ օրենսգրքի 169-րդ հոդվածում սահմանված է.

Հոդված 169. Ապօրինի ծեռնարկատիրությամբ գրաղվելը¹⁵

Ապօրինի ծեռնարկատիրությամբ գրաղվելը, այսինքն՝ առանց պետական գրանցման ծեռնարկատիրական գործունեությամբ գրաղվելը կամ առանց լիցենզիայի պետական լիցենզավորման ենթական տնտեսական գործունեությամբ ապօրինի գրաղվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնինգապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

Ապօրինի շահումով խաղեր կամ խաղատնային գործունեություն կազմակերպելը, այսինքն՝ առանց համապատասխան լիցենզիայի շահումով՝ խաղերով կամ խաղատնային գործունեությամբ գրաղվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդպիսի գործունեությամբ գրաղվելու լիցենզիա ստանալու համար օրենքով սահմանված պետական տուրքի հնգապատիկի չափով:

Առանց համապատասխան լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացնում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Նույն խախտումը, որը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կատարվել է կրկին անգամ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուինայուրապատիկի չափով:

Հոդված 169-1. Հաշվապահական հաշվառումը (գրանցումը) խախտումով վարելը, եթե դա կարող է առաջացնել (առաջացրել է) հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման նվազեցում, կամ

հայտարարագիրը /բացառությամբ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի/,¹ հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը

Հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ծեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի

¹⁵ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում ասվում է, որ՝ «Չեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (նկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը։ Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ծեռվ կատարվող հատուցման դիմաց։»

/բացառությամբ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի/ կամ հաշվարկի կամ հաշվետվության /այդ թվում՝ հաշվապահական/ կամ հարկման, կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման հիմք համբխացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման նվազեցում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 15-ապատիկից մինչև 25-ապատիկի չափով։

Հայտարարագիրը /բացառությամբ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի/ կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ՝ ֆինանսական հաշվետվությունների, հարկային տեսչության կամ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տարածքային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 10-ապատիկից մինչև 20-ապատիկի չափով։

Հոդված 169-9. Հաշվապահական հաշվառումը չվարելը

Հաշվապահական հաշվառում չվարելը (տնտեսական գործառույթների համընդիանուր և անընդիատ փաստաթղթային հաշվառման միջոցով կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ չունենալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով։

Նույն խախտման կատարուն այն անձի կողմից, որը նշված խախտման համար վարչական տույժի է ենթարկվել մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 250-ապատիկի չափով։

Հոդված 169-11. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ տեղեկությունները չպահպանելը

Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային (էլեկտրոնային) կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատ-

յանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ժրագրերն օրենսդրությանը սահմանված ժամկետներուն չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով:

Հոդված 169-12. Պետական մարմիններ ֆինանսական հաշվետվությունները չներկայացնելը կամ դրանք չհրապարակելը

Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներուն ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով և ժամկետներուն չհրապարակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով:

Տուգանք նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով չհրապարակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով:

Հոդված 169-13. Հրապարակող ֆինանսական հաշվետվությունները չորակավորված հաշվապահի կողմից ստորագրելը կամ անստորագիր ներկայացնելը

Հրապարակող ֆինանսական հաշվետվություններն ստորագրելը հաշվապահի կողմից, որը որակավորված չէ հաշվապահական հաշվառման կարգավորող պետական մարմնի սահմանված կարգով, կամ անստորագիր ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով:

Նույն խախտման կատարումն այն անձի կողմից, որը նշված խախտման համար վարչական տույժի է ենթարկվել անմիջապես նախորդող ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելիս՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 250-ապատիկի չափով:

Հոդված 170-3. Հարկերը ժամանակին չվճարելը

Հարկերը սահմանված ժամկետում չվճարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 10-ապատիկից մինչև 20-ապատիկը:

Հոդված 170-4. Հարկային տեսչության մարմիններում սահմանված ժամկետում հաշվառման չկանգնելը

Հարկային տեսչության մարմիններում սահմանված ժամկետում հաշվառման չկանգնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 10-ապատիկից մինչև 20-ապատիկի չափով:

Հոդված 170-6. Հարկային տեսչության մարմիններ տեղեկություններ սահմանված ժամկետում չհաղորդելը կամ սխալ տեղեկություններ հաղորդելը

Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չընկեցն ծեռնարկության պաշտոնատար անձի կամ անհատ ծեռներեցի կողմից հարկ վճարողի հետ կատարված գործառնությունների, ինչպես նաև իրենց կողմից և իրենց հաշվին ֆիզիկական անձին վճարված եկամուտների և պահված հարկերի մասին տվյալները, հարկնան նպատակով օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված անհրաժեշտ այլ տվյալներ հարկային տեսչության մարմիններ սահմանված ժամկետում չհաղորդելը կամ սխալ տվյալներ հաղորդելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 10-ապատիկից մինչև 15-ապատիկի չափով:

Նույն արարքը, որը նպաստել է հարկ վճարողի կողմից հարկվող օբյեկտը (հարկը) թաքցնելուն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 15-ապատիկից մինչև 20-ապատիկի չափով:

Հոդված 170-7. ԱԴ-ներ օտարելը կամ ապօրինի ծեռք բերված ԱԴ-ներով ապրանքներ դրոշմավորելը

Սահմանված կարգով ծեռք բերված կամ օգտագործված ԱԴ-ներն օտարելը, եթե դրանց քանակը չի գերազանցում 50 հատը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր ԱԴի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով:

Նույն արարքը, եթե օտարված ԱԴ-ների քանակը կազմում է 50-1000 հատ՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր ԱԴի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 5-ապատիկի չափով:

Ապօրինի ծեռք բերված ԱԴ-ներով ապրանքներ դրոշմավորելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշ-

ված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազ. դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 300-ապատիկի չափով:

Հոդված 170-8. ԱԴ-ՆԵՐՈՎ ԴՐՈՂՄԱՎՈՐՄԱՆ ԵՆՔԱԿԱ ՀՐՈՂՄԱ-ՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԳԵՆԵԼՐ

ԱԴ-ՆԵՐՈՎ դրողմավորման ենքակա չրողմավորված ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազ. դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 300-ապատիկի չափով:

Հոդված 170-12. ՀՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԻՐԱԳՄԱՆ ԻՎԱՅՐ ԹՈՎԱՍՏՐԵԼԻ ԺԱՄԿԵՏԻՑ ԻԵՍՈՒ ՈՐՈՉԱԿԻ ԹՎԱԳ-ՐՈՒՄՈՎ ԴՐՈՂՄԱՆԻՉՆԵՐՈՎ ԴՐՈՂՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈ-ՄՔ

ՀՅ կառավարության կողմից սահմանված՝ որոշակի թվագրումով դրողմանիշներով դրողմավորված ապրանքների իրացման թույլատրելի ժամկետից իեսու այդպիսի ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 100,0 հազ. դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 300-ապատիկի չափով:

Նույն արարքը, որը կրկնվում է վարչական տուգանք նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով գերազանցում է 100,0 հազ. դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկից մինչև 500-ապատիկի չափով:

Հոդված 182-1. ՅԱՐԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱ-ՍՊԱՆՔԻՆ ԽՈՀԾՅՆԴՈՒՆԵԼՐ

Յարկային տեսչության մարմինների պաշտոնատար անձի՝ իր պարտականությունները կատարելու ընթացքում օրինական պահանջները չկատարելը կամ կապարակներված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չափահովելը կամ հար-

կային տեսչության մարմինների աշխատանքին այլ կերպ խոչընդոտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 100-ապատիկի չափով:

Հոդված 170-9. ԱԿԳԻՋԱՅԻՆ ԴՐՈՂՄԱՆԻՉՆԵՐՈՎ ԴՐՈՂՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԽԱԽՄՏԵԼՐ

Ակցիզային դրողմանիշների մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրողմավորման ենքակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրողմավորման համար տրամադրված Ակցիզային դրողմանիշներով դրողմավորված, ինչպես նաև որոշակի տարրողության համար տրամադրված դրողմանիշներով այլ տարրողություն ունեցող տարամերով (տուփերով) տարայավորված՝ դրողմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյու հազար դրամը՝ դրամ՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Ուշագրավ է այն հանգանանքը, որ նշված օրենսդրությամբ հարկային իրավախախտման հասկացությունը չի սահմանվում, այնուամենայնիվ վերը հիշատակված հողվածներով նախատեսված վարչական իրավախախտումները բխում են հարկ վճարողների՝ կոնկրետ հարկային օրենսդրությամբ նախատեսված պարտականություններից և իրենց բնույթով ընդդատյա են միայն հարկային մարմիններին:

Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և լուսական իրավախախտման դեպքում՝ այն բացահայտելու օրվանից երկու ամսվա ընթացքում (ՎԻՎ, հոդված 37), վարչական տույժ նշանակելու նաև որոշումը կատարման ենքակա չէ, եթե այն ի կատար չի ածվել կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում (ՎԻՎ, հոդված 302), վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենքակա է կարճման վարչական պատասխանատվություն սահմանող ակտի վերացման դեպքում (ՎԻՎ, հոդված 274):

ՎԻՎ-ի 21-րդ հոդվածի համաձայն, եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լի-

ազորված մարմինը կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել քանակոր դիմուությամբ:

Հարկային իրավախախտումների հաճար վարչական օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության գործնական ուսումնասիրությունները վկայում են, որ լայն կիրառում են ստացել հատկապես վարչական օրենսգրքի 169, 169¹, 169², 170³, 170⁴ հոդվածները: Այդ հոդվածների «ակտիվությանմբ» և ծառայողական նշանակությամբ են պայմանավորված դրանցում կատարված հաճախակի փոփոխությունները և վերանայումները, որոնք նշտապես ապահովել են այդ հոդվածների արդիականությունը:

Հարկային պատասխանատվության կիրառման գործնական ուսումնասիրությունները վկայում են, որ պատասխանատվության ինստիտուտի մաս են հանդիսացել նաև այնպիսի հոդվածները, որոնք դիսպոզիցիայի կամ սանկցիայի ոչ ճիշտ շարադրման, ինչպես նաև ոչ համարժեք հարկային վարչարարության հետևանքով ունեցել են անարդունավետ կիրարում:

Հարկային իրավախախումների նկատմամբ վարչական օրենսդրությանը սահմանված ներգործության միջոցների կիրառման արդյունավետության մասին է վկայում հարկային նարմինների կողմից պատրաստված 2008թ. 6 ամիսների ամփոփ տեղեկանքու:

10	169 ⁹	12	550.0	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.3	0.4
11	169 ¹⁰	-	-	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
12	169 ¹¹	18	720.0	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.2	0.5
13	169 ¹²	360	13,497.0	ეთ მარტინის ქვემოთ, თუ სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	3.0	8.8
14	169 ¹³	10	700.0	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.1	0.5
15	169 ¹⁴	-	-	ეთ ვარაუდობ მაგ კორპ სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
16	169 ¹⁵	-	-	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
17	169 ¹⁶	-	-	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
18	170 ¹	245	2,486.0	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	2.5	6.0
19	170 ²	240	2,180.0	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	2.5	4.4
20	170 ³	1	15.0	სიც, მარტინის მარტინის მარტ ალაზანის სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
21	170 ⁴	1	12.0	სიც, მარტინის მარტ ალაზანის სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.5
22	170 ⁵	4	700.0	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.5
23	170 ⁶	3	150.0	სამუშაოთა და სამუშაო გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.1
24	170 ⁷	1	100.0	კ. ი. მარტინის მარტ ალაზანის სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.1
25	182 ¹	3	50.0	სიც ი. მარტინის მარტ ალაზანის სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
26	188 ²	-	-	სიც მარტ ალაზანის სამუშაოთა 1. ალაზანის მარტ ალაზანის გარე სამუშაო სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
27	-	-	-	სიც მარტ ალაზანის სამუშაოთა გენერიკ 10 ტ. 25 ს სას. ფ.	0.0	0.0
<i>Суммарно</i>		9,665	153,166.3		100 ³	100

ՀՅ քրեական օրենսդրության խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ անրագրված քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և նարդկության անվտանգությունը, ինչպես նաև կամիսել հանցագրծությունները:

Այս խնդիրների հրականացման համար ՀՀ քրեական օրենսգիրը ամրագույն է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական

օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներ ու քրեական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար:

ՀՅ քրեական օրենսգրքի համաձայն՝ հանցագործություն է համարվում քրեական օրենսգրքով նախատեսված հասարակության համար վտանգավոր այն արարքը (գործողությունը կամ անգործությունը), որն ուղղված է քաղաքացիների անձի, ՀՅ Սահմանադրությանը ամրագրված նրանց իրավունքների ու ազատությունների, սեփականության բոլոր ձևերի և ամրող պետական ու իրավական կարգի դեմ: Հանցագործությունը չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում:

Հարկային ոլորտում քրեական պատասխանատվությունը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. որպես քրեական պատրասխանատվության սուբյեկտներ հանդիս են գալիս միայն ֆիզիկական անձիք,

2. քրեական պատասխանատվության ենթակա են միայն դատական կարգով,

3. քրեական պատասխանատվությունն իրականացվում է միայն քրեական նորմերով (ի տարբերություն հարկային պատասխանատվության),

4. Քրեական պատասխանատվության և պատժի ենթակա է միայն հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձը, այսինքն՝ նա, ով դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարել է քրեական օրենք նախատեսված՝ հանդության հանդարձավոր արարո:

Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղավոր ճանաչվել, ինչպես նաև քրեական պատժի ենթարկվել այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան։ Դամաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտակությունը կրում են քրեական հետապնդման նարմինները՝ դատախազը, քննիչը և հետաքրնության նարմինը։ Այսինքն, եթե հարկ վճարողը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցագործությունների մեջ, ապա հարկային նարմինը կամ մեղադրող կողմու

ηατωρωνικά μετατρέπονται σε πληρωμές από την οικονομία της Ελλάδας στην οικονομία της Κύπρου, με την παραγωγή να παραμένει στην Ελλάδα.

Յարկային իրավախախումների կապակցությամբ հարուցվածքները դրեական գործերով դատարանները կիրառում են ՀՀ դրեական օրենսգրքով սահմանված ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժամիջոցներ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ հարկային օրենսդրության խախտման դեպքերում մեծանասամբ կիրառվում է տուգանքը, ազատազրկումը, որոշակի պաշտոններ վարելու իրավունքից զրկումը, հանցագործության անմիջական օբյեկտ հանդիսացող առարկաների և հանցագործության արդյունքում (միջոցով) ստացված շահույթի (եկամուտի) բռնագրավումը:

Հարկային օրենսդրության խախտման համար ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվությունը սահմանող հոդվածները ամփոփված են ստորև: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 188. Ապօրինի ձեռնարկատիրությունը

1. Առանց պետական գրանցման կամ հատուկ բովյլտվության (լի-
ցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ծեռնար-
կատիրական գործունեություն իրականացնելը՝ գուգորդված անձանց
կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի վճառ պատ-
ճառելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապա-
տիկից 400-ապատիկի չափով, կամ կալանքով՝ 2-3 ամիս ժամկետով:

2. Նույն արարքը՝ զրւագորդված անձանց կամ կազմակերպություններին կամ աետությանը խոչոր վնաս պատճառելով՝

պատմվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 300-ապա-
տիկից 500-ապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրադեցնե-
լու կամ որոշակի գործունեությամբ գրադելու իրավունքից զրկելով՝

¹⁶ Նկատնեք, որ համապատասխան նորմ է ամբագրված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում, ըստ որի գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Այսինքն, հարկային իրավախախտման արդյունքում, անկախ քրեական գործ հարուցված լինելու հանգամանքից, եթե հարկային մարմինն է պահանջներ ներկայացնում հարկաստուին, ապա «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի հիման վրա վերջինիս վրա է դրված հարկ վճարողի կողմից բոլոր տրված խայտումների ապացուցման պարտականությունը:

առավելագույնը 3 տարի ժամկետով կամ ազատազրկմանմբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը՝

1) գործողութել է ամճանց կամ կազմակերպություններին կամ պետության առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելով,

2) կատարվել է կազմակերպած խմբի կողմից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկից 1000-ապատիկի չափով, կամ որոշակի պարունակությունունելու կամ որոշակի գործողությամբ գրադարձությունից գրեթե առավելագույնը 5 տարի ժամկետով և կամ առանց դրա, կամ ազատազրկման՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:

4. Սույն հոդվածում գգալի չափի վնաս համարվում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկից մինչև 1000-ապատիկի չափով գումարը, խոշոր չափի վնաս՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկից մինչև 2000-ապատիկի չափով գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկը գերազանցող գումարը:

Նշենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ով /190 հոդված/ ենթակայության հարցը չի լուծվել: Սակայն, հարկային նարմնի քննչական վարչությունը քննում է նման գործեր:

Հոդված 189. Կեղծ ծեռնարկատիրությունը

1. Կեղծ ծեռնարկատիրությունը՝ առանց ծեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելը, որի նպատակը վարկեր ստանալը, հարկերից խուսափելը, գերավճարներ առաջացնելը, նյութական այլ օգուտներ քաղելը կամ արգելված այնպիսի գործունեություն թաքցնելն է, որը խոշոր վնաս է պատճառել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 300-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ ազատազրկման՝ առավելագույնը 4 տարի ժամկետով:

2. Առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելը, ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելը և ներկայացնելը, որը խոշոր վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 400-ապա-

տիկից 500-ապատիկի չափով, կամ ազատազրկման՝ մինչև 3 տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որի հետևանքով առանձնապես խոշոր վնաս է պատճառվել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկից 1000-ապատիկի չափով, կամ ազատազրկման՝ 2-5 տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին մասում խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Սույն հոդվածի երկրորդ մասում խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Սույն հոդվածի երրորդ մասում առանձնապես խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

5. Սույն օրենսգրքի 189-րդ, 193-րդ, 194-րդ, 205-րդ և 206-րդ հոդվածներով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները:

Հոդված 205. Գանձկող հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելը

1. Հարկերը, տուրքերը կամ այլ վճարումները վճարելուց չարանտութեն խուսափելը օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրած տվյալներ մտցնելու միջոցով, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկման՝ մինչև երկու տարի ժամկետով, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադարձությունից գրեթե առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկման՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմանը, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից տասնհինգամբարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգամբարապատիկը գերազանցող գումարը:

Հոդված 206. Քաղաքացու կողմից հարկ վճարելուց խուսափելը

1. Քաղաքացու կողմից իր գույքի, եկամուտների մասին հայտարարագիր չարամտորեն ներկայացնելը, եթե հայտարարագիր տալը պարտադիր է, ինչպես նաև հայտարարագիր մեջ եկամուտների և ծախսերի վերաբերյալ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելը, որը հանգեցրել է խոշոր չափերի հարկի չվճարման՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 500-ապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով։

2. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 208. ԱԴ-ՆԵՐ ԿԵՆՑԵԼԸ ԿԱՄ ԻՐԱԳՆԵԼԸ

1. ԱԴ-ՆԵՐ կենցելը կամ կեղծ ԱԴ-ՆԵՐ իրացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 300-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ ազատազրկմանը՝ 1-3 տարի ժամկետով։

2. Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկից 1000-ապատիկի չափով, կամ ազատազրկմանը՝ 2-5 տարի ժամկետով։

3. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում 500 հատից ավելի ԱԴ-ՆԵՐ կենցելը կամ իրացնելը։

Հոդված 209. ԱԴ-ՆԵՐ ՕՏԱՐԵԼԸ ԿԱՄ ԱՊՈՐԻՆԻ ԾԵՆԸ ԲԵՐՎԱԾ ԱԴ-ՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԴՐՈՂՄԱՎՈՐԵԼԸ

1. Սահմանված կարգով ծեռ բերված կամ օգտագործված ԱԴ-ՆԵՐ օտարելը, եթե դրանց քանակը 500-ից նինջև 1000 հատ է՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 600-ապատիկից 800-ապատիկի չափով։

2. Նույն արարքը, եթե օտարված ԱԴ-ՆԵՐ իրացնելը 1000 հատից ավելի է՝

ավելի է՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկից 1000-ապատիկի չափով։

3. Ապօրինի ծեռ բերված ԱԴ-ՆԵՐ ապրանքներ դրոշմավորելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (նշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է 200 հազ. դրամից 500 հազ. դրամ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 600-ապատիկից նինջև 800-ապատիկի չափով։

4. Նույն արարքը, եթե ապօրինի ծեռ բերված ԱԴ-ՆԵՐ դրոշմավորված ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (նշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է 500 հազար դրամ և ավելի՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկից 1000-ապատիկի չափով։

Հոդված 210. ԱԴ-ՆԵՐՈՎ ԴՐՈՂՄԱՎՈՐՄԱՆ ԵԲՐԱԿԱ ՀՐՈՂՄԱՎՈՐՎԱԾ ԿԱՄ ՀՎԵՐԱԴՐՈՂՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԳՆԵԼԸ

1. ԱԴ-ՆԵՐ դրողմավորման ենթակա չրողմավորված կամ չվերաբորշմավորված ապրանքների իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (նշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է 200 հազ. դրամից 500 հազար դրամ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 600-ապատիկից 800-ապատիկի չափով։

2. Նույն արարքը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (նշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է 500 հազ. դրամ և ավելի՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկից 1000-ապատիկի չափով։

Քրեական ներգործության միջոցները կիրառվում են այն քաղաքացիների նկատմամբ, որոնք հանցագործության կատարման պահին եղել են չափահաս և մեղսունակ¹⁷, այսինքն լրացած է եղել նրանց

¹⁷ Քրեական ներգործության միջոցները կիրառվում են այն քաղաքացիներն ու քաջայություն ունեցող հարկային օրենսդրությունից, հատկապես՝ տարիքը և սուրբնեկությունը կողմից լրացանակության և անմեղսունակության չափանիշը։

տասնվեց տարին և առողջական վիճակը թույլ է տվել հաշիվ տալ իրենց գործողություններին: Պատճի ենթակա չէ այն ամձը, որը հանցագործությունը կատարել է մեղադաշտության վիճակում, սակայն մինչև դատարանի կողմից դատավճիռ կայացնելը հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, ինչը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները դեկավարելու հնարավորությունից:

Պետք է նկատել, որ նույն արարքի համար միաժամանակ և վարչական, և քրեական պատասխանավորության ձևեր սահմանված լինելու դեպքում կիրառվում են միայն քրեական պատասխանատվության նորմերը (ՎԻԿ, հոդված 9):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինները հանդիսանում են հետաքրննության մարմիններ՝ հարկային իրավախախտումների գործերով: Պետք է նկատել, որ քրեական օրենսդրությունը չի սահմանում հարկային հանցագործության հասկացությունը, սակայն հիշատակված հոդվածում օգտագործված է «հարկային հանցագործություն» տերմինը: Որքան էլ տարօրինակ է, միակ իրավական ակտը, որը պարունակվում է հարկային հանցագործությունների սահմանումը, դա ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի N 166-Ն որոշումն է, որով հաստատված հրահանգի 3-րդ կետի համաձայն՝ հարկային հանցագործություններ են համարվում տնտեսական բնույթի հանցագործությունները, որոնք որակվում են ՀՀ քրեական օրենսգրքի վերը հիշատակված հոդվածներով: ՀՊԾ-ն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածում նախատեսված գործողություններն իրականացնում է որպես հետաքրնության մարմին: Օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնում է միայն նշված հոդվածների մասով:

Ինչպես վկայում են հարկային իրավախախտումների կապակցությամբ հարուցված քրեական գործերը և վերջիններիս դատաքննության արդյունքները, հիշատակված իրավախախտումներով դատավճիռներ են արձակվել ՀՀ քր. օր.-ի տարբեր հոդվածներով, որոնց մասին են վկայում հանրապետությունում հարկային մարմնի քննչական վարչության կողմից 2008թ. տասը ամիսների ընթացքում դատարան ուղարկած 57 քր. գործ:

Այսպես, հարուցված քրեական գործերի վերլուծությունից պարզ երևում է, որ՝

1. 188 հոդ. 1 մաս	6 գործ	15-ապօրինի՝ ծ.-26%
2. 188 հոդ. 2 մաս	5 գործ	
3. 188 հոդ. 3 մաս	4 գործ	
4. 188 ¹ հոդ. 4 մաս	1 գործ	
5. 189 հոդ. 1 մաս		4-կեղծ՝ ծ.-7%
6. 189 հոդ. 2 մաս	1 գործ	
7. 189 հոդ. 3 մաս և		
8. 205 հոդ. 1 մաս	15գործ	
9. 205 հոդ. 1 մաս		
10. 205 հոդ. 2 մաս	17 գործ	
11. 38-205 հոդ. 2 մաս	1 գործ	
12. 207 հոդ. 1 մաս		35-իարկ. վճ. խ.-61%
13. 207 հոդ. 1 մաս	1 գործ	
14. 325 հոդ. 3 մաս	1 գործ	

2008թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՊԾ քննչական վարչության վարույթում ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասը կազմել է 1,9 մլրդ. դրամ, որից 370 մլն դրամ վերականգնվել է նախաքննության ընթացքում:

§5. ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐՎԱՎԱԼԽՏՈՒՄԵՐԻ ՎՆՈՒՂՂՎԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՑՎՈՒՅՑՈՒՆ

Հարկային իրավունքը՝ որպես ձևավորվող իրավունքի ենթայուղ, որի կարգավորման առարկան, ինչպես նաև կարգավորման մեթոդը գործող ֆինանսական իրավունքից կատարված փոխառություններ են, դեռևս հարկային իրավախախտումների և պատասխանատվության իրավական հնատիտուտների մշակման ոլորտներում գիտականորեն հիմնավորված ելակետային դրույթներից և սկզբունքներից գույք է:

Հանրապետության հարկային օրենսդրությունը օր-օրի, արագացված քայլերով, ի շնորհիվ արտասահմանյան երկրների հարկա-

յին օրենսդրություններից կատարված փոխառությունների, որոնց նախագծերը առանց ժամանակ կողմնելու Ազգային ժողովում սահմանված են որպես հարկման այս կամ այն օբյեկտը կարգավորող օրենք, կարծես ամբողջանում է: Սակայն նման հախուրն մոտեցումը խորը հակասություն և խզում է ստեղծում նրա՝ որպես իրավունքի ճյուղի և գիտության ձևավորման փոխհարաբերություններում:

Հարկային իրավունքը հանրապետությունում՝ որպես իրավունքի ճյուղ և գիտություն, դեռևս սաղմնավորման գործընթացում է, որի մի շարք իրավական ինստիտուտները, այդ թվում հարկային պատասխանատվության և վարույթին վերաբերող, չնայած օրենսդրության ոլորտում ամրագրված են և գործնական լայն կիրառում ունեն, այնուամենայնիվ, որպես հարկային իրավական ինստիտուտ իրավական կարգավորման իմաստով գիտական լուսարանումների չեն արժանացել, ինչը լուրջ դժվարություններ է առաջացնում օրենքով սահմանված հարկային օրենսդրության խախտումների համար իրավունքի տարեք ճյուղերի կողմից սահմանված պատասխանատվության տեսակները կիրառելիս:

Հարկային պարտականությունը, կարծում եմ, ունի ճյուղային առանձնահատկություն, որի առանցքը համապետական դրամական ֆոնդի սահմանված ժամկետներում համալրումն է, և որը ըստ երթյան ուղղված է հարկային ծառայության հիմնական գործառնության՝ դրամական միջոցների նպատակառուղիված գանձմանը և կենտրոնացմանը:

Հասարակական և պետական անվտանգության պատասխանատվությունը թելադրանքով է, որ հարկային պարտավորության սահմանման և կիրառման կարգը ամրագրված է իրավունքի մի շարք ճյուղերում:

Հարկային պարտականության կիրառման առանձնահատկությունը պայմանավորված է հարկային իրավախախտման կազմի համար ներհատուկ իրավախախտման անհատական-կոնկրետ օբյեկտի առանձնահատկություններով և ըստ խախտման հետևանքների այն եական վճարմանը, որ տնտեսավարող սուբյեկտների հակարավական գործողությունների կամ անգործության պատճառով հասցվում է անհատին, հասարակությանը և պետությանը:

Հարկային իրավախախտումների օբյեկտի բացառիկ կարևորությունը նկատի ունենալով, հարկային իրավախախտումների համար սահմանված պատասխանատվության տեսակների շարքում (հար-

կային, վարչական, քրեական) անհրաժեշտ է առանձնացնել անուղղակի կամ այլ պատասխանատվությունը, որը հարկային պարտավորությունները կատարելու պահին կարող է խախտվել հարկի մասին այս կամ այն օրենքի պահանջները չկատարելով:

Իրավապահ մարմինների հարկային պարտականության կիրառման գործընթացները հեշտացնելու և կազմակերպելու նպատակով որպես ուղեցույց գործող հարկային օրենսդրությունից համակարգված բերենք այն իրավախախտումները, որոնք, իբրև իրավախախտման օբյեկտ, կարող են ուղղված լինել՝

1. տեղեկատվության տրամադրմանը,
2. հարկային հաշիվների սխալ կազմմանը,
3. ավել ցույց տրված վճարին,
4. մեկից ավելի ճշգրտումներին,
5. հսկիչ դրամարկային մեթենաների շահագործմանը
6. ակցիզային դրոշմանիշների գործածությանը և այլն:

Իրավաբանական գրականության մեջ չնայած հարկային անուղղակի կամ այլ պատասխանատվության նաև քայլ է ակնարկվում, այնուամենայնիվ իրավապահ մարմինների գործնական աշխատանքում, հատկապես հարկային իրավախախտումների բնույթը որակելիս, այն կարող է ունենալ եական նշանակություն:

Հարկային իրավախախտումները որակելու և պատասխանատվության կիրառման գործընթացում՝ նյութերի նախապատրաստման մեջ կողմնորոշելու իմաստով, իրավակիրառ մարմիններին գործնականում շատ կօգնեն հարկային օրենսդրությունից համակարգման ճանապարհով դուրս բերված այն իրավախախտումները, որոնք իրենց իմաստով ունեն այլ բնույթ և դուրս չեն պատասխանատվության շրջանակներից:

Այսպես, հարկային իրավախախտման համար պատասխանատվության կիրառման հիմք կարող են հանդիսանալ՝ տեղեկատվությունների տրամադրման սահմանված կարգի խախտումները, որոնք կարող են ամրագրված լինել կոնկրետ հարկի մասին որևէ օրենքում: Օրինակ, եկամտահարկի մասին օրենքում 2003թ. դեկտեմբերի 25-ին կատարված փոփոխություններում և լրացումներում արձանագրված է, որ նույն ամսում մեկից ավելի հարկային գործակալներից ստացվող եկամտումներից անձնական նվազեցման գումարը ֆիզիկական անձի պահանջներով համապելու դեպքում հարկատուից գանձվում է հարկվող եկամուտը պակասացնելու հետևանքով բյուջե

չնուծված (պակաս մուծված) հարկի գումարը և տուգանք՝ այդ գումարի 20%-ի չափով, ինչպես նաև տույժ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված չափերով («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, 30.12.1997թ., հոդված 38, կետ 4):

Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմիններին ՀՀ հարկային տեսչության սահմանված ծևով գրավոր տեղեկություններ ներկայացնել անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամուտի գումարների, բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Այդ պահանջները խախտելու համար կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը վճարում են տուգանք՝ հարկային մարմիններ չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 25000 դրամի (մինչև 31.12.2003թ.՝ 5000 դրամ) չափով («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, 30.12.1997թ., հոդված 37, կետ 3 և հոդված 38, կետ 4՝ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (29.12.2000թ.) և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (25.12.2003թ.)): Նշված տուգանքը կիրառվում է միայն 2001թ. հունվարի 1-ից հետո փաստացի վճարված եկամուտների վերաբերյալ չներկայացված տեղեկությունների գծով (ՀՀ ՊԵՆ 16.04.2001թ. N 02/456 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկան և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգ, կետեր 29 և 58):¹⁸

2002թ. դեկտեմբերից հարկային այլ պատասխանատվություն է սահմանված ԱԱՀ մասին օրենքում կատարված փոփոխություններով, որտեղ ասված է, որ օրենքին համապատասխան հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք չեն ներկայացված տեղեկություններում կամ որոնց վերաբերյալ տեղեկություններ

¹⁸ Տես «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները և լրացումները, 25.12.2003թ.

չեն ներկայացվել, ենթակա չեն հաշվանցման այդ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն կարող են հաշվանցվել այդ տեղեկությունները ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանում, եթե այդ տեղեկությունները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներին¹⁹:

Հարկային անուղղակի պատասխանատվություն է սահմանված նաև հաստատագրված վճարի հրավական կարգավորումները սահմանող նորմատիվ ակտերով:

Այսպես, կազմակերպչի կողմից առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու դեպքում կազմակերպիչը վճարում է տուգանք՝ 500 հազ. դրամի չափով²⁰:

Կամ՝ ավտոտրանսպորտային միջոցների գագալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող վճարողները հարկային տեսչության մարմիններ են ներկայացնում ՀՀ կառավարության սահմանած տեղեկություններ՝ ամսվա ընթացքում իրենց կողմից իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ: Վճարողի կողմից օրենքով նախատեսված՝ ամսվա ընթացքում իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ ներկայացվող տեղեկություններում իրացման ծավալները թերհայտարարագրելու դեպքում վճարողը վճարում է տուգանք՝ 500 հազ. դրամի չափով²¹:

Հարկային իրավախախտումների օբյեկտի կարևորությունը նկատի ունենալով օրենսդիրը անուղղակի պատասխանատվություն է սահմանում հարկային հաշիվների սխալ կազմման դեպքում:

Այսպես, 2002թ. դեկտեմբեր ամսից սահմանված է առօչինչ և ան-

¹⁹ Տես «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, 25.12.2003թ.:

²⁰ Տես «Հաստատագրված վճարմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, 25.12.2003թ.:

²¹ Տես «Հաստատագրված վճարմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, 25.12.2003թ.:

վավեր ճանաչվող գործարքների, ԱԱՀ-ից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող գործարքների, հաստատագրված վճարով հարկվող կամ պարզեցված հարկվող գործունեությանը վերաբերվող գործարքների գծով դուրս գրված հարկային հաշիվներում, առանց ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դուրս գրված հարկային հաշիվներում, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի հրապարակված ցանկերում ընդգրկված անձանց կողմից դուրս գրված՝ հարկերի հաշվարկման կամ հաշվանցումների համար հիմք չհանդիսացող հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման: Այդպիսի հարկային հաշիվներում առանձնացված՝ ԱԱՀ-ի հաշվանցված գումարները ենթակա են վերածնակերպման: Ընդ որում, հաստատագրված վճարով հարկվող կամ պարզեցված հարկով գործունեությանը վերաբերող հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերածնակերպման (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից պակասեցման) այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է դրանց հաշվանցման անթույլատրելիությունը: Առանց ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դուրս գրված, ինչպես նաև ԱԱՀ-ից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող, օրենսդրությամբ սահմանված կարգով առողջինչ և անվավեր ճանաչվող գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերածնակերպման այն հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, որում իրականացվել են այդ գործարքները (կատարվել է հաշվանցում): Հաշվանցված ԱԱՀ-ի գումարների սահմանված կարգով չենակերպելը (չպակասացնելը) դիտվում է որպես օրենքով նախատեսված կարգի խախտունով ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում)²²:

Ավել ցույց տրված վնասը նույնպես հիմք է հանդիսանում հարկային մարմինների կողմից անուղղակի պատասխանատվության կիրառման համար: Այսպիսի պատասխանատվություն է սահմանված

²² Տե՛ս «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, 26.12.2002թ.:

հատկապես շահութահարկի մասին գործող օրենքում: Օրինակ, հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տրված վնասի 20%-ի չափով: Նշված տուգանքը չի կիրառվում այն հարկատունների նկատմամբ, որոնք մինչև հարկային մարմինների ստուգումներն ինքնուրույն հայտնաբերել են իրենց կողմից նախորդ տարինների վնասի ավել հաշվարկում, հաշվապահական հաշվառման մեջ կատարել են համապատասխան գրանցումներ և այդ նասին գրավոր տեղյակ են պահել իրենց հաշվառման վայրի հարկային մարմին («Հահութահարկի մասին» ՀՀ օրենք, 27.11.1997թ., հոդված 69, «Հահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք՝ 27.12.2001թ. խմբագրությամբ): Տուգանքը կիրառվում է 2002թ. հունվարի 1-ից հետո՝ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկով ավելի ցույց տրված վնասի նկատմամբ («Հահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 27.12.2001թ.// ՀՀ ՀՏ 17.07.1998թ. N 01/36 հրամով հաստատված «Ոեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգ, կետ 10.4՝ ՀՀ ՊԵՆ 18.02.2002թ. «Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998թ. հովիսի 17-ի N 01/36 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 02/244 հրաման):

Ոչ ռեզիդենտների նկատմամբ կիրառվում են «Հահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանված՝ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում (ոչ ռեզիդենտի տարեկան նկամուտների մասին հայտարարագրում) օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում՝ ավելի ցույց տրված վնասի 20%-ի չափով տուգանքի կիրառման դրույթը (ՀՀ ՀՏ 04.03.1999թ. N 01/13 հրամանով հաստատված «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգ, կետ 12.3, ՀՀ ՊԵՆ 14.03.2002թ. «Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1999թ. մարտի 4-ի N 01/13 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 02/354 հրաման): 2004թ. հունվարի 1-ից այս տուգանքը ոչ ռեզիդենտների նկատմամբ չի կիրառվում («Հահութահարկի մասին»

Յայաստանի Յանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (25.12.2003թ.):

Կամ, գործող հարկային օրենսդրությամբ նմանատիպ պատասխանատվություն է սահմանվում Եկամտահարկի գծով հաշվարկված վճառ ավելի ցույց տալու դեպքում: Օրենքում ասված է, որ հարկային մարմին ներկայացված տարեկան Եկամուտների մասին հայտարարագրում օրենքով սահմանված կարգով հաշվարկված վճառ ավելի ցույց տալու դեպքում անհատ ծեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տրված վճառի 20%-ի չափով («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, 30.12.1997թ., հոդված 38, կետ 5 «Եկամտահարկի մասին» Դայաստանի Դանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, (27.12.2001թ.): Տուգանքը կիրառվում է 01.01.2002թ.-ից հետո՝ հարկային մարմին ներկայացված տարեկան Եկամուտների մասին հայտարարագրով ավելի ցույց տրված վճառի նկատմամբ («Եկամտահարկի մասին» Դայաստանի Դանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 27.12.2001թ. // ՀՀ ՊԵՆ 16.04.2001թ. N 02/456 հրամանով հաստառված «Եկամտահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգ, կետ 62//ՀՀ ՊԵՆ 30.01.2002թ. «Դայաստանի Դանրապետության պետական Եկամուտների նախարարության 2001թ. ապրիլի 16-ի N 02/456 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 02/141 հրաման):

Անուղղակի հարկային պատասխանատվության կիրառման հիմք կարող են հանդիսանալ հաշվարկի մեկից ավելի ճշգրտումը, հսկչութանարկային մեթենամեթի շահագործումը, ինչպես նաև ակցիզային դրոշմանիշների ապօրինի գործառույթները: Այսպես, օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ 200 հազ. դրամի չափով («Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, 27.07.2000թ., հոդված 10, կետ 3):

Օրենքը սահմանում է որոշ բացառություններ: Այսպես, հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն իրականացնող հարկ վճարողների նկատմամբ ՀԴՄ-ների շահագործնան կանոնների խախտմամբ դրամական հաշվարկների իրականացնան համար նախատեսված տուգանքները չեն կիրառվում («Հարկերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունները և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (27.12.2001թ.); ՀԴՄ-Ներ հարկային մարմններում գրանցվում են 3 օրվա ընթացքում, հարկ վճարողի ներկայացրած՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում; ՀԴՄ-Ների կիրառման պարտադիր լինելը և դրանց շահագործման կանոնները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ («Հարկերի մասն կանոնները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ («Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունները և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք՝ 25.12.2003թ.);

Գործող հարկային օրենսդրությունը պարտադրի և հասալուն նաև ակցիզային դրոշմանիշներով ապրանքների դրոշմելը:

Այսպես, ՀՀ օրենսդուրայմբ նախատեսված դիրքակիրածա կաթակա չդրոշմավորված, ինչպես նաև ապօրինի ձևոր բերված դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների և ապօրինի գործունեության ընթացքում ՀՀ կառավարության սահմանված ցանկում ընդգրկված ապրանքների հրացման դեպքում այդ ապրանքները ենթակա են ոչնչացման (դրանց այդ ապրանքային տեսքով շրջանառությունից դուրս բերման) հարկային մարդինների կողմից՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով («Դարկերի մասին» ՀՀ օրենք, 12.05.1997թ. հոդված 28² «Դարկերի մասին» Դայաստամի Դանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք՝ 27.12.2001թ.):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

Գրականություն

1. *Дигро Д.* Соч. т. VII, М., 1939
2. *Руссо Ж. Ж.* Об общественном договоре, М., 1938
3. *Спенсер,* Обоснование социологии, т. I, II, СПБ, 1908
4. *Гумилович Л.* Общее учение о государстве, СПБ, 1910
5. *Петражицкий Л.* Теория права и государства в связи с теорией нравственности, т. I, СПБ, 1907
6. *Маркс К., Энгельс Ф.* Соч. т. 21; *Ленин В. И.* Подл. соб. соч. т. 33 и т. 39
7. Проблемы общей теории права и государства (уч. для вузов), изд. "Норма", М., 2001
8. *Ч. Ա. Խորեցիան,* Պետության և իրավունքի տեսություն, Ե., «Գ-ոշ», 1997; Общая теория государства и права (академический курс), уч. для вузов, т. I, М., "Зерцало", 1998
9. *Федорова Е. В.* Императорский Рим в лицах, М., 1979
10. *Робертус К.* Исследования в области национальной экономики классической древности, Ярославль, 1987
11. *Годме П. М.* Финансовое право, М., 1978
12. *Է. Բ. Աղայան,* Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976
13. *Холодов Л. Г.* Основы государственной экономической политики, М., БЕК, 1997
14. *Князев В. Г.* Налоговые системы зарубежных стран, М., ЮНИТИ, 1997
15. *Kopits G.* Harmonization in Communitypolici issues and analysis Washington, D.C. international Monetary Fund, 1992.; Европейское Сообщество. Ваш сосед Люксембург: офис официальных публикаций Европейского Сообщество, 1992
16. *Жан Поль Корлели,* Продолжение налоговой реформы, доклад, Армения, 1995

17. Экономика и право: Экономический словарь Габлера. М., 1998
18. Tacis Dictionaries of taxation terms Luxemburg 1996: Official Publications of the European Communities
19. "Российская газета", 06.08. 1998, "Комментария к Налоговому кодексу РФ", М., 1999
20. *Емельянов А. С., Чершогор Н. Н.* Финансово-правовая ответственность, М., "Финансы и статистика", 2004
21. *Мосин Е. Ф.* Административное ответственность за правонарушения в сфере бизнеса, Санкт-Петербург, 1998
22. *Стариков Ю. Н.* Ответственность на нарушения налогового законодательства, Изд. "Бек" М., 1996
23. *Петрова Г. В.* Налоговое право (учебник для вузов). Изд. НОРМА-НИФРА, М., 1999
24. *Сигиневич А. В. и др.*, Налоги в механизме хозяйствования, М., Наука, 1992
25. *Чернин Д. Г.* Налоги, М., 1996
26. *Кучеров И. И.*, Налоговое право зарубежных стран, М., АО "Центр ЮриИнфор", 2003
27. Налоговое право России (учебник), 2-ое издание, Норма, М., 2005
28. *Ա. Չ. Խաչատրյան,* Հարկային իրավունք (դասագիրք իրավաբանական և տնտեսագիտական բուհերի համար), ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», Ե., 2003
29. *Գ. Դանիելյան,* Վարչական պատասխանատվություն (ուսումնական ձեռնարկ), «Լուսյ», Ե., 2002
30. *Սուրիասյան Գ. Ա., Սուրիասյան Ն. Գ.,* Ֆինանսական իրավունք /ուսումնական ձեռնարկ բուհերի համար/, «Իրավունք», Ե., 2007
31. *Նազելի Սուրիասյան,* Բանկային իրավունք /ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար/, «Իրավունք», Ե., 2008
- 32.. *Գառնիկ Սուրիասյան,* Սաքսային իրավունք /ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար/, «Իրավունք», Ե., 2008

Իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը /փոփոխություններով/, Պաշտոնական տեղեկագիր, «Տիգրան Մեծ», Ե., 2006
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրը, Ե., 2005
3. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, հարկեր, տուրքեր և վճարեր, ամփոփ ժողովածու, առաջին մաս, Ե., 2007
4. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը /ամփոփ ժողովածու, երկրորդ մաս/, Ե., 2007
5. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը
6. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը
7. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը
8. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքը
9. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը
10. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը
11. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը
12. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքը
13. Հայաստանի Հանրապետության նախագահի 20 օգոստոսի 2008թ. ԽՆ-226-Ն/ հրամանագիրը
14. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 4-ի թիվ 1005-Ն որոշումը

Արքուր ՕՍԻԿՅԱՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՅԹ

(ուսումնական ձեռնարկ)

Եջաղբումը՝ Թագուհի ԱՏԵՓԱՆՅԱՆԻ

Հանձնված է տպագրության 10.02.2009թ.:

Ծավալը՝ 10 տպագրական մամուլ:

Տպագրությունը՝ օֆսեթ:

Տպաքանակը՝ 500 օրինակ: